Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական հասանելիություն
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

167

2
U-55

2010

128

Հ. ԹԼԻԳԱՐ ՍԻՐՈՒՆԵԱՆ

ՓՈՔՐԻԿ ԱՌԱՋՆՈՐԴԸ

ՎԵՆԵՏԻԿ – Ս. ՂԱԶԱՐ

1938

ՓՈՔՐԻԿ ԱՌԱՋՆՈՐԴԸ

261
Ա-55

ՓՈՔՐԻԿ ԱՌԱՋՆՈՐԴԸ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԱՂՕԹՔՆԵՐ

ԵՒ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԱՐԱԴՐԵՑ ԵՒ ՀԱՒԱՔԵՑ

Հ. ԹԷՈԴՈՐ ՍԻՐՈՒՆԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ – Ս. ՂԱԶԱՐ

1938

ԱՀ

Ով որ չ՚աղօթեր չի՛ խնդրեր, և ով որ չի խնդրեր չ՚ընդունիր, և ով որ չ՚ընդունիր ի՞նչպէս կրնայ վայելել։ Այսոր համար փութանք աղօթել, խնդրել և փրկութեան շնորհքը վայելել։

Ս. ՆԵՐՍ. ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

1607-88
80285-ակ

ՆԱԽԱԲԱՆ

Գրքոյկս՝ որ Փոքրիկ Աղօթարան անունը կը կրէ, վստահ եմ թէ՝ իր վրայ կրած մակդիրը պիտի արդարացնէ, իր ընթերցողներուն և մասնաւորապէս նորավարժներուն սորվեցնելով թէ ինչո՞ւ և ի՞նչ կերպով կատարելու է աղօթքը և հոգևոր պարտականութիւնները. փորձը զիս այնպէս համոզած է թէ՝ նորավարժ հոգի մը կամ փոքրիկ քրիստոնեայ մը, շատ անգամ զանց կ՚ընէ իր քրիստոնէական և բարեպաշտական պարտականութիւնները, ոչ թէ հոգևորին մէջ ցուրտ կամ գաղջ ըլլալուն, այլ անոր կերպը չի գիտնալուն համար. չի գիտեր թէ ի՞նչ պիտի ընէ կամ ի՞նչպէս պիտի ըսէ։ Եւ երբ այս տարտամ վի-

ճակը շարունակէ և տարիները առաջ երթան, անշուշտ տարիքին հետ պիտի աճին նաև կիրքերը, և տգէտ հաւատացեալը առանց առաջնորդի մնալով, պիտի գլորի մոլութեանց և ախտերու մէջ, և գաղջութեան հոմն ալ փըչելով՝ պիտի խամրեցնէ անոր ընծին բարի զգացմանց նորածիլ բողբոջները, որով՝ անբեր և ամայի անապատ մը պիտի դառնայ այն սիրտը, որ խնամուելով կրնար Քրիստոսի բուրաստան մ'ըլլալ։

Գիրքս երեք մասէ կը բաղկանայ։ Առաջին մասին մէջ պիտի գտնէ ընթերցողը աղօթքներու և ջերմեռանդութեանց շարք մը, որ թէև համառօտ է, բայց ջանացած եմ որ քրիստոնէի մը անհրաժեշտ պարտականութիւնները և կարևոր աղօթքները հոն գտնուին, որոնց իւրաքանչիւրին սկիզբը կամ վերջը դրուած է, թէ

ինչու, ե՞րբ և ինչ կերպով ընելու է զանոնք,

Երկրորդ մասին մէջ պիտի գտնէ համառօտ բովանդակութիւնը քրիստոնէի մը կարևոր եղող կրօնական գիտելիքներուն, միշտ յիշելու համար իր պարտքերը։ այս մասը շատ օգտակար պիտի ըլլայ խոստովանութեան լաւ պատրաստուելու համար։

Երրորդ մասին մէջ համառօտ պատմութիւններ դրած եմ, որպէսզի բարի հաւատացեալը, կիւրակէ և տօնական օրերուն մէջ, ախորժելի, հետաքրքրական և շինիչ օրինակներով՝ արդիւնաւոր կերպով անցընէ ժամանակը, և անոնց բարի օրինակներով տոգորուած, ջանայ սուրբի կեանք մը անցընել, երջանիկ մահ մը ունենալ, և երթալ երկինքը զԱստուած փառաւորել, որուն համար ստեղծուած ու քրիստոնեայ եղած ենք։

ԱՌԱՒՕՏԸ

Երբ անկողինէն կ'ելլենք, մեր աշխատութիւնները կամ օրական գործերն սկսելէն առաջ, մեծ և կարեւոր պարտականութիւն մը ունինք ընելիք, այսինքն է՝ յիշել զԱստուած՝ մեր ստեղծողն ու բարերարը. նախ՝ շնորհակալ ըլլալու համար, որ զմեզ գիշերային բոլոր փորձանքներէն և վտանգներէն պաշտպանեց, և երկրորդ՝ կրկին խնդրելու համար իր օգնութիւնը և պաշտպանութիւնը, բոլոր օրը Աստուծոյ շնորհաց մէջ անցընելու և մեր գործերուն ալ յաջողութիւն ունենալու.

Շատ հաւատացեալներ բարի սովորութիւն մ'ունին, զոր ամէն դասակարգի անձ ալ կրնայ դիւրաւ գործադրել, թէ՝ մեծ և թէ փոքր. այսինքն, երբ առաւօտը

իրենց աշխատութեան կամ գործին կ'երթան ու ստիպուած են եկեղեցւոյն առջեւէն կամ քովէն անցնիլ, զանց չընեն ներս մտնելու, համառօտ աղօթք մ'ընելու և Յիսուսին այցելութիւն մը տալու, որ շատ օգտակար և սիրուն ջերմեռանդութիւն մ'է. Բայց երբ անկարելի է այդ այցելութիւնը ընել հեռաւորութեան պատճառով որ կրնայ իրենց գործին արգելք ըլլալ, այն ատեն պէտք է իրենց տան մէջ, պաշտամունքի մը, սրբազան պատկերի կամ խորանիկի մ'առջեւ ամփոփուիլ պահ մը, և կատարել իրենց այս սրբազան և աստուածահաճոյ պարտականութիւնը.



ԱՂՕԹՔ

Առաւօտեան

Յանուն հօր և Որդւոյ և հոգւոյն Սրբոյ, ամէն։

Ամենասուրբ Երրորդութիւն, մի Աստուած և երեք Անձինք, կը հաւատամ բոլոր սրտովս թէ հոս ներկայ ես. ամենայն խոնարհութեամբ կ'երկրպագեմ քեզի և եռանդեամբ կը նուիրեմ սիրտս, միտքս և հոգիս, ի նշան հպատակութեան քու անհուն մեծութեանդ։

Շնորհակալութիւն և նուիրումն

Ամենայն խոնարհութեամբ և եռանդեամբ շնորհակալ եմ, Աստուած իմ այն բոլոր բարիքներուն համար՝ որ մինչև հիմակ

ինծի ըրիր։ Քու բարութեանդ արդիւնքն է՝ որ այս օրս ալ ինծի պարգեւեցիր. ուստի՝ ես ալ կ'ուզեմ ասկէ վերջը մի միայն քեզի ծառայել։ Քեզի կը նուիրեմ բոլոր իմ մտածութիւններս, խօսքերս, գործերս, վիշտերս և ուրախութիւններս։ Օրհնէ զանոնք, որպէս զի անոնց մէջ չի գտնուի բան մը՝ որ քու սիրովդ վառուած չըլլայ. օրհնէ զիս, որ ամէն բանի մէջ նպատակ ունենամ միայն քու փառքդ։

Առաջադրութիւն

Երկրպագելի՜ Յիսուս, կը փափաքիմ բոլոր սրտովս հետեւիլ ու նմանիլ քեզի՝ որչափ որ կարելի է. ըլլալ քեզի պէս հեզ, խոնարհ, պարկեշտ, եռանդուն, համբերող, եղբայրասէր և հա-

մակամ. մասնաւոր կերպով պիպի չանամ այսօր ոնէ պակասութեան մէջ չիյնալ, մանաւանդ անոր մէջ՝ որ ինծի ունակութիւն եղած է... Սրտանց կը փափաքիմ ինքզինքս բոլորովին ուղղել և քեզի նման ըլլալ, որ աստուածային կատարելութեանց օրինակն ես։

Խնդրուածք

Տէր իմ և Աստուած, դուն կը ճանչնաս իմ տկարութիւններս, և ես վստահ եմ թէ՝ առանց քու շնորհացդ օգնութեան չեմ կրնար ոնէ բարիք մը գործել. մէ՛ մերժեր զիս, օգնէ՛ կարօտութեանս միջոցին. տո՛ւր ինծի նաեւ բաւական ուժ, որ կարենամ զգուշանալ ամէն տեսակ մեղքերէ՝ որոնք կը վշտացնեն զքեզ՝ ան-

հուն բարիդ. տուր նաև կարողութիւն բարիք գործելու, ուժ և համբերութիւն՝ սիրով տանելու այն բոլոր վիշտերուն և նեղութիւններուն, որոնք ինծի կը խաւրես։

Տէրունական Աղօթք

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո։ Եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն։

Աղօթք առ Ս. Կոյսն

Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք, Տէր ընդ քեզ։ Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո, Յիսուս։ Սրբուհի Մարիամ, մայր Աստուծոյ, բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորացս՝ այժմ և ի ժամու մահուան մերոյ, ամէն։

Աղօթք առ Աստուածածին

Սրբուհի և կոյս Աստուածածին Մարիամ, մայրս և պաշտպանս, ինքզինքս քու առաջնորդութեանդ կը յանձնեմ, և բոլորովին վստահ՝ քու ողորմութեանդ գիրկը կը գիմեմ։ Իմ նեղութեանս վայրկեաններուն՝ պաշտպանս եղիր և վիշտերուս

մէջ մխիթարիչս, քու երկրպագելի Որդւոյդ առջեւ ալ՝ իմ փաստաբանս, մինչեւ որ առանց վտանգի կարենամ իմ վերջին նպատակիս հասնիլ։

Աղօթք առ պահապան հրեշտակն

Երկնքի մէջ փաստաբանս և երկրիս վրայ իմ պահապան հրեշտակս, միայնգամայն հաւատարիմ և գթալիր առաջնորդս, խնդրէ՛ ինծի համար, որ քու բարի ազդեցութեանցդ հնազանդ ըլլամ և չի խոտորիմ երբեք առաքինութեան ճամբէն, և միշտ հպատակ ըլլամ Աստուծոյ պատուիրաններուն։

Աղօթք առ պաշտպան սուրբն

Ո՛վ իմ պահապան և պաշտպան Սուրբս, Ս... պաշտպանէ

զիս թէ՛ մարմնաւոր և թէ՛ հոգեւոր փորձանքներէն. խնդրէ՛ ինծի համար ուժ և շնորհք, որպէս զի կարենամ ծառայել Աստուծոյ, ինչպէս որ դուն ծառայեցիր երկրիս վրայ, որ վերջն ալ երկինքը կարենամ քեզի և բոլոր սուրբերուն հետ փառաւորել զինքն յաւիտեան։

Ներգործութիւն Հաւատոյ

Աստուած իմ, հաստատապէս կը հաւատամ այն ամէն ճշմարտութեանց, որոնք քու Սուրբ Եկեղեցւոյդ յայտնած ես, որովհետև անոր վարդապետութիւնը քու խօսքերդ են, և գիտեմ թէ անկարելի է որ դու գերագոյն ճշմարտութիւն ըլլալով, կարենաս խաբել և խաբուիլ։

ՀԱՅԿԱԿԱՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ ... Մասնիկեան ... ՄՅՈՒՆԻԿՅԱՆԻ ՍՆՎԱՆ

Ներգործութիւն Յուսոյ

Ով Աստուած իմ, կը յուսամ թէ դու պիտի տաս ինծի այն բոլոր շնորհքները, որոնցմով պիտի կարենամ հասնիլ յաւիտենական երանութեան, մեր փրկչին Յիսուսի Քրիստոսի արդիւնքովը, որովհետև դու խոստացար, ով անսահման բարի, որ կ'ուզես ու կրնաս կատարել բոլոր խոստումներդ։

Ներգործութիւն Սիրոյ

Այո՛, Աստուած իմ, բոլոր սրտովս կը սիրեմ զքեզ, բոլոր հոգւովս, բոլոր մտքովս և բոլոր կարողութեամբս մինչեւ կենացս վերջը. կը խոստանամ նաև սիրել բոլոր իմ ընկերներս իմ

անձիս պէս՝ միմիայն քու սիրոյդ համար։

Ներգործութիւն Զղջման

Աստուած իմ, ամենաբարի ըլլալուդ և ամէն բանէ աւելի զքեզ սիրելուս համար, կը ցաւիմ ու կը զղջամ բոլոր սրտովս գործած բոլոր մեղացս վրայ, և կ'առաջադրեմ այլ եւս չի մեղանչել և բոլոր մեղաց առիթներէն փախչիլ քու սուրբ շնորհքովդ։

ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ

Տեառն Ղերսեսի Շնորհալւոյ

Աստուծոյ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա։
Բխումն ի Հօրէ.
Բխեա՛ ի հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս։
Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գըտող զիս արա։
Դուռն ողորմութեան
Դաւանողիս բաց,
Դասեցո՛ վերնոց։
Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա։
Զարթիր Տէր յօգնել,
Զարթո ըզթմբրեալս,
Զուարթնոց նըմանել։

Էդ Հայր անըսկիզբն,
Էակից Որդի,
Է միշտ սուրբ Հոգի
Ընկալ զիս գըթած
Ընկալ ողորմած,
Ընկալ մարդասէր։
Թագաւոր փառաց,
Թողութեանց տըւող,
Թող ինձ ըզյանցանս։
Ժողովող բարեաց,
Ժողովեա՛ և զիս
Ժողովս անդրանկաց։
Ի քէն Տէր հայցեմ
Ի մարդասիրէդ
Ինձ բըժշկութիւն։
Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս։
Խորհըրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա
Խորհուրդ լուսաւոր։
Ծընունդ Հօր ծոցոյ,

Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա՛ լոյս փառաց։
Կենարար փրկիչ,
Կեցո՛ ըզմեռեալս,
Կանգնեա՛ ըզգլորեալս։
Հաստեա հաւատով,
Հաստատեա յուսով,
Հիմնեցո սիրով։
Զայնիւս աղաչեմ,
Զեռօքս պաղատիմ,
Զիր բարեաց շնորհեա։
Ղամբարմամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո։
Ճառագայթ փառաց,
Ճանհապարհ ինձ ցոյց
Ճեմել ի յերկինս։
Միածինըդ Հօր,
Մոյծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ։
Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն,

Յիշեա զիս Քրիստոս։
Նորոգող հնութեանց,
Նորոգեա և զիս,
Նորոգ զարգարեա։
Շնորհատու բարեաց,
Շնորհեա զքաւութիւն,
Շնորհեա զթողութիւն։
Ուրախացո Տէր
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ։
Զար մըշակողին
Զար սերմանցն որ յիս՝
Զորացո զպըտուղ։
Պարգևիչ բարեաց,
Պարգևեա իմոց
Պարտեաց թողութիւն։
Զուր շնորհեա աչացս,
Զերմ հեղուլ արտասր,
Զընչել ըզյանցանս։
Ռետինդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո,
Ռահ ցոյց ինձ լուսոյ։

Սէր անուն Յիսուս,
Սիրով քո ճրմլեա
Սիրտ իմ քարեղէն։
Վասըն գըթութեան,
Վասն ողորմութեան
Վերըստին կեցո։
Տենչալի տեսլեամբ
Տուր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս։
Բաբուն երկնաւոր,
Բոտեա զաշակերտս
Բամից երկնայնոց։
Յող արեան քոյ Տէր
Յողեա ի հոգիս,
Յընծասցէ անձն իմ։
Խիւծեալըս մեղօք
Խիւծեալ աղաչեմ,
Խիւսեա յիս բարիս։
Փըրկիչ բոլորից,
Փութա զիս փրկել
Փորձութեանց մեղաց։
Քաւիչ յանցանաց,

Քաւեա զօրհնաբանս
Քեզ երգել ըզփառս։
Աստուածածնին բարեխօսու-
թեամբն
Յիշեա Տէր և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Որոշեալ մէջ երեք անգամ ըսելոյ, երբ եկեղեցւոյ զանգակը կը հնչէ

(*Առաւօտ, կէս օր և իրիկուն*)

Հրեշտակ Տեառն աւետեաց կուսին Մարիամու, և յղացաւ ի Հոգւոյն սրբոյ։ Ողջոյն քեզ Մարիամ. հայլն։

Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում։ Ողջոյն քեզ Մարիամ. հայլն։

Եւ բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ։

Ողջոյն քեզ Մարիամ հայլն։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

ԱՂՕԹՔ

Ճաշէն առաջ

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. Հայր մեր հայլն։

Օրհնէ՛ զմեզ, Տէր և օրհնէ՛ այս կերակուրը, որ կը շնորհես մեզի առատօրէն՝ վայելելու ի փառս Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. ամէն։

ԱՂՕԹՔ

Ճաշէն վերջը

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. Հայր մեր. հայլն։

Շնորհակալ ենք որ այս բարիքը ըրիր մեզի, Աստուած ամենակարող, որ միշտ կաս և կը թագաւորես յաւիտեանս յաւիտենից։

ԱՂՕԹՔ

Երեկոյեան

Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգ-
ւոյն Սրբոյ ամէն։

Աստուած իմ, կը պաշտեմ զքեզ ամենայն խոնարհութեամբ, մը-
տածելով քու ամենակարող մե-
ծութեանդ ներկայութիւնը. կը հաւատամ քեզի, որովհետև դու նոյն իսկ ճշմարտութիւնն ես, կը յուսամ քեզմէ, որովհետև անսահման կերպով բարի ես. կը սիրեմ զքեզ բոլոր սրտով, ո-
րովհետև գերազանց կերպով սի-
րելի ես. և քու սիրոյդ համար կը սիրեմ նաև ընկերներս իմ անձիս պէս։

Շնորհակալութիւն

Ինչպիսի՞ շնորհակալութիւն պէտք եմ մատուցանել քեզի, Աս-

տուած իմ, այն բարիքներուն փոխարէն, որ քեզմէ ընդունած եմ։ Դուն յաւիտենական կեանքը ինծի խոստացար, զիս ոչընչէ ստեղծեցիր, քու կեանքդ տալով՝ զիս ամենասուրբ արիւնովդ գնե-
ցիր, և դեռ ամէն օր կը վայե-
լեմ քու անսահման բարիքներդ։ Եղո՞ւկ ինծի. ինչ կերպով, Աս-
տուած իմ, կրնամ փոխարինել քու ըրած այնչափ բարիքնե-
րուդ։ Միացէք ինծի, ով երա-
նեալ հոգիներ, որպէս զի կա-
րենամ արժաւորապէս կերպով փառաբանել ողորմութեան Աս-
տուածը, որ չի դադրիր երբեք բարիք ընելէ ինծի, որ իր ստեղ-
ծուածոց մէջ ամենէն աւելի ա-
նարժան և ամենէն աւելի ապե-
րախտ եմ։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Խղճի քննութեան

Հաւատացեալ մը շատ օգտակար և աստուածահաճոյ գործ մը ըրած կ'ըլլայ, երբ երեկոյեան աղօթքի ժամանակ՝ համառօտ մտածական մը և խղճի քննութիւն մ'ընէ թէ ի՞նչ կերպով անցուցած է օրը, ի՞նչ բաներու մէջ պակսած է, կայլն։ Այս կերպով ճանչնալով իր թերութիւնները և տկարութիւնները, հետզհետէ ապագային մէջ կը ջանայ ինքզինքը ուղղել Աստուծոյ շնորհքով։

ԱՂՕԹՔ

Ո՛վ Ս. Հոգի, աղբիւր յաւիտենական լուսոյ, փարատէ՛ մըտքէս այն խաւարը՝ որ մեղքին չարութիւնը և տգեղութիւնը ինծմէ կը ծածկէ։ Լուսաւորէ զիս որ ճանչնալով սոսկամ մեղքերէն, և այնչափ ատեմ զանոնք, եթէ կարելի է, որչափ որ դու կ՚ատես, և ուրիշ բանէ այնչափ չի վախնամ՝ որչափ մեղքի մէջ իյնալէն։

Խղճի քննութեան նիւթերը

Քննել ու մտածել 1. Օրուան մէջ ունեցած հոգևոր պարտականութիւններդ...։ 2 Անձինքները՝ որոնց հետ կենակցած ես...։ 3. Գործերը և պաշտօնները՝ որոնց մով կը պարապիս...։ 4. Աստուծոյ անհաճոյ մտածութիւններ...։ 5. Չար բաղձանքներ...։ 6. Նախանձի, բարկութեան կամ ատելութեան զգացումներ. (Արդեօք) մտածութեամբ . . . խօսակցութեամբ... գործով...)։ 7. Վիճակիդ վերաբերեալ գործերուն կամ պարտքերուն մէջ ունեցած անհոգութիւններդ, զանցառութիւններդ, զեղծումներդ... 8. Բարեգործութեանց վերաբերեալ նիւթերու մէջ ըրած ծուլութիւններդ և անհոգութիւններդ...։

ԱՂՕԹՔ

Աստուած իմ, բոլորովին զըղջացած և վշտացած մեղքերուս և թերութեանցս վրայ, խոնարհութեամբ և կատարեալ ցաւով կու գամ քեզի այնքան բարի Աստուած մը արհամարհած ըլլալուս համար, որ անհուն սիրոյ արժանի է։ Աստուած իմ,

լսէ՛ պաղատանքներուս. ասկէ վերջը պիտի փախչիմ մեղքերէն և անոնց առիթներէն, բոլոր սըրտովս կ՚ատեմ չարութիւններս և ապերախտութիւններս, և խոնարհաբար թողութիւն խնդրելով կը խոստանամ հաստատապէս լսել և հետևիլ քու սուրբ ազդեցութիւններուդ, անկեղծ ապաշխարութեամբ և հաստատուն առաջադրութեամբ միանալով քեզի հետ, յաւիտեան չըբաժնուելու համար։

ԱՂՕԹՔ

Առ Աստուած, առ Յ. Կոյսն և. առ բոլոր Սուրբս

Օրհնէ՛ զիս, Աստուած իմ, և շնորհէ՛ խաղաղ և հանգիստ քունմը որպէս զի կրկին զօրացած՝

դեռ աւելի լաւ կերպով կարենամ քեզի ծառայել։ Ո՛վ Ս. Կոյս և մայր Աստուծոյ՝ միակ յոյսս և պաշտպանս, ո՛վ իմ բարի պահապան հրեշտակս, պաշտպան Սուրբս և երկնքի բոլոր փառաւորեալ Սուրբեր, բարեխօսեցէք ինծի համար՝ որ այս գիշերս առանց վտանգի և առանց մեղաց անցընեմ, ինչպէս բոլոր կենացս օրերը՝ մինչև մահուանս ժամը. ամէն։

ԱՂՕԹՔ

Ողջերուն և մեռածներուն համար

Աստուած իմ, քու հայրական օրհնութիւնդ սփռէ՛ ծնողացս, բարերարացս, բարեկամացս և թշնամեացս վրայ. պաշտպանէ՛

այն ամէնքը, որոնք թէ հոգեւորապէս և թէ նիւթապէս ինծի դաստիարակ և առաջնորդ եղած են. պաշտպանէ աղքատները, բանտարկեալները, վշտացեալները, ճանապարհորդները, հիւանդները և հոգեվարքները. շնորհք տուր հերետիկոսներուն և հերձուածողներուն՝ որ Ս. Եկեղեցւոյ ծոցը դառնան, կատարեալ զըղջում պարգևէ մեղաւորներուն և լուսաւորէ՝ անհաւատները։

Բարութեան և ողորմութեան Աստուած, ողորմէ՝ նաև այն բոլոր արդար հոգիներուն, որոնք քաւարանին մէջ կը գտնուին. վերջ տուր անոնց նեղութեանց և երկնային փառացդ արժանացուր։

ԱՂՕԹՔ

Ս. Գրիգորի Նարեկացւոյ

Ընկալ քաղցրութեամբ Տէր Աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս։ Մատիր զթութեամբ առ պատկառեալս դիմաք։ Փարատեա ամենապարգև զամօթական տխրութիւնս։ Բարձ յինէն ողորմած զամբերելի ծանրութիւնս։ Անջրպետեա հնարաւոր զմահացու կրթութիւնս։ Աւարեա միշտ յաղթող զխաբողին հաճութիւնս։ Բացատրեա վերնային զմոլելոյն մառախուղ։ Կնքեա կեցուցիչ զկորուսչին ընթացմունս։ Ցրուեա ծածկատես զըմբռնողին չար գտմունս։ Խորտակեա անքնին զմարտողին դիմեցմունս։ Տեառնագրեա քո ա-

նուամբդ զլուսանցոյց երդ յար-
կիս։ Պարփակեա քո ձեռամբդ
զառաստաղ տաճարիս։ Գծագրեա
քո արեամբդ զմուտ սեմոց սե-
նեկիս։ Կերպացո՛ զքո նշանդ ի
հետս ելից մաղթողիս։ Ամրացո՛
քո աջովդ զհանգստեանս խշտի։
Մաքրեսցես ի հաղբից զծածկա-
ւան անկողնոյս։ Պահեսցես քո
կամօք զտառապեալ անձն ոգ-
ւոյս։ Անխարդախ արասցես զքո
շնորհեալ շունչ մարմնոյս։ Կա-
ցուսցես շրջափակ զպար զօրուդ
երկնայնոյ։ Կարգեսցես ի դիմի
ընդդէմ դիւացն դասու։ Տուր
հանգիստ բերկրութեան մահա-
հանգոյնս նիրհման ի խորու-
թեանն գիշերիս, բարեխօսութեամբ
հայցուածոց սրբոյ Աստուածած-
նիդ և ամենայն ընտրելոց։ Ամ-
փոփեալ պարուրեա զպատուհան
տեսութեանց զգայարանացս ի-

մաստից անզարհուրելի զետեղ-
մամբ ի ծփական խռովութեանց
կենցաղական զբաղմանց, անը-
ջական երազոց, խօլականաց
ցնորից, յիշատակաւ քո յու-
սոյդ՝ անվնասելի պաշտպանեալ։
Եւ սթափեալ վերստին ի ննջմա-
նէ ծանրութեան ամենազգաստ
արթնութեամբ, հոգենորոգ զը-
ւարթութեամբ ի քեզ արձա-
նացեալ, զայս ձայն մաղթանաց
բուրմամբ հաւատոց քեզ ամէն-
օրհնեալ թագաւոր փառաց ան-
ճառից՝ փառաբանողաց երկնա-
գումար խմբից երգակցեալ յեր-
կինս առաքել։ Զի դու փառա-
ւորեալ ես ամենայն արարածոց
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք զօրաւորք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի, Հօրդ ահաւորի անքնին ծնունդ։ Որ տկարանայ առ ի քէն և ոչ ինչ։ Որ ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քո փառաց՝ հալին մեղք, հալածին դևք, ջնջին յանցանք, խգին կապանք, խորտակին չղթայք, կենդանանին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մռայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնա գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի։ Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում ողորմութեանմբդ, զի զու միայն ես յերկնի անճառ և յերկրի անզբնին, ի տարբ գոյի՝ և յեզրս ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի և յամենայնի, ամենայն լրմամբ օրհնեալ ի բարձունս։ Եւ քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։

ԱՂՕԹՔ

Ս. Ներսեսի Շնորհալւոյ

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ Հայր և Որդի և սուրբ Հոգի, անեղ և ան-

մահ բնութիւն, արարիչ հրեշ-
կաց և մարդկան և ամենայն ե-
ղելոց. ողորմեա քո արարածոց։
Հաւատով խոստովանիմ և եր-
կիր պագանեմ քեզ անբաժանե-
լի լոյս միասնական սուրբ Եր-
րորդութիւն և մի Աստուածու-
թիւն, արարիչ լուսոյ և հալա-
ծիչ խաւարի. հալածեա ի հոգ-
ւոյ իմմէ զխաւար մեղաց և ան-
գիտութեան և լուսաւորեա ըզ-
միտս իմ ի ժամուս յայսմիկ
աղօթել քեզ ի հաճոյս և ընդու-
նել ի քէն զխնդրուածս իմ. և
ողորմեա ինձ բազմամեղիս։
Հայր երկնաւոր Աստուած ճըշ-
մարիտ, որ առաքեցեր զՈրդիդ
քո սիրելի ի խնդիր մոլորեալ
ոչխարին, մեղայ յերկինս և ա-
ռաջի քո. ընկալ զիս որպէս զա-
նառակ որդին, զգեցո ինձ ըզ-
պատմուճանն առաջին, զոր մեր-

կացայ մեղօք. և ողորմեա քո
արարածոց և ինձ բազմամեղիս։
Որդի Աստուծոյ Աստուած ճըշ-
մարիտ, որ խոնարհեցար ի հայ-
րական ծոցոյ, և առեր մարմին
ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն
մեր ոյ փրկութեան, խաչեցար և
թաղեցար և յարեար ի մեռելոց
և համբարձար առ Հայր, մեղայ
յերկինս և առաջի քո. յիշեա
զիս որպէս զաւազակն յորժամ
գաս արքայութեամբ քով. և ո-
ղորմեա։
Հոգի Աստուծոյ Աստուած ճըշ-
մարիտ, որ իջեր ի Յորդանան
և ի վերնատունն, և լուսաւորե-
ցեր զիս մկրտութեամբ սուրբ
աւազանին, մեղայ յերկինս և ա-
ռաջի քո. մաքրեա զիս վերստին
աստուածային հրով քո որպէս
հրեղէն լեզուօք զառաքեալսն. և
ողորմեա։

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ. և ողորմեա։

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. Չնչեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ի դըպրութեան կենաց. և ողորմեա։

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծնընդենէ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քոյ՝ զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա։

Ամենախնամ Տէր, զիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայել յարատ, և

ականջաց իմոց ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ ոչ խօսել զստութիւն, և սրտի իմոյ ոչ խորհել զչարութիւն, և ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա։

Հուր կենդանի Քրիստոս. ըզհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր բորբոքեա յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում. և ողորմեա։

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար

խորհրդոց ի բանից և ի գործոց
փրկեա զիս. և ողորմեա։

Կամեցող բարեաց Տէր կամա-
բար, մի՛ թողուր զիս ի կամս
անձին իմոյ գնալ, այլ առաջ-
նորդեա ինձ լինել միշտ ըստ
կամաց քոց բարեսիրաց. և ո-
ղորմեա։

Արքայ երկնաւոր, տուր ինձ
զարքայութիւն քոյ զոր խոստա-
ցար սիրելեաց քոց, և զօրացո
զսիրտ իմ ատել զմեղս և սիրել
զքեզ միայն, և առնել զկամս
քո. և ողորմեա։

Խնամող արարածոց, պահեա
նշանաւ խաչի քո զհոգի և զմ-
արմին իմ ի պատրանաց մե-
ղաց, ի փորձութեանց դիւաց և
ի մարդոց անիրաւաց, և յամե-
նայն վտանգից հոգւոյ և մար-
մնոյ. և ողորմեա։

Պահապան ամենայնի Քրիս-

տոս, աջ քո հովանի լիցի ի վե-
րայ իմ ի տուէ և ի գիշերի՝ ի
նստել ի տան և ի գնալ ի ճա-
նապարհ, ի ննջել և ի յառնել,
զի մի՛ երբեք սասանեցայց. և
ողորմեա։

Աստուած իմ, որ բանաս ըզ-
ձեռն քո, և լնուս զամենայն ա-
րարածս ողորմութեամբ քով,
քեզ յանձն առնեմ զանձն իմ.
դու հոգա և պատրաստեա ըզ-
պէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ
յայսմ հետէ մինչև յաւիտեան.
և ողորմեա։

Դարձուցիչ մոլորելոց, դար-
ձո զիս ի չար սովորութեանց ի-
մոց ի բարի սովորութիւն. և
բևեռեա ի հոգի իմ զսոսկալի
օր մահուն և զերկիւղ գեհենոյն
և զսէր արքայութեան քո, զի
զղջացայց ի մեղաց, և գործե-
ցից զարդարութիւն. և ողորմեա։

Աղբիւր անմահութեան, աղ-
բերացո ի սրտէ իմմէ արտասուս
ապաշխարութեան որպէս պոռ-
նըկին, զի լուացից զմեղս անձին
իմոյ յառաջ քան զելանելն իմ
յաշխարհէս. և ողորմեա։

Պարգևիչ ողորմութեան, պար-
գևեա ինձ ուղղափառ հաւատով
և բարի գործով, և սուրբ մար-
մնոյ և արեան քո հաղորդու-
թեամբ գալ առ քեզ. և ողորմեա։

Բարերար Տէր, հրեշտակի բար-
ւոյ յանձն արասցես զիս քաղ-
ցրութեամբ աւանդել զհոգի իմ,
և անխռով անցուցանել ընդ չա-
րութիւն այսոցն որ են ի ներ-
քոյ երկնից. և ողորմեա։

Լոյս ճշմարիտ Քրիստոս, ար-
ժանաւորեա զհոգի իմ ուրախու-
թեամբ տեսանել զլոյս փառաց
քոց ի կոչման աւուրն, և հանգ-
չել յուսով բարեաց յօթեվանս

արդարոց մինչև յօր մեծի գա-
լըստեան քո. և ողորմեա։

Դատաւոր արդար, յորժամ
գաս փառօք Հօր դատել զկեն-
դանիս և զմեռեալս, մի մտաներ
ի դատաստան ընդ ծառայիս քոյ,
այլ փրկեա զիս ի յաւիտենական
հրոյն, և լսելի արա ինձ զերա-
նաւէտ կոչումն արդարոց յեր-
կնից արքայութիւնդ. և ողոր-
մեա։

Ամէնողորմ Տէր, ողորմեա ա-
մենայն հաւատացելոց ի քեզ,
իմոց և օտարաց, ծանօթից և
անծանօթից, կենդանեաց և մե-
ռելոց. շնորհեա և թշնամեաց
իմոց և ատելեաց զթողութիւն
որ առ իս յանցանաց. և զարձո
զնոսա ի չարեացն՝ զոր ունին
վասն իմ, զի ողորմութեան քում
արժանի եղիցին. և ողորմեա։

Փառաւորեալ Տէր ընկալ զա-

զաչանս ծառայիս քո. և կատարեա ի բարի զինդրուածս իմ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և Յովհաննու Մկրտչին և սրբոյն Ստեփանոսի նախավկային և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին և սրբոց առաքելոց և մարգարէից և վարդապետաց և մարտիրոսաց և սրբոց հայրապետաց և ճգնաւորաց և կուսանաց և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Խոստովանուբեան

Ս. Խորհրդոյն

Խոստովանութեան Ս. Խորհրդով միայն կրնանք մեր մեղքերէն սրբուիլ և առաքինութեան մէջ առաջ երթալ. ուստի՝ երբ կը զգանք թէ մեր խիղճը կը տանջէ զմեզ և զԱստուած բարկացուցած ըլլալնիս կ'իմանանք, անմիջապէս առանց ժամանակ կորսնցնելու պէտք է խոստովանութեան Ս. Խորհուրդին մերձենանք։

Ճշմարիտ քրիստոնեայ մը եթէ ստէպ ալ չխոստովանի, պէտք է մեծ տօներուն առթիւ, կամ գոնէ տարուան մէջ մէկ՝ երկու անգամ, և այն ալ Քրիստոսի Ծընընդեան կամ գոնէ Զատկին, կատարէ այդ պարտքը, ինչպէս

կը պատուիրէ Ս. Եկեղեցին, Ուստի՝ պէտք է իրեն համար սուրբ և գիտնական խոստովանահայր մ'ընտրէ և միշտ անոր ըլլայ իր խոստովանանքները, ուշադրութեամբ հետևելով անոր խրատներուն.

Խոստովանուբեան կերպը

Լաւ և դիւրին կերպով խոստովանանք ըլլալու համար՝ պէտք է այս հինգ բաներուս ուշադրութիւն ընել.

ա. Քննութիւն խղճի. իր կեանքը և վարքը քննել, թէ ի՞նչպէս անցուցած է, ի՞նչ կերպով և ի՞նչ պարագաներու մէջ պակսած է, և զանոնք մտքին մէջ դասաւորել, և թէ քանի՞ անգամ այդ պակասութեանց մէջ ինկած է.

բ. Զղջում. զԱստուած մեր Տէրը և Արարիչը բարկացուցած ըլլալնուս համար սրտանց ցաւիլ և ստէպ զղջման ներգործութիւնն ընել.

գ. Առաջադրութիւն. որպէս զի ուրիշ անգամ այսպիսի պակասութեանց մէջ չիյնանք, սրտանց առաջադրելալ չմեղանչել, և գործադրել այն բոլոր միջոցները, որոնցմով կարելի է մեղքէ և փորձութիւններէ ազատ ըլլալ.

դ. Խոստովանութիւն. ի՛նչ որ խղճի քննութեան ժամանակ մըտքերնիս կու գայ կամ կը յիշենք, առանց ամչնալու, առանց ծածկելու կամ թեթեւցընելու, խոնարհութեամբ ու զգածուած, ո՛չ թէ պատմութեան պէս, զանոնք խոստովանիլ քահանային առջև մի առ մի, իրենց տեսակովը, թիւովը ու կարևոր պարագաներովը.

ե. Ապաշխարանք. խոստովանելէ վերջը, ուշադրութեամբ մըտիկ ընել խոստովանահօր խրատներուն, և ի՛նչ ապաշխարանք

կամ պատիժ որ սահմանէ՝ կատարել, ճիշտ ժամանակովը և քանակովը առանց պակսեցնելու կամ մոռնալու։

ԱՂՕԹՔ

Աստուած իմ, դու որ բարեգութ սիրտ մ'ունիս, և միշտ պատրաստ ես մեղաւորները ընդունելու և անոնց ներելու, իմ վըրաս ալ դարձուր քու գթած աչքդ, որովհետև ես ալ ճշմարիտ հաւատքով քեզի կը դիմեմ ապաշխարութեան Ս. խորհրդով սրբուելու. շնորհք տուր, որպէս զի կարենամ արժանաւոր կերպով անոր մերձենալ, ճանչնալով մեղքերուս ծանրութիւնը, և ճշմարիտ խոստովանութեամբ արժանի ըլլամ սուրբ արձակման։

ԱՂՕԹՔ

Առ Ս. Հոգին

Աղբիւր լուսոյ, գիտութեան և շնորհաց՝ Ս. Հոգի, պարգևէ՛ ինծի գոնէ մին քու աստուածային ճառագայթներէդ, որպէս զի սրտիս խորը թափանցելով ճանչցընէ իմ մեղքերս՝ իրենց ծանրութեամբը և տեսակովը, ինչպէս պիտի ճանչնամ մեռնելուս ժամանակը՝ երբ քու ահեղ արդարութեանդ առջեւ պիտի ելլեմ դատուելու։

Ճանչցո՛ւր ինծի մեղքը՝ որ գործած եմ, և առաքինութիւնը՝ որուն մէջ անհոգ գտնուած եմ. ճանչցո՛ւր ինծի քու ծառայութեանդ մէջ գործած անթիւ և մեծամեծ անհաւատարմութիւն-

ներս. լոյս տուր ինծի որ ճանչնամ թէ քանի՛ անգամ մեղանչած եմ, ինչ չափով, եղբարցս նկատմամբ, իմ անձիս դէմ, և այն բոլոր թերութիւնները որ գործած եմ վիճակիս պարտքերուն հակառակ. վերցուր հոգւոյս աչքին առջեւի քողը, որպէս զի ինքզինքս լաւ ճանչնամ, և ճանչցընեմ՝ որչափ որ կարելի է՝ անոր որ աշխարհիս վրայ քու փոխանորդդ է։

Բնութիւն խղճի

Որպէս զի փոքր դիւրութիւն մ'ըլլայ խոստովանողներուն, մասնաւորապէս անոնց որոնք ստէպ չեն խոստովանիր, կամ առաջին անգամ այս Ս. խորհրդոյն կը մերձենան և կամ դժուարութիւն կը կրեն խղճի քննութիւն ընելու, հետեւեալ ցանկը կը կը դնենք, որ ասոր առաջնորդութեամբ կարենան դիւրաւ յիշել թէ ի՛նչ բաներու մէջ պակսած են։

Հաւատք. կամաւոր տարակոյսներ հաւատքի մէջ, հետաքրքրութիւն, աւելորդապաշտութիւններ. երազի, ախտի և ուրիշ սնոտի բաներու հաւատք ընծայել. Եկեղեցիէն արգիլեալ գրքերու ընթերցում. սրբազան բաներու վրայ խնդալ կամ արհամարհել. անհոգութիւն կրօնքի կարեւոր բաները սորվելու։

Յոյս. Աստուծոյ ողորմութեան վրայ անվստահութիւն. ծայրայեղ վստահութիւն. կամ յաւակնութիւն Աստուծոյ բարութեան վրայ. յանձնապաստանութիւն. պակասութիւն հպատակութեան. կամաւոր լքումն. ծանծրութիւն, անյուսութիւն։

Սէր. Աստուծոյ նախախնամութեան դէմ տրտունջ. բարի ազ-

դեցութեանց դէմ դնել կամաւոր անհոգութեամբ. չարիքները մերժելուն մէջ կամաւոր անհոգութիւն. մարդկային ակնածութիւններ. չափազանց յարումն կամ սէր երկրաւոր իրաց, զորոնք պէտք չենք սիրել կամ Աստուծոյ համար միայն պէտք ենք սիրել։

Կրօնք. Զանցառութիւն կրօնական պարտականութեանց, աղօթքի, պատարագի, խոստովանութեան. Եկեղեցւոյ մէջ արհամարհոտ և անպարկեշտ կեցուածք. խոսակցութիւն, անհամեստ նայուածք, կամաւոր ցրուածութիւն. նիւթական աշխատութեամբ կամ զբաղանքով սուրբ չպահել կիւրակէ և տօն օրերը, առուտուր ընել, անվայել խաղեր կամ զուարճութիւններ. Աստուծոյ ծառայութեան արգելք եղող ընկերութեանց մասնակցութիւն. կրօնքի հակառակ խոսիլ կամ մտիկ ընել. խարեբա-

յութիւն. սուտ խոսիլ. Աստուծոյ անունը ըերանը առնուլ ընդունայն տեղը ու անպատկառ կերպով. երդումն. անհոգութիւն Աստուծոյ փառաց ու անոր սուրբ կամքը գործադրելուն մէջ։

Ընկերին դէմ

Մտածութիւն. Ցանդուզն դատողութիւն, արհամարհութիւն ընկերոջ ըրած գործերուն կամ խոսակցութեանց. նախանձ. ատելութիւն. բարկութիւն. հակառակութիւն. փափաք վրէժխնդրութեան. (պէտք է բացատրել թէ՝ կամաւոր էր այդ զգացումը, երկար տևած է, արտաքսապէս յայտնուած է, ծնողքի թէ մեծաւորներու դէմ է)։

Խոսակցութիւն. Զրպարտութիւն. բամբասանք. հանոյքով լսել և չարգելուլ բամբասանքը. անուանարկիչ երգեր շինել կամ

երգել. վատահամբաւել ուրիշը գրութեամբ կամ բերանացի, և կամ դատ բանալով դէմը. (պէտք է բացատրել խոստովանահօր թէ ինչ բանի համար ըրած է, և որոնց առջև, արդեօք խելացի՞ կամ կրթուած՝ թէ ռամիկ մարդերու առջև). եղբայրասիրութեան դէմ անօգուտ խօսակցութիւններ. պառակտում ձգել ընկերաց մէջ քսութեամբ. անշընորհք կատակաբանութիւններ. ծաղրածութիւններ. արհամարհութիւններ. չար խորհուրդներ. շողոքորթութիւններ. չար բան մը գովել. սուտ վկայութիւն. ուրիշին գաղտնիքը կամ պակասութիւնը մէջտեղ հանել. նախատինք. պարսաւանք. թշնամական խօսքեր. անէծք. չարամաղթութիւններ՝ (խօսքով կամ գրութեամբ)։

Գործեր. Ուրիշին սեփականութիւնը անիրաւութեամբ՝ քովը

պահել. անիրաւ կամ խարդախ դաշնադրութիւն. վաշխառութիւն, վաճառականութեան կամ առուտուրի մէջ խաբեբայութիւն կամ անհաւատարմութիւն, գայթակղութիւն. եղեռնական գործեր. չար օրինակ. և այլն։

Զանցառութիւններ. Անհոգութիւն ուրիշին բարոյական կամ նիւթական հատուցում ընելուն մէջ. ուրիշները չխրատել. թերանալ ամուսնական պարտականութեանց մէջ. պակսիլ սիրոյ, հաւատարմութեան, յարգանքի, հըպատակութեան ու համբերութեան մէջ. չկատարել հօր և մօր, տիրոջ և տիրուհւոյ, դաստիարակի և այլն պարտականութիւնները. իր վիճակին, պաշտօնին և արդարութեան պահանջած պարտքերը չ'ընել. նոյնպէս անհոգութիւն առ որդիս, առ ծառայս, առ գործաւորս, և այլն։

Իր անձին դեմ

Հպարտութիւն. Չափազանց համարմունք ունենալ անձին վրայ. ինքզինքը գովել, պատիւ ու փառք փնտռել և այլն։

Ագահութիւն. Իր կարողութեան համեմատ ողորմութիւն չտալ. աշխարհիս բարիքներուն ու հարստութեան չափազանց կապուիլ. ապագային համար չափազանց անհանգիստ ըլլալ. իր անձը և ուրիշները հարկաւոր բաներէն զրկել։

Նախանձ. Ուրիշը արհամարհել և անուանարկել. ուրիշին պատահած չարիքին վրայ ուրախանալ. տրտմիլ ընկերոջ ունեցած կամ ընդունած բարիքին վրայ. նախանձիլ ու աչք ունենալ ուրիշին ստացուածքին. և այլն։

Անմաքրութիւն. Անվայել և անմաքուր մտածութիւններ և փա-

փաքներ (պէտք է ըսել թէ անհոգութեամբ ուշացեր է, հաճոյք զգացեր է, այն բանը կատարելու փափաք ունի թէ պարզ հաճոյք մ'է). ախորժով ըսել կամ լսել աղտեղի կամ երկդիմի խօսքեր. անբարոյական երգեր երգել կամ մտիկ ընել. չափազանց ազատ և կամ շատ մտերմական խօսակցութիւններ, մասնաւորապէս տարբեր սեռի անձինքներու հետ. հետաքրքրութեամբ անպարկեշտ առարկաներու կամ պատկերներու նայիլ. գայթակղական ժողովներ ընել կամ մասնակցիլ. մեղքի առիթներ տալ կամ փնտռել. ուրիշներուն գէշ գրքեր տալ կամ անոնց ընթերցումը գովել. անպարկեշտ ըզգեստներ հագուիլ. ուրիշները հրապուրելու դիտմամբ կերպ կերպ շարժումներ ընել. (պէտք է կարելի եղածին չափ պարկեշտ բառերով բացատրել. թէ քանի՛ ան-

զամ պատահեր և որչափ ժամանակ տեւեր են)։

Որկրամոլութիւն. Զափազանց ուտել կամ խմել և ուրիշներն ալ յորդորել. գինետունները յաճախել, փոխանակ եկեղեցի և աշխատութեան երթալու. անկանոն կերպով և զգայական հաճոյքով ուտել. պահք և ծոմ չպահել։

Բարկութիւն. Դժկամակութիւն ցոյց տալ. անհամբերութիւն ընել. նախատական խօսքեր ըսել. չարամաղթութիւն ընել. ուրիշներուն անհամբերութեան առիթ տալ. կռուիլ. զարնել. ոխ պահել. թողութիւն կամ զղջում յայտնողը մերժել. վիրաւորել. վնաս հասցնել. և այլն. (բացատրելու է թէ՝ որոնց և ինչպիսի՛ անձանց հետ. արդեօք սրբազան անձանց, մեծերու թէ հաւասարակիցներու կամ ստորնագոյն անձանց հետ պատահեր են անոնք)։

Ծուլութիւն. Անհոգութիւն ու զանցառութիւն սուրբ խորհուրդներուն մերձենալու, աղօթքի ու քարոզ լսելու մէջ, իր կամքը մահացնելու, ինքզինքը ուղղելու, փորձութեան առիթներէն փախչելու, իր պարտքերը կատարելու. հոգեւոր և մարմնաւոր գործերը կանոնաւոր կերպով ընելու, իր յաւիտենական փրկութեան հոգ ունենալուն մէջ։

Ներգործութիւն զղջման

Ո՛վ Աստուած իմ, մեծապէս կը ցաւիմ գործած մեղացս և տկարութեանս վրայ. որովհետև այնչափ առաջադրութիւններէն վերջը՝ գարձեալ միևնոյն պակասութեանց մէջ ինկայ, փոքր և չնչին առիթներէն յաղթուելով՝ քեզի և քու կամացդ դէմ մեղանչեցի. գիտեմ թէ որչափ

կ'ատես մեղքը, և սակայն քու բարութեամբդ անդադար կը զեղծանիմ։ Աստուած իմ, և Հայր իմ բարեգութ, մեղմէ՝ բարկութիւնդ և ներէ՝ ինծի, որովհետև ալ չեմ ուզեր մեղանչել և սիրտդ ցաւցնել։

Աստուած իմ, գթա՛ վրաս, ո՛րովհետև ալ ճշմարիտ զղջացեալ սիրտ մ'ունիմ, սիրտ մը՝ որ կատարեալ կերպով երախտապարտ է քու ողորմութեանդ, և այս սիրտը միշտ պիտի սիրէ զքեզ՝ որ անսահման բարի ես և անհուն սիրոյ արժանի։

Կ'աղաչեմ և կը պաղատիմ, Աստուած իմ, ներէ՝ բոլոր գործած և գործել տուած մեղացս համար, ներէ՝ ինծի՝ որ թերացած ու զանցառու գտնուած եմ պարտականութիւններս կատարելու։ Ներէ՝ կամայ և ակամայ

բոլոր գործած մեղացս համար, որոնցմէ կը զզուիմ, կը խորշիմ, և կ'ուզեմ արիւնովս զանոնք ջնջել և զքեզ արհամարհած և վշտացուցած ըլլալուս փոխարէն՝ նուիրել և զրկուիլ իմ ամենէն աւելի սիրելի բաներէս։

Ներգործութիւն առաջադրութեան

Աստուած իմ, ասկէ վերջը աւելի կ'ընտրեմ մեռնիլ քան թէ անգամ մ'ալ զքեզ բարկացնել. և որովհետև անցեալին մէջ քեզի դէմ մեղանչելու դժբախտութիւնն ունեցայ, կ'ուզեմ գոնէ հիմակ այնպիսի հաստատուն և զօրաւոր որոշողութիւն մ'ընել և առաջադրել ապագային համար, որ քու չնորհացդ օգնութեամբ ասկէ վերջը ամէն մի-

ջոց և զգուշութիւն ընեմ քեզի անհաճոյ եղած բաները չընելու։ Ամէն կերպով պիտի զգուշանամ մեղքերէն, անոնց առիթներէն և մասնաւոր կերպով ինծի ունակութիւն դարձածներէն։ Անկեղծ կերպով և անյապաղ պիտի գործադրեմ այն բոլոր միջոցները, որ խոստովանահայրս ինծի պիտի սորվեցնէ և առաջնորդէ, ես անոր խօսքերուն մտիկ պիտի ընեմ՝ իբր թէ քու բերնէդ ելած ըլլային, որովհետև կատարեալ կերպով համոզուած եմ թէ անոնք քու հրամաններդ են. ես ալ, Աստուած իմ, ինչ որ իրեն պիտի ըսեմ և պիտի խոստանամ՝ գիտեմ որ ուղղակի քեզի և քու առջևդ ըսած և խոստացած պիտի ըլլամ։

Ներգործուրիւն Յուսոյ

Աստուած իմ, կը ճանչնամ, թէ որչափ գքեզ նախատած և պատուիրաններդ արհամարհած եմ, որուն փոխարէն պէտք էի արդար բարկութեանդ սպասել. եթէ քու անսահման ողորմութիւնդ և Յիսուսի փրկչիս չարչարանքներուն արդիւնքը չչարժէին քու գթութիւնդ ինծի պէս մեղաւորի մը վրայ։

Բարեգութ Աստուած իմ, վստահ եմ թէ պիտի չմերժես քու ամենասիրելի որդիդ ինծի համար եղած աղաչանքը, որ գթութիւն և ողորմութիւն կը խնդրէ մեղաւորի մը համար՝ որ իր պակասութիւնները և թերութիւնները կը ճանչնայ, կը գարշի և կը փափաքի լուսաւորուիլ

այն պաշտօնեայէն՝ որուն արձակելու իշխանութիւնը տուած ես։

Ահա այս յուսով, Աստուած իմ, կը դիմեմ խոստովանութեան փրկարար ատեանին, լի վստահութեամբ թէ բոլոր մեղքերս պիտի թողուին, և ասոր համար խոնարհութեամբ կը խնդրեմ որ երկինքին մէջ ալ հաստատես՝ երկրիս վրայ քու պաշտօնէիդ միջոցաւ ինծի տրուած արձակման վճիռը։

ԱՂՕԹՔ

Առ Աստուածածին և առ պահապան Հրեշտակն

Սուրբ Կոյս, Մայր շնորհաց, Մայր ողորմութեան և ապաւէն խեղճ մեղաւորաց, այս վայրկենիս ինծի օգնէ և բարեխօսէ, որպէս զի այս խոստովանութիւնը՝ որ պիտի ընեմ՝ ինծի դատապարտութիւն չըլլայ. այլ անով բոլոր անցած մեղացս թողութիւն գտնեմ և ընդունիմ շընորհք ապագային մէջ ալ բնաւ չմեղանչելու։

Բարի և հաւատարիմ պահապան հրեշտակս, դու որ հոգւոյս փրկութեան փափաքող ես ու տեսար թէ ինչպէս չարաչար կերպով ինկայ ու մեղանչեցի, օգնէ՛ ինծի որ այս խոստովա-

նութեան սուրբ խորհուրդով սրբուիմ ու այլևս մեղաց մէջ չիյնալու շնորհք ընդունիմ։

Խոստովանուբեան կերպը

Խղճերնիս ուշադրութեամբ քննելէն վերջը, պէտք ենք սրտանց զղջալ մեղքերնուս վրայ, լաւ մտքերնիս պահել մեր թերութիւնները, անոնց տեսակը և թիւը. վերջը՝ ամենայն պատկառանքով և պարկեշտութեամբ մօտենանք խոստովանահօր. ծնրադրենք, խաչակնքենք և ըսենք հետեւեալ «Խոստովանիմ առաջի Աստուծոյ» աղօթքը (էջ 73). վերջը մի առ մի ըսենք մեղքերնիս և խոստովանահօր հարցումներուն պատասխանենք. ուշադրութեամբ մտիկ ընենք խոստովանահօր խրատներուն, մտքերնիս պահենք տուած ապաշխարանքը, ժամանակովը և չափովն ընելու

համար, առանց պակսեցնելու կամ փոխելու. վերջը ցաւով և զգացմամբ ըսենք զղջման ներգործութիւնը (էջ 65), երբ կ'արժանանանք սուրբ արձակման, խաչակնքենք ինքզինքնիս և ելլենք խոստովանահօր ակնարկին վրայ։

ԱՂՕԹՔ

Խոստովանուբեան

Խոստովանիմ առաջի Աստուծոյ ամենակարողի, երանուհւոյ Մարիամու միշտ կուսին. երանելւոյն Միքայելի հրեշտակապետին, երանելւոյն Յովհաննու Մկրտչին և սրբոյն Ստեփանոսի նախավկային, և սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լու-

սաւորչին և ամենայն սրբոց, և առաջի քո, Հայր սուրբ, քանզի մեղայ յոյժ, խորհրդով, բանիւ և գործով, վայ ինձ, վայ ինձ և յաւէտ վայ ինձ։

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԷՆ ՎԵՐՋԸ

Ներգործուրիւն Հաւատոյ և վատահուրեան

Բոլորովին վստահ եմ, Աստուած իմ, թէ հոգիս՝ որ քիչ մ՝առաջ մեղքերով լի ու աղտեղի էր՝ հիմակ բոլորովին սըրբուած, բոլորովին թեթեւցած է, քանի որ խոստովանութեան սուրբ խորհուրդը ընդունեցայ և արձակման արժանացայ։ Այո, Աստուած իմ, բոլորովին սըրբուած և մեղքերէս արդարացած եմ, որովհետև հոգւոյս մէջ ուրախութիւն մը և սրտի թեթեւութիւն մը կը զգամ. այն ամէն կապերը՝ որ հոգիս ուրիշ չնչին բաներու հետ կապած էին՝ բոլորովին քակուեցան, որպէս զի Յիսուսի խաչին հետ կապեն։

Սիրով կը գրկեմ և կը համբուրեմ այն խաչը, որ մարդկութիւնը ազատեց և աստուածային սրբարար շնորհքը ինծի պարգևեց, և կը խոստովանիմ սրտովս թէ այս իմ դարձս՝ ուրիշ բանի արդիւնքն չէ, բայց միայն Յիսուսիս թափած անգին արեանը։ Այո՛, սիրելի փրկիչ իմ, քու սրբազան վէրքերդ եղան իմ հոգւոյս վէրքերը բժշկողը. անոնց միշտ երկրպագող պիտի ըլլամ։

Ներգործութիւն շնորհակալութեան

Հոգի իմ, շնորհակալ եղիր քու ամենաբարի Աստուծոյդ, և ճանչցիր անոր ամբաւ ողորմութիւնը և քու ոչնչութիւնդ։ Դու քու մեղքերովդ դժոխքի զարհուրելի տանջանքներուն դատապարտուած էիր, ու ինքը ազատեց զքեզ անոնցմէ, և փոխարէն ուրիշ բան չի պահանջեր՝ բայց միայն անկեղծ ու սրտագին շնորհակալութիւն մը։ Ներէ՛ և մոռցիր բոլորը, Աստուած իմ, կ'ուզեմ ասկէ վերջը քեզի նման՝ ըլլալ քաղցր, ողորմած և գթած՝ իմ եղբայրներուս հետ, և ի նշան շնորհակալութեան՝ կ'ուզեմ քեզի նուիրել իմ զգայարանքներս, բերանս՝ զքեզ օրհնելու և գովելու համար, աչքերս՝ քու ստեղծած հրաշալիքներդ դիտելու և զմայլելու, ականջներս՝ քու սուրբ պատուիրաններդ լսելու, ձեռքերս՝ բարի գործելու, ոտքերս՝ քու տաճարներդ և բարեգործական տեղերդ յաճախելու, իսկ սիրտս՝ մինչև վերջը զքեզ միայն սիրելու։

Առաջադրութիւն այդ ևս չմեղանչելու

Աստուած իմ, ինձի ըրած բարիքներուդ փոխարէն սաստիկ զգածուած եմ, և կը ցաւիմ թէ ի՞նչպէս մինչև հիմակ կըրցած եմ քեզմէ բաժնուած ապրիլ. գիտեմ թէ՝ մեղքը եղած է մեր բաժանման պատճառը, ուստի ասկէ վերջը սաստիկ կերպով պիտի ատեմ զայն և հաստատապէս պիտի գործադրեմ առաջադրութիւնս՝ ո՛և է կամաւոր ու թեթև մեղք մ'իսկ չգործելու։

Կը խնդրեմ ուստի, Աստուած իմ, որ զօրացնես զիս քու սուրբ շնորհքներովդ, որպէս զի կարենամ ուղղել վարքս

և հաստատուն մնալ իմ առաջադրութեանցս վրայ։

Տուր ինձի, Աստուած իմ, քաջութիւն այս աշխարհիս մէջ իմ անձիս յաղթելու, որպէս զի երկինքն ալ քու հետդ կարենամ յաւիտեան թագաւորել։

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ամենասուրբ Հաղորդութեան

Սուրբ հարք կ'ըսեն թէ մարդս որչափ ալ պատրաստուած ըլլայ և իր ամբողջ կեանքը ապաշխարութեամբ և զղջումով անցնէ, երբեք չի կրնար արժանաւոր կերպով ընդունիլ Յիսուսի ամենասուրբ մարմինը. բայց որովհետև Յիսուս է հրամայողը որ իրեն մօտենանք և զինքը ընդունինք, յաւիտենական կեանք ստանալու համար, «Ո՛վ որ իմ մարմինս ուտէ և արիւնս ըմպէ, յաւիտեան պիտի ապրի», անոր համար մենք ալ Յիսուսի խօսքերէն քաջալերուած պէտք է ստէպ անոր մօտենանք և զինքը ընդունինք, քանի որ ուրիշ տեղ մ'ալ կ'ըսէ Յիսուս. «Ո՛վ որ չ'ուտեր այս

հացէն և բաժակէն չի խմեր, ինծի հետ բաժին չ'ունենար»։ Սակայն պէտք է որ մենք ալ մեր կողմանէ պատրաստուած ըլլանք, որպէս զի ըստ կարելւոյն արժանաւոր կերպով ընդունինք. որովհետև, կ'ըսէ Պօղոս առաքեալը՝ Ս. Հաղորդութեան վրայ խօսելով, «Ո՛վ որ անարժանաբար աս հացէն կ'ուտէ և բաժակէն կը խմէ, իր անձը կը դատապարտէ»։ Ուստի՝ ասոնք գիտնալով, պէտք է որ կարելի եղածին չափ արժանաւոր կերպով ընդունինք, որուն համար երկու բան կը պահանջուի.

ա. Հոգւոյ մաքրութիւն. Այսինքն պէտք է որ լաւ պատրաստութեամբ կատարած ըլլանք մեր խոստովանութիւնը, ինչ որ մանրամասն ըսինք խոստովանութեան գլխուն մէջ. խիղճը մաքուր ըլլայ ո՛և է արատէ։

բ. Մարմնոյ մաքրութիւն. Սուրբ

խորհրդոյն յարգանքի համար, Ս. Եկեղեցին հրամայած է՝ որ սրբութիւն առնողը ծոմ ըլլայ կէս գիշերէն սկսեալ մինչև այն վայրկեանը՝ որ Յիսուսի ամենասուրբ մարմինը պիտի ընդունի. ծոմ ըսելով կը հասկնանք՝ ներս չընդունիլ կամ չճաշակել ո՛և է հաստատուն կամ հեղուկ բան, նոյն իսկ փոքր կտոր մը կամ կաթիլ մը ջուր. որոնք ծոմերնիս կ'աւրեն, և հետևաբար չենք կրնար Յիսուսը ընդունիլ։ **Մարմնոյ մաքրութիւն** ըսելով կ'իմացուի նաև արտաքին վայելչութիւնը կամ պարկեշտութիւնը, որով թէ զգեստնիս և թէ մարմիննիս՝ որչափ որ կարելի է մաքուր պէտք է ըլլան։ Շատ զգուշանալու են կիներ և աղջիկներ, որ հաղորդուած ատենին ըստ կարելւոյն պարկեշտ հագուած ըլլան, գլուխնին քօղարկուած, երկիւղած և ամփոփ։

ԱՂՕԹՔ

Սրբոչիւն առնելէ առաջ

Ներգործոչիւն հաւատոյ

Ինծի կ'ուզէ գալ և սրտիս մէջ բնակիլ երկնքի և երկրի Արարիչը և բոլոր մարդկութեան փրկիչը. ո՜հ, ո՞րչափ երջանիկ պիտի ըլլամ զինքն ընդունելովս։ Բայց կարելի՞ է հաւատալ այսպիսի հրաշքի մը, Աստուած իմ, եթէ դու ինքդ ըսած չըլլայիր։ Այո, Տէր իմ, կը հաւատամ թէ դու ինքդ ես՝ որ Հաղորդութեան սուրբ խորհրդոյն մէջ պիտի ընդունիմ սիրտս ամենամեծ եռանդով ու խոնարհութեամբ. պիտի ընդունիմ այն Յիսուսը, որ մսուրի մէջ ծնաւ, իմ փրկութեանս համար

ամէն տեսակ չարչարանքներ կրեց, խաչին վրայ մեռաւ, յարեաւ ու երկինք համբարձաւ յաղթանակով, և հոն հրեշտակներէն կը փառաբանուի, ու հոս Հաղորդութեան խորհրդոյն երկրպագելի տեսակին ներքեւ ծածկուած կ'ուզէ հոգւոյս կերակուր ըլլալ։

Ներգործոչիւն խոնարհոչեան

Ահա, Աստուած իմ, քու առջեւդ ներկայ եմ. բայց ո՞վ եմ ես, որ կ'ուզես քու տեսութեանդ արժանի ընել և գալ սրտիս մէջ հանգչիլ։ Կարելի՞ է ընդունել այս չափազանց բարութիւնը և սէրը, որով իմ Տէրս և Աստուածս կ'ուզես ինծի գալ. բայց ես մեղաւոր եմ, չարութեան հակամէտ և ամենէն աւելի դա-

տապարտութեան արժանի։ Այս-
պիսի ամենասուրբ Աստուած մը
ընդունիլ հոգւոյս մէջ... ուտել
հրեշտակաց հացը... ամենա-
սուրբ մարմնով մը սնանիլ...
տաճար և բնակարան ըլլալ Ա-
մենասուրբ Երրորդութեան...։
Ո՜վ Տէր իմ, ատոր արժանի չեմ։

Ներգործութիւն Ցուսոյ

Իմ փրկութեան միակ յոյ-
սը, Յիսուս իմ սիրելի, կու
գաս՝ որպէս զի հոգւոյս վէրքե-
րը բժշկես, և այդ փրկութեան
յոյսն է որ զիս երջանիկ կ'ընէ.
և ինչպէս երջանիկ չըլլամ, եր-
բոր մշանջենաւորապէս ինքզին-
քըդ ինծի պիտի տաս. ես ալ
բոլորովին ինքզինքս քեզի կը
նուիրեմ, ամենայն վստահու-
թեամբ, քանի որ գիտես իմ

պէտքերս և թերութիւններս,
որոնք կրնաս թեթեւցնել։ Զիս
քեզի կը կանչես, որպէս զի ա-
պահովես իմ փրկութիւնս. ա-
հաւասիկ պատրաստ եմ և քու
խօսքիդ վրայ վստահացած կու
գամ, քեզի նուիրել անձս՝
բոլոր խեղճութիւններովս ու
տկարութիւններովս. կը յու-
սամ թէ պիտի զօրացնես զիս,
պիտի լուսաւորես, պիտի մխի-
թարես և պիտի վերանորոգես
զիս։

Ներգործութիւն փափաքանաց

Կարելի՞ է, Աստուած իմ, որ
դու ուզես ինծի գալ և միանալ
անսահման փափաքով մը...։
Գիտեմ որ եթէ չգաս և չը-
միանաս, չեմ կրնար փրկուիլ.
եկո՛ւր ուրեմն, սրտիս ամենա-

սիրելին, եկուր, Գառն Աստուծոյ, երկրպագելի մարմին և թանկագին արիւն փրկչիս, եկուր հոգիս սնուցանելու։ Ասկէ վերջը սիրտս ուրիշ բաներու պիտի չկապեմ բաց ի գքեզ սաստիկ կերպով սիրելէն, ով սրտիս Աստուածը, իմ ուրախութիւնս, բաղձանքս, սէրս, Աստուածս և իմ ամենայն ինչս։

Եկո՛ւր ուրեմն, պաշտելի Յիսուս, թէ և անարժան եմ ըզքեզ ընդունելու, բայց վստահ եմ թէ քու ներկայութեամբդ պիտի մաքրուիմ. պատրաստէ սիրտս, քու մէկ ակնարկովդ, բոցավառէ սիրտս քու սիրովդ և եկուր բնակելու, Տէր իմ և Աստուած իմ, եկուր բնակելու հոգւոյս մէջ, Յիսուս փրկիչ իմ։

Ամենասուրբ Հաղորդութիւնը ընդունելէ վերջը

Ներգործութիւն երկրպագութեան

Երկրպագելի և պաշտելի Աստուած իմ, միթէ կարելի՞ է գտնել երկնքին մէջ և երկրիս վրայ մէկը՝ որ քեզի հաւասար ըլլայ. ի՞նչ կրնամ ընել ուրեմն քեզի փոխարէն, եթէ ոչ՝ երկրպագել և բոլոր սրտով ըզքեզ պատուել։ Կը պաշտեմ ըզքեզ, ով ամենասուրբդ Աստուած, և իմ խոնարհ երկրպագութեան մեծարանքներս կ՝ընծայեմ քու մեծվայելչութեանդ, որուն առջև ամէն իշխանութիւն կը խոնարհի, ամէն յաջողութիւն ու փառք կ՝անչքանայ, և ամենափայլուն լուսաւորներն անգամ կը խաւարին։

Ներգործութիւն Սիրոյ

Ո՛վ Աստուած սիրոյ, շնորհակալ եմ որ զքեզ ընդունելու երջանկութիւնն ալ ունեցայ. ինչպիսի՜ բարութիւն, որուն չեմ գիտեր ի՞նչպէս շնորհակալ ըլլալ կամ փոխարէն ի՞նչ ընել, եթէ ոչ բոլոր սրտովս զքեզ սիրել, սիրել այնչափ՝ որչափ որ սիրելի ես, և միայն զքեզ սիրել։ Վառէ՛ զիս, Աստուած իմ, այրէ՛, սպառէ՛ սիրոս քու սիրովդ. ասկէ վերջը դու իմինս ես, ո՛վ ամենասիրելի Յիսուսս, և իմ սիրոս՝ քուկդ է բոլորովին։

Աստուածամայրդ Մարիամ, երկնքի և երկրի Սուրբեր, տուէք ինծի ձեր սրտերը ու ձեր սէրը, որպէս զի սիրեմ անոնցմով իմ Յիսուսս։

Ներգործութիւն շնորհակալութեան

Ո՜րչափ շնորհակալ պէտք եմ ըլլալ, Աստուած իմ, այս օրուան ըրած շնորհքիդ՝ դոյզն փոխարէն մը ըրած ըլլալու համար. գոհ չեղար զիս սիրելովդ «մահու չափ և մահու խաչի», տուիր նաև ինքզինքդ ինծի ու քու այցելութեամբդ պատուեցիր իմ խոնարհ սրտիկս։ Ո՛վ անձն իմ, փառաբանէ՛ քու Տէր Աստուածդ, ճանչցիր և ճանչցուր անոր բարութիւնը, փառաւորէ՛ անոր մեծվայելչութիւնը, քարոզէ անոր անսահման ողորմութիւնը։ Ո՛վ անուշիկ փրկիչս, շնորհակալ եմ երախտագէտ և գոյովալիր սրտով այն անսահման շնորհքին

համար, որուն զիս արժանի ը-
ըիր։

Ես՝ որ անհաւատարիմ, թոյլ
և պարտազանց եղած եմ մինչև
հիմակ, այսուհետև չեմ ուզեր
ըլլալ ապերախտ մը։ Կը խոս-
տանամ և կ'ուխտեմ որ ինչպէս
դու այսօր ինքզինքդ ինծի տը-
ւիր, ես ալ իմ բոլոր անձս
կատարելապէս քեզի պիտի նը-
ւիրեմ. ուստի՝ գծէ՛ իմ կենա-
ցըս ընթացքը. սորվեցուր ինծի
պարտականութիւններս՝ որ ու-
նիմ քեզի հանդէպ, որպէս զի
այսուհետև երբեք այդ ուղղու-
թենէն չշեղիմ, ով Աստուած իմ։

Ներգործութիւն խնդրուածոց

Բարութեան և երկնային շը-
նորհաց անսպառելի աղբիւր,
Յիսուս փրկիչ իմ, դու որ գո-

րովալիր սիրով իմ սիրտս ե-
կար, սփռէ՛ առատօրէն հոգւոյս
մէջ Աստուածային շնորհքներդ։
Տես իմ կարօտութիւնս և քու
կարողութիւնդ, և անոր համե-
մատ զիս լիացուր. ինչ բանի
համար որ եկար՝ կատարէ զայն.
հանէ սրտէս՝ ինչ որ անպատ-
շաճ է, և դիր հոն ինչ որ քեզի
հաճոյ է։ Մաքրէ սիրտս, սրբէ
հոգիս, միացուր զիս քեզի՝ ա-
մենասուրբ փեսայդ հոգւոյս. ա-
պրէ՛ հոգւոյս մէջ, որպէս զի ես
ալ քու մէջդ, քեզի հետ և քեզի
համար միայն ապրիմ միշտ։

Ներգործութիւն ընծայման

Ո՛վ Աստուած ողորմութեան,
լեցուր զիս քու բարիքներովդ՝
որպէս զի քեզմէ զատ ուրիշ
բանի պէտք ու փափաք չունե-

նամ, միայն քեզի համար ապ-
րիմ ու քուկդ ըլլամ բոլորովին։
Ասկէ վերջը մտածութիւններս
ու իղձերս քու կամքիդ համե-
մատ և փառացդ համար պիտի
գործածեմ. նաև այն բոլոր ձիր-
քերը և առաւելութիւնները որ
ինծի տուած ես, առողջութիւն,
ուժ, միտք, հանճար, համա-
րում, հարստութիւն, պատիւ և
այլն, բոլորն ալ մի միայն քու
փառացդ համար պիտի գործա-
ծեմ։

Ներգործութիւն Առաջադրու-թեան

Ամենագութ և ամենաբարի
Տէր իմ, միթէ կարելի՞ է այլ
ևս քեզմէ բաժնուիլ, քանի որ
մինչև հիմակ բաժնուած ըլլա-
լուս վրայ բոլոր սրտովս կը

ցաւիմ, և կ'առաջադրեմ անցած
մեղքերուս մէջ չմնալ, որ քու
շնորհքներդ չզրկուիմ։

Ուրեմն, Աստուած իմ, ամէն
կերպով պիտի ջանամ որ ոչ
մտածութեամբ, ոչ փափաքով,
ոչ խօսքով, ոչ գործով և ոչ ալ
զգայարանքներովս որ և իցէ մեծ
կամ փոքր մեղքի մէջ չմնամ,
որպէս զի զքեզ չբարկացնեմ,
և աւելի յանձն պիտի առնեմ
բիւր անգամ մեռնիլ քան թէ
քու կամքիդ դէմ բան մ'ընել։

Աստուած իմ, օրհնէ՛ այս իմ
փափաքս ու առաջադրութիւնս,
որպէս զի մի միայն քու փա-
ռացդ համար ապրիմ. ամէն։



ԱՂՕԹՔ

Առաջի խաչելոչբեան

Լիակատար Ներողութիւն ունի ով որ խաչելութեան պատկերի մ'առջև զղջացեալ սրտով հաղորդութենէ ետքն ըսէ.

Ահաւասիկ, ով սիրելի իմ բարի Յիսուսս, ես քու ամենասուրբ ներկայութեանդ առջև խոնարհով, մեծ ջերմեռանդութեամբ կը խնդրեմ՝ որ սրտիս մէջ տպաւորես հաւատք, յոյս, սէր ու ցաւ՝ իմ մեղացս համար, և առաջադրութիւն մը որ ասկէ վերջը ոչ երբեք քեզի դէմ մեղանչեմ։ Որովհետև ես բոլոր սիրով ու սաստիկ ցաւակցելով, մտածելու հետ կ'ըլլամ քու հինգ

վէրքերդ, սկսելով անկէ, որ կ'ըսէ քեզի համար, ով Յիսուս, սուրբ մարգարէն Դաւիթ. «Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, թուեցին զամենայն ոսկերս իմ»։

Հայր մեր. Ողջոյն քեզ. Փառք Հօր մը զուրցէ եկեղեցւոյ պիտոյից համար։

ՏԱՂ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Ըզքեզ Աստուած գովաբա-
[նեմք,
Եւ ըզքեզ Տէր խոստովանիմք,
Ըզքեզ հայր մեր անժամանակ
Պաշտէ երկիր առ հասարակ։
Քեզ հրեշտակաց զօրք ամենայն,
Երկինք և պետք միանգամայն,
Հոյլք քրովբէից և սրովբէից
Անլռելի լեալ ձայնակից։
Եղանակեն զերգս օրհնու-
[թեանց,
Սուրբ սուրբ սուրբ ես Տէր զօ-
[րութեանց.
Լի են երկինք ե՛երկիր համայն
Փառօք քո մեծ վայելչութեան։
Զքեզ պանծալի դասքք սրբոց,

Երկուտասան առաքելոց,
Պարքք գովեալ մարգարէից,
Տնօրէնութեանդ նախատեսից,
Գունդք լուսազգեաց մարտի-
[րոսաց,
Գովաբանեն զՏէրըդ փառաց.
Ըզքեզ մինչև ի ծագս երկրի,
Դաւանէ սուրբ եկեղեցի:
ԸզՀայրըդ մեծ անբաւելի,
Ըզմիածինըդ քո զՈրդի,
Զմխիթարիչ քո սուրբ Հոգի
Փառաւորէ անլռելի:
Քրիստոս փառաց դու թագաւոր,
Անժամանակ ծընունդըդ Հօր,
Ի փրկութիւն մարդկան ազգի,
Խոնարհեցար յարգանդ կուսի:
Դու կոխեցեր զմահու խայթոց.
Զերկինս բացեր յուսացելոց.
Եւ համբարձեալ յաջմէ նըստար,
Փառօք ընդ Հօր քո հաւասար:
Գալ միւսանգամ ես հանդեր-
[ձեալ,

Ի դատել զազգըս հողածնեալ.
Եւ արդ խնդրեմք օգնել մեզ Տէր,
Զոր պատուական արեամբ գնե-
[ցեր:
Ընդ սուրբըս քո դասաւորեա,
Ի փառս անանց և յարակայ.
Ըզժողովուրդըս քո փրկեա,
Զժառանգութիւնս քո Տէր օրհ-
[նեա:
Հովեա զնոսա և խնամարկեա,
Ցայսըմ հետէ և առ յապայ.
Զօր հանապազ զքեզ օրհնեսցուք,
Եւ զանուն սուրբ քո գովեսցուք:
Շնորհեա մեզ Տէր զաւուրս
[կենաց
Անցուցանել առանց մեղաց.
Ողորմեաց մեզ Տէր ողորմեաց,
Եւ գթութեամբ ի մեզ հայեաց,
Ողորմութիւնդ լիցի ի մեզ,
Որպէս և մեք յուսամք ի քեզ,
Ի քեզ անձինք մեր յուսացան,
Մի ամաչեսցեն ի յաւիտեան:

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ս. ՎԱՐԴԱՐԱՆԸ

Բացատրութիւն

Աստուածածնի Ս. վարդարանին աղօթքը այնպիսի հրաշալի և քաղցր ջերմեռանդութիւն մ'է որ Ս. Եկեղեցին հաւատացեալները յորդորելու համար՝ շատ տեսակ նորոգութիւններ շնորհած է անոր ջերմեռանդներուն. Չկայ գրեթէ բարեպաշտ հաւատացեալ մը, որուն քով չը-գտնուի վարդարանը, և ամէն դասակարգի անձինք ընդհանրապէս կը կատարեն այդ աղօթքը. Շատեր իրենց վրայ պարտականութիւն դրած են ամէն օր ըսելու զայն. թէև սկիզբը քիչ մը դժուար կու գայ, բայց յետոյ այնչափ կը դիւրանայ և սիրը-

ժելի կ'ըլլայ, որ կենսական աղօթքներէն մին դառնալով անկարելի կ'ըլլայ զայն թողուլը առանց խղճի ծանրութեան մը.

Այս ջերմեռանդութեան օգտակարութիւնը շատ փաստերով և վկայութիւններով ապացուցուած ըլլալով, կը յանձնարարեմ ջերմեռանդ ընթերցողներուս որ իրենք ալ պարտք մը դնեն իրենց վրայ՝ անպատճառ կատարելու ամէն օր, իսկ որոնք արդէն ջերմեռանդ են սուրբ վարդարանին՝ երբեք ձեռքէ չձգեն զայն.

Ամբողջ վարդարանը 15 տուներէ կը բաղկանայ. առաջին 5 տուները Ս. Կուսին Ուրախութեան նուիրուած են. միջին 5 տուները անոր Ցաւոց. վերջին 5 տուներն ալ Փառաւորութեան. այս իւրաքանչիւր մասերը առանձին առնելով՝ կը կոչուին ՊՍԱԿ ԿՈՒՍԻՆ

Եթէ օրուան մէջ չկարենանք ամբողջ վարդարանը ըսել, գոնէ

անոր երրորդ մասը՝ որ է ՊՍԱԿ ԿՈՒՍԻՆ ըսելու զանց չընենք։ Վարդարանին աղօթքը ըրած ժամանակնիս, պարզ հայր մերը և ողջոյններն ըսելով չգոհանանք, այլ իւրաքանչիւր տանը յատուկ խորհուրդները մտածենք։

Երկուշաբթի, Երեքշաբթի և Շաբաթ օրերը Ա-ՊՈՍՏՈՂՆԻ ՈՐԻՆՈՒՐԱԾ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՆ։

Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը Ա-ՊՈՍՏՈՂՆԻ ՅՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՆ։

Հինգշաբթի և Կիւրակի օրերն ալ Նուիրուած են Ա-ՊՈՍՏՈՂՆԻ ՓՐԿՈՒԹԻՒՆ։

Ա-ՊՈՍՏՈՂՆԻ ՈՐԻՆՈՒՐԱԾ օրերուն վարդարանին Ա-ՋԷՆ ԴՈՒԸ երբ ըսենք, պէտք է մտածենք Գաբրիէլ հրեշտակին աւետումը առ Ս. Աստուածածին, որով իմացուց իրեն թէ Յիսուսի մայր պիտի ըլլար։

Երէքերորդ դուռը՝ Աստուածածնի այցելութիւնը առ սրբուհին Եղիսաբեթ։

Երրորդ դուռը՝ Յիսուսի Բեթղեհեմի մէջ ծնունդը, հրեշտակաց և հովիւներուն երկրպագութիւնը։

Չորրորդ դուռը՝ Յիսուսի տաճար տարուիլը քառասնօրեայ և հօր Աստուծոյ նուիրուիլը։

Հինգերորդ դուռը՝ Յիսուսի տասներկու տարուան եղած ժամանակ տաճար տարուիլը, հոն՝ կորսուիլը և վերջը տաճարին մէջ գտնուիլը, ուր՝ վարդապետներուն մէջ նստած՝ անոնց հետ կը վիճէր և անոնց կը սորվեցնէր։

Ա-ՊՈՍՏՈՂՆԻ ՅՈՅ օրերուն՝ վարդարանին Ա-ՋԷՆ ԴՈՒԸ երբ ըսենք, պիտի մտածենք Յիսուսի Գեթսեմանի պարտէզին մէջ գետին ինկած աղօթելը ու կրած տագնապը։

Երկրորդ դուռը՝ Յուդայի մատնու-

թեամբ չարագործի մը նման Յիսուսի բռնուիլը, կապուիլը և Պիղատոսի առջև տարուիլը։

Երրորդ դռնը՝ Յիսուսի պսակուիլը փուշերով։

Չորրորդ դռնը՝ Յիսուսի ծեծուիլը, նախատուիլը և խաչը ուսն առած գողգոթա լեռը հանուիլը,

Հինգերորդ դռնը՝ Յիսուսի խաչուիլը երկու աւազակաց մէջ և հոգին աւանդելը։

Ա-ռ-ա-ջ-ի Փ-ա-ս-ք-ի-ն օրերուն՝ վարդարանին Ա-ՋԻՆ դռնը երբ ըսենք, պիտի մտածենք Յիսուսի Յարութիւնը և Աստուածածնի ու առաքեալներուն երեւնալը։

Երկրորդ դռնը՝ Յիսուսի փառօք համբարձումը, քառասուն օր իր աշակերտաց երևնալէն և սրբեցնելէն վերջը։

Երրորդ դռնը՝ Հոգւոյն Սրբոյ գալուստը և Աստուածածնի և առաքելոց վրայ իջնելը հրեղէն

լեզուներով և զանոնք գիտութեամբ լեցնելը։

Չորրորդ դռնը՝ Աստուածածնի փառքով երկինք վերափոխուիլը։

Հինգերորդ դռնը՝ Աստուածածնի երկնքի և երկրի թագուհի պսակուիլը։

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՕԹՆ ՎԻՐԱՑ ՎԱՐԴԱՐԱՆԸ

Բացատրութիւն

Ո՛րչափ ուրախալի է տեսնել թէ՝ բարերարեալ մը իր բարերարին յիշատակը սրտին մէջ ունենալով, ստէպ մտքին առջև կը բերէ, կը գորովի անով, և ուրիշներուն ալ կը պատմէ, մանաւանդ երբ այդ յիշատակները, ուրախալի կամ տխուր, վըսեմ գաղափար մ՝արթնցնեն մարդուս մտքին մէջ, ինչպէս են՝ Յիսուսի, Աստուածածնի և սըրբոց կրած նեղութիւնները, նախատինքները և չարչարանքները, որոնք գերագոյն նպատակի մը համար եղան։

Այսպէս մենք ալ երբ Աստուածածնի վիշտերն յիշելով անոր

աղօթենք և ցաւակից ըլլանք, պիտի տեսնենք որ ինքն ալ մեր վշտաց և նեղութեանց մէջ ո՛չ միայն պիտի մխիթարէ զմեզ, այլ նաև իր հզօր պաշտպանութեամբը պարիսպ և ամրութիւն պիտի ըլլայ մեր հոգւոյն վրայ եղած յարձակումներուն դէմ։

Մենք Աստուածածնի Եօթն վէրայ վերջերը ընելով, անոր եօթը մեծ ցաւերը յիշած և յիշեցուցած կ'ըլլանք։ Շատ բարեպաշտներ ամէն օր այս ջերմեռանդութիւնը կը կատարեն. բայց եթէ կարելի չըլլայ ամէն օր ալ կատարելը, գոնէ շաբթուան մէկ օրը, այն ալ մասնաւորապէս Ուրբաթ օրը անոր յատկացնելու է, յիշելով իւրաքանչիւր տան իր յատուկ խորհուրդը։

Եօթն էյերա- վարդարանին Առաջին դէնը ընելու ժամանակ մտածենք Յիսուսի քառասնօրեայ տանջար տարուիլը, ուր Սիմէոն ծերունին մարգարէանալով ըսաւ. «ասիկա շատերուն իյնալուն և կանգնելուն պատճառ պիտի ըլլայ» և թէ «շատ մը հակառակութիւններ պիտի կրէ»։

Երէրորդ դէնը՝ Նորածին Յիսուսի դէմ եղած թշնամութիւնն ու հալածանքը, որով ստիպուեցան Մարիամ և Ս. Յովսէփ Եգիպտոս փախցնել զինքը։

Երրորդ դէնը՝ Յիսուսի 12 տարուան եղած ժամանակ տաճարին մէջ կորսուիլը և Աստուածամօր տագնապը։

Չորրորդ դէնը՝ Յիսուսի չարչարանքները և խաչը ուսն առած գողգոթա ելլելու ժամանակ Աստուածածնի հանդիպիլը։

Հինգերորդ դէնը՝ Յիսուսի խաչուիլը և խաչին վրայէն «Ահա քու մայրդ և ահա քու որդիդ» ըսելով՝ զմեզ Աստուածածնի պաշտպանութեան յանձնելը։

Վէցերորդ դէնը՝ մեռնելէն վեր-

ջը՝ խաչէն վար առնուիլը և Աստուածածնի յանձնուիլը։

Եօթներորդ դռնը՝ ցիսուսի պատանքով պատուիլը և գերեզման դրուիլը։

ԱՂՕԹՔ

ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ողջ լեր թագուհի, մայր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն և յոյս մեր, ողջ լեր։ Առ քեզ կարդամք վտարանդեալ որդիքս Եւայի. առ քեզ հառաչեմք միշտ հեծութեամբ և լալագին ի հովտէ աստի տրտմութեան և արտասուաց։ Եւ արդ աղէ ով բարեխօս մեր, դարձո առ մեզ զգորովագութ հայեցուածս աչաց քոց, և զՅիսուս զօրհնեալդ պտուղ որովայնի քո՝

յետ աստանօր պանդխտութեանս ցոյց մեզ, ով բարեբարոյ, ով գթած, ով քաղցր և անոյշ կոյս Մարիամ. լեր բարեխօս վասն մեր սուրբ Աստուածածին, որպէս զի արժանաւորք եղիցուք խոստմանցն քրիստոսի։

Ընդ հովանեաւ պաշտպանութեան քո ապաւինիմք սուրբ Աստուածածին, մի՛ անտես առներ զաղաչանս մեր ի կարիս մեր, այլ յամենայն վտանգէ ազատեցո զմեզ մշտակոյս փառաւորեալ և օրհնեալ։

Ո՛վ տիրուհի մեր, ով միջնորդ մեր, ով բարեխօս մեր, ընդ որդւոյ քում հաշտ արա զմեզ, որդւոյ քում յանձն արա զմեզ, և տարեալ կացո զմեզ յանդիման որդւոյ քո։

ԱՂՕԹՔ

Առ սուրբն Դոմինիկոս

Ո՛վ սուրբ Դոմինիկէ, յիշեսջիր զվաստակս քո առաջի Քրիստոսի. և աղաչեա զնա վասն թափուր ի բարեաց ժողովրդեան քո. – Ամէն։

Արժանի արա զմեզ փառաւորել զքեզ Կոյս ամենօրհնեալ։

– Եւ տուր մեզ զօրութիւն ընդդէմ թշնամեաց քոց։

Բարեխօս լեր վասն մեր ով երանելի Դոմինիկոս։

– Զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի։

Փրկեա Տէր զծառայս քո և զաղախնայս։

– Աստուած մեր զյուսացեալքս ի քեզ։

Լեր մեզ Տէր աշտարակ հզօր։

– Յերեսաց թշնամւոյն։

Տէր լուր աղօթից մերոց։

– Եւ աղաղակ մեր առ քեզ եկեսցէ։

Զմաղթանս ծառայից քոց լուր մարդասէր տէր. որպէս զի ժողովեալքս ի կատարել զյիշատակ սրբուհւոյ Աստուածածնի, նորին բարեխօսութեամբն ազատեսցուք ի հասեալ նեղութենէս. – Ամէն։

Աստուած ամենակալ, խընդրեմք ի քէն, տուր մեզ, զի որ ծանրանցեալքս եմք մեղօք մերձ յընկղմել, բարեխօսութեամբ երանելւոյ Հօրն մերոյ Դոմինիկոսի խոստովանողին քո, և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, յարուցեալ կանգնեսցուք. – Ամէն։

Ամենակալ և անսկիզբն Աս-

տուած, որ տէրդ ես ամենայն իշխանութեանց և պետութեանց, նայեա յօգնութիւն հաւատացեալոց. զի ազգք անհաւատից և հերձուածողաց՝ որք սպառնացեալ ի վերայ մեր խրոխտան, ընդ ամենազօր աջովդ ընկճեսցին. — Ամէն։

Նայեա տէր յաղօթս մեր, և ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան և փրկութեան. որպէս զի և յելս մեր յաստեաց քև յերկնաչու ճանապարհին պաշտպանեալ լիցուք. — Ամէն։

Արձակեա տէր զհոգիս ամենայն հաւատացեալ ննջեցելոց յամենայն կապանաց մեղաց, զի ընդ սուրբս քո յարուցեալս ցընծասցեն ի յաւիտենական փառսն Քրիստոսիւ Յիսուսիւ տերամբ մերով. — Ամէն։

Օգնականութիւնն Աստուծոյ եղիցի ընդ մեզ հանապազ. — Ամէն։

Ողջոյն ընդ քեզ Մարիամ, տիրուհի երկնաւորաց, մայր թագաւորին հրեշտակաց, ծաղիկ կուսանաց. որպէս զվարդ և զշուշան՝ սփռեա զաղաչանս մեր առաջի որդւոյ քո վասն փրկութեան հաւատացելոցս. — Ամէն։

Օրհնեսցէ զմեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին հանդերձ բարեգութ որդւովն իւրով։ — Ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

ԼՕՐԵՏԵԱՆ

Որ ի սուրբ տան Կոչսին ի Նազարէթ

Տէր ողորմեաց.
– Քրիստոս ողորմեաց։
Քրիստոս լուր մեզ.
– Քրիստոս ունկն դիր մեզ։
Հայր երկնաւոր Աստուած.
– ողորմեա մեզ։
Որդի փրկիչ աշխարհի Աստուած. ողոր։
Հոգիդ սուրբ Աստուած. ողոր։
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած. ողոր։
Սրբուհի Մարիամ. աղաչեա վասն մեր։
Սուրբ Աստուածածին. աղա։

Սուրբ կոյս կուսանաց. աղա։
Մայր Քրիստոսի. աղա։
Մայր աստուածային շնորհաց. աղա։
Մայր մաքրութեան. աղա։
Մայր զգաստութեան. աղա։
Մայր անարատ. աղաչեա։
Մայր ամբիծ. աղա։
Մայր սիրելի. աղա։
Մայր սքանչելի. աղա։
Մայր արարչին. աղա։
Մայր փրկչին. աղա։
Կոյս իմաստուն. աղա։
Կոյս գերյարգոյ. աղա։
Կոյս գերահռչակ. աղա։
Կոյս կարող. աղա։
Կոյս բարեգութ. աղա։
Կոյս հաւատարիմ. աղա։
Հայելի արդարութեան. աղա։
Աթոռ իմաստութեան. աղա։
Պատճառ մերոյ խնդութեան. աղա։

Անօթ հոգևորական. աղա։
Անօթ պատուական. աղա։
Անօթ չքեղ՝ եռանդեան. աղա։
Վարդ խորհրդական. աղա։
Աշտարակ դաւթեան. աղա։
Աշտարակ փղոսկրեայ. աղա։
Տաճար ոսկեղէն. աղա։
Տապանակ ուխտի. աղա։
Դուռն երկնից. աղա։
Աստղ առաւօտեան. աղա։
Բժշկութիւն հիւանդաց. աղա։
Ապաստան մեղաւորաց. աղա։
Մխիթար վշտացելոց. աղա։
Օգնական քրիստոնէից. աղա։
Թագուհի հրեշտակաց. աղա։
Թագուհի նահապետաց. աղա։
Թագուհի մարգարէից. աղա։
Թագուհի առաքելոց. ապա։
Թագուհի մարտիրոսաց. աղա։
Թագուհի խոստովանողաց. աղա։
Թագուհի կուսանաց. աղա։
Թագուհի ամենայն սրբոց. աղա։

Թագուհի զերծ ի սկզբնա-
կան մեղաց. աղա։
Թագուհի խաղաղութեան. աղա։
Պահպանիչ որդեգրաց. աղա։
Գառն Աստուծոյ, որ բառնաս
զմեղս աշխարհի.
– Խնայեա ի մեզ տէր։
Գառն Աստուծոյ, որ բառնաս
զմեղս աշխարհի.
– Լուր մեզ տէր։
Գառն աստուծոյ, որ բառնաս
զմեղս աշխարհի.
– Ողորմեաց մեզ։
Քրիստոս լուր մեզ.
– Քրիստոս ունկն դիր մեզ։

ԱՂՕԹՔ

Անճառելիդ Աստուած ողորմութեամբ, որ յանձն առեր ոչ միայն մարդանալ, այլ և որդի մարդոյ լինել. և ծնընդեամբ ի սուրբ կուսէ՝ մայր քեզ ունել կամեցար՝ որ զԱստուած ունէիր հայր յերկինս։ Տուր մեզ աղերսեմք՝ զտիրամօրդ յիշատակ սրտի մտօք քարոզել, զաստուածամայրութիւն նորա գերազանց մեծարանօք պատուասիրել. նորին գերահրաշ մեծութեան խոնարհութեամբ զմեզ ներքոյ արկանել. որ զքեզ հոգւով սրբով յղացաւ, զքեզ կուսութեամբ ծնաւ, և զքեզ յերկրի հպատակօրէն հնազանդ զաւակ ունել արժանի եղև՝ զտէրդ մեր Յի-

սուս Քրիստոս. որ կենդանի թագաւորդ ես ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյն յաւիտեանս. — Ամէն։

Պատրաստուրիւն Ս. Պատարագի

Քրիստոս Տէրն մեր իր անսահման սէրը ցուցնելու համար, պատարագի Ս. խորհուրդը հաստատեց, պատուիրելով նաև իր Առաքեալներուն որ միշտ կատարեն զայն իր մահը յիշելով, զոր մեր փրկութեան համար յօժարութեամբ յանձն առաւ։

Քրիստոսի ամբողջ չարչարանաց յիշատակը՝ սկսեալ Գեթսեմանի պարտէզին մէջ կրած լքումէն մինչև խաչին վրայ անարգական մահով մեռնիլը և իբրեւ սոսկական մարդ մը գերեզման դրուիլը, իրապէս կը կատարուի ամէն օր մեր խորանոներուն վրայ պատարագիչ քահանային ձեռքով։ Երբ մեր փրկիչը պարգևէս մեր հոգւոյն փրկութեան համար այսչափ նեղութիւն յանձնն առաւ, և արքայութեան

համբաւ բոլորովին ապահովելու համար ցոյց տուաւ մեզի կեանքանութեան աղբիւրը, որուն միջոցով կրնանք դիւրութեամբ իրեն մօտենալ՝ մեր հոգւոյն ծարաւը լեցնելու, զօրանալու ու ամէն տեսակ փորձութեանց դէմ կռուելու համար, ուրեմն մեզի կը մնայ անկէ օգտուիլը. և եթէ այդ փրկարար շնորհքէն զըրկուինք՝ ուրիշ պատճառներ չրերենք զմեզ արդարացնելու բայց միայն մեր անհոգութիւնը և ծուլութիւնը, որով մենք մեր ձեռքովը գրած կ'ըլլանք մեր դատավճիռը։

Աստուածային արդար բարկութիւնը, որ մեր նախահօր անհնազանդութեամբը մարդկութեան վրայ ծանրացաւ, հին կտակարանին նախահարք հաշտեցնելու համար շատ տեսակ և հանդիսաւոր ողջակէզներ կ'ընէին. սակայն անոնք անբաւական էին պատիժը վերցնելու, վճիռը միշտ վճիռ կը մնար, մարդկութիւնը դատապարտուած էր զրկուած մնալու յաւիտենական երջանկութենէն և Աստուծոյ տեսութենէն, և կարելի չէր ջնջել այդ դատակնիքը։ Բայց Յիսուսի անսահման սէրը կրցաւ զայն մեր վրայէն վերցնել, իր անձը իբրեւ անմեղ գառնուկ մը մեզի համար զոհելով խաչին վրայ, և այս նոյն անմեղ գառն է որ կը զոհուի մեր փրկութեան համար մեր խորանները վրայ։ Մտածենք անգամ մը թէ երբ պատարագի Ս. Խորհրդոյն ներկայ կը գտնուինք, ի՞նչ մեծ զոհ մ'է որ կը կատարուի հոն՝ քահանային ձեռքով, և մենք ի՞նչ եռանդ, ի՞նչ պատկառանք, և ի՞նչ ամփոփածութիւն պէտք է ունենանք, և թէ ո՞րչափ շնորհքներ կրնանք ընդունիլ, եթէ ուշադիր մտքով և եռանդուն սրտով այդ աստուածային սարսափելի զո-

հին հետեւիմք։ Շատ բարեպաշտ քրիստոնեաներ ամէն օր ո՛չ թէ մէկ՝ այլ քանի մը պատարագի ներկայ կ'ըլլան, և այն թանկագին վայրկեանները արդիւնաւոր կերպով կ'անցնեն. ինչպէս շատ սուրբեր և սրբուհիներ, երբ պատարագէն վերջը եկեղեցիէն կ'ելլէին, բոլորովին այլակերպուած և լուսաւորուած կ'ըլլային, ինչ որ արտաքսպէս ալ կը տեսնուէր։ Դու ալ անոնց օրինակին հետեւէ, և չանա՛ որ չանցնես օր մը առանց պատարագ տեսնելու. իսկ եթէ առիթը կամ այդ դիւրութիւնը չունիս, գոնէ Եկեղեցւոյ պատուիրանին համաձայն՝ ամէն կիւրակի և տօնի օրեր պէտք է ներկայ գտնուիս Ս. Խորհրդոյն, որով թէ պատարագին Ս. շնորհքներէն չես զրկուիր և թէ Եկեղեցւոյ պատուիրանը պահելով մահուչափ չես մեղանչեր։

ԱՂՕԹՔ

Պատարագին առաջ

Եկած եմ ահա, ով երկրպագելի փրկիչս, Ս. խոնարհաբար առջև՝ ներկայ ըլլալու քու աստուածային զոհիդ։ Արժանի ըլլ զիս այն բոլոր բարիքներուն և հոգևոր պտուղներուն, որոնք քու ջերմեռանդներուդ կուտաս։

Աստուած իմ, պատրաստէ սիրտս քու բարութեանդ անուշ արդիւնքներն ընդունելու. օրհնէ՛ ու սրբէ իմ միտքս ու ըզգայարանքներս, մաքրէ հոգիս ու ջնջէ քու սուրբ արեամբդ բոլոր մեղքերս. մոռցիր բոլորը, ով բարեգութ Աստուած, քու սիրոյդ համար անոնցմէ կը զզուիմ, և խոնարհաբար թողու-

թիւն կը խնդրեմ։ Դիտաւորութիւններս քուկինիդ հետ միացնելով, իմ անձս քեզի կը նուիրեմ, ինչպէս դուն ինքզինքդ բոլորովին ինծի համար նուիրեցիր։

Պատարագի սկզբնաւորութեան ժամանակ

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն.

Երկրպագելի և Ամենասուրբ Երրորդութիւն, քու շնորհքովդ այսօր ներկայ կ'ըլլամ այս ամենասուրբ և երկնային խորհրդոյս՝ ընծայելու համար քեզի պարտուպատշաճ մեծարանքն ու պատիւը. թոյլ տուր որպէս զի դիտաւորութեամբս միանամ Ս. խորանիդ պաշտօնէին հետ, մատուցանելու համար քեզի իմ

փրկութեանս թանկագին զոհը այն զգացումներով՝ զոր պիտի ունենայի Գողգոթային վրայ, ուր կատարուեցաւ վշտաչարչար ողջակէզդ։

«Խոստովանիմ առաջի Աստուծոյ»

Բոլոր գործած մեղացս համար յանցաւոր եմ քու առջեւդ, ով Աստուած իմ, և կը խոստովանիմ թէ մեղանչած եմ մտածութեամբ, խօսքով, գործով, և անհոգութեամբ. այսուհետև կը խոստանամ ա՛լ չմեղանչել։

Դուք ալ, ով սուրբ Աստուածածին և համօրէն երկնային սուրբեր և հրեշտակներ, այս իմ խոստմանս վկայ եղէք և ընդունեցէք ինծի համար պէտք եղած շնորհքները։

Տէր իմ, լսէ քու անհուն ողորմութեամբդ իմ աղաչանքներուս և տուր թողութիւն և արձակումն բոլոր մեղքերուս։

«Ի յարկի սրբոչբեան»

Այս վայրկենէս ես ալ, Աստուած իմ, միացած սրտովս և հոգւովս քու սրբութեան պաշտօնէիդ հետ՝ կը բարձրանամ խորանին վրայ, նուիրելու հոն քեզի ինքզինքս, ինչպէս դու նուիրեցիր զքեզ ինծի համար երկնաւոր Հօրդ։ Այս օրուան տօնին (կամ սրբոյն) յիշատակովը վառուած՝ կ'օրհնեմ ու կը փառաւորեմ զքեզ, և կը խընդրեմ որ օրհնես զիս, օրհնես իմ բոլոր իղձերս, մտածութիւններս և գործերս, որպէս զի կարենամ առանց մեղաց և սրբութեամբ

անցնել այս օրս և արժանի ըլլալ քու սուրբ շնորհքներուդ։

«Օրհնեալ թագաւորութիւն»

Ո՛վ փրկիչ աշխարհի և հոգւոյս, դու որ երկնքի և երկրի խաղաղութիւն եղար, կ'օրհնեմ զքեզ, Տէր իմ, երկրպագելով քեզի, խոնարհաբար քու սուրբ շնորհքներդ կը խնդրեմ. կ'ուրախանամ գերագոյն փառացդ մէջ տեսնելով և խոստովանելով ըզքեզ ճշմարիտ Տէր, մշտնջենաւոր քահանայապետ, ամենաբարի Հայր, ողորմած Աստուած և ամենակարող Արարիչ։

Միածին Որդի Հօր Աստուծոյ երկրպագելի Յիսուս իմ, կը ճանչնամ զքեզ Աստուած և Տէր ամէն բանի, որ եկար աշխարհիս բոլոր մեղքերը քաւելու իբ-

րև անարատ Գառնուկ մը. նայէ՛ գթութեամբ իմ վրաս երկնքէն, ուր Հօր Աստուծոյ և ամենասուրբ հոգւոյն հետ կը թագաւորես յաւիտեան։

Աստուած իմ, պարգևէ ինծի Ս. Աստուածածնի և բոլոր սրբոց բարեխօսութեամբն այն բոլոր շնորհքները որ քու խորանիդ պաշտօնեան կը խնդրէ քեզմէ իր անձին և մեզի համար. միևնոյն բարիքները և շնորհքները կը խնդրեմ նաև բոլոր անոնց համար, որոնք ինծի աղօթք յանձնած են, որպէս զի կարենանք ամէնքս ալ քու օգնութեամբդ փրկուիլ և ժառանգել յաւիտենական կեանքը։

«Զի քո է կարողութիւն»

Զեմ գիտեր ինչպէս շնորհակալ ըլլալ քեզի, Աստուած իմ,

որ արժանի ըրիր զիս այս Ս. Պատարագին ներկայ ըլլալու, որով հրեշտակներուն ձայնակից եղած կը փառաբանեմ քու երեքսրբեան տէրութիւնդ. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ ողորմեա մեզ»։

Գթա՛ և ողորմէ՛ ինծի, ո՛վ ամենասուրբդ Աստուած, ներէ՛ իմ բոլոր յանցանքներուս՝ որ քեզի դէմ գործեցի. զօրացո՛ւր իմ տկարութիւնս՝ որ կարենամ անթերի կերպով կատարել վիճակիս բոլոր պարտքերը. լեցո՛ւր զիս քու սուրբ շնորհքներովդ, որպէս զի քեզմով զօրացած՝ արիանամ ամէն տեսակ փորձութեանց դէմ, ու աշխարհիս վրայ ծառայելով քեզի քրիստոնէաբար, գամ երկինքը վայելելու քու անճառելի սէրդ ու անբաւ բարիքներդ։

«Զի ողորմած և մարդասէր ես»

Աստուած իմ, քու օրէնքներդ և հրամաններդ պահելու և յաւիտենական երջանկութեան հասնելու համար զիս կոչեցիր և շատ մը խաւարի մէջ ապրող հոգիներէն վերադաս համարեցար. ուստի ես ալ բոլոր սրտովս մտիկ կ'ընեմ աստուածային օրէնքներուդ և սուրբ հրամաններուդ, որոնք մարգարէներուն և առաքեալներուն բերնով յայտնեցիր, և այդ հրամանները կատարելուն մէջ պիտի գտնեմ հոգւոյս հանգիստը և ուրախութիւնը:

Ճշմարտապէս համոզուած եմ, Աստուած իմ, թէ մարգարէութիւնները և առաքելոց գրքերը որ հիմա կը կարդացուին, ուրիշ հոգւով կամ դիտաւորութեամբ

գրուած չեն, բայց եթէ մեր փրկութեանը համար, և կը հաւատամ թէ անոնց հեղինակը մարդ չէ՝ այլ ինքն Հոգին սուրբ:

«Աւետարանը կարդալեն առաջ»

Աստուած իմ, այլ ես ոչ Մարգարէներդ և ոչ Առաքեալներդ են՝ որ ինծի պիտի սորվեցնեն իմ պարտքերս, այլ քու միակ Որդիդ Յիսուս Քրիստոս, իր Ս. Աւետարանին միջոցաւը, որուն իւրաքանչիւր բառերուն կ'ուզեմ ուշադիր ըլլալ. օգնէ ինծի, Տէր իմ Յիսուս, և եթէ ո և իցէ տարակոյս ունենամ, լուսաւորէ միտքս՝ որպէս զի ուղիղ հասկնամ քու աստուածային խօսքերդ, և անոնց մէջ պահուած թաքուն իմաստներէն հոգւոյս փրկութեան համար խրատ-

ներ քաղեմ և չշեղիմ անոնցմէ մինչև մահուանս օրը։

Դիտողութիւն

Ուշադրութեամբ մտիկ ընելու է Ս. Գրքին և Աւետարանին. ընթերցման ժամանակ ոտքի կանգնած, պատկառանքով լսելու է Աստուծոյ պատգամը, խրատները և պատուէրները, և վերջը ցած ձայնով ըսելու է քահանային հետ «Հաւատամքը», որուն մէջ բովանդակուած են մեր սուրբ կրօնքին բոլոր ճշմարտութիւնները։

«Հանգանակ հաւատոյ»

Հաւատամք ի մի Աստուած Հայրն ամենակալ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և անտեսանելեաց։ Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստու-

ծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, նախ քան զամենայն յաւիտեանս։ Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ. Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն համագոյակից Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և անտեսանելիք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։ Որով էառ մարմին, հոգի, միտս և զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս՝ նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին

մարմնոյն և փառօք Հօր ի դա-
տել զկենդանիս և զմեռեալս,
որոյ թագաւորութեան ոչ գոյ
վախճան։ Հաւատամք և ի սուրբ
Հոգին, յանեղն և ի կատարեալն
որ ի Հօրէ և յՈրդւոյ բղխի։ Որ
խօսեցաւ յօրէնս և ի մարգա-
րէս և յաւետարանս, որ էջն ի
Յորդանան, քարոզեաց յառա-
քեալսն, և բնակեցաւ ի սուրբսն։
Հաւատամք և ի մի միայն յընդ-
հանրական և առաքելական եկե-
ղեցի. ի մի մկրտութիւն, յա-
պաշխարութիւն, ի քաւութիւն
և ի թողութիւն մեղաց, ի յա-
րութիւն մեռելոց, ի դատաս-
տանսն յաւիտենից հոգւոց և
մարմնոց, յարքայութիւն երկնից
և ի կեանսն յաւիտենականս.
ամէն։

«Հաւատամքին վերջը»

Ով Աստուած ամենակարող և
յաւիտենական, անարժան եմ
քու առջևդ երևնալու, բայց
վստահ քու ներողամտութենդ՝
կը համարձակիմ քահանային
ձեռքով քեզի մատուցանել այս
սուրբ զոհը, այն դիտաւորու-
թեամբ՝ որ ունեցաւ Յիսուս
փրկիչս Ս. խորհուրդը հաստա-
տելու ժամանակ, որ հոս հիմակ
Ս. խորանին վրայ ինձի համար
կը զոհուի։

Քեզի կը մատուցանեմ, ճանչ-
նալով քու գերագոյն իշխանու-
թիւնդ՝ իմ և բոլոր ստեղծուածոց
վրայ, քեզի կը մատուցանեմ
մեղացս քաւութեան համար և
ի նշան շնորհակալութեան, որ
բարիքներովդ և շնորհքներովդ
զիս լեցուցիր։

Վերջապէս քեզի կը մատուցանեմ, Աստուած իմ, այս երկնային զոհը, խնդրելով քեզմէ՝ ինծի, ծնողաց, բարեբարաց, բարեկամաց և թշնամեաց համար անվախճան բարիքներդ։

Մի՛ մոռնար, Աստուած իմ, թէ քու և թէ իմ թշնամիներս. գթա՛ և ողորմէ բոլոր անհաւատներուն, հերետիկոսներուն և մեղաւորներուն. սփռէ օրհնութիւնդ անոնց վրայ՝ որոնք զիս կը հալածեն, և իմ մեղաց ալ թողութիւն տուր, ինչպէս ես ալ կը ներեմ և պիտի ներեմ այն ամենուն, որոնք ինծի չարիք ըրած են կամ կ'ուզեն ընել։

«Եւ ընդ սերովբէան»

Ահաւասիկ երկնքի և երկրի թագաւորին երևնալու ժամանակը կը մօտենայ. Տէր, զիս քու հոգւովդ լեցուր, որպէս զի սիրոս բաժնուի երկրաւոր բաներէ և միայն զքեզ մտածէ։ Կ'իմանամ՝ թէ ո՛րչափ պարտական եմ զքեզ օրհնելու և ամէն տեղ քու անունդ փառաւորելու։

Զկայ աւելի սուրբ և աւելի օգտակար բան մը՝ քան Յիսուսի Քրիստոսի հետ միանալ և անոր յարատև երկրպագութիւն ընել. ասոր համար բոլոր սուրբերը քու աստուածութեանդ առջեւ կը խոնարհին, հրեշտակները և երջանիկ հոգիները երկինքը միշտ կ'երկրպագեն. ինծի ալ թոյլ տուր, Տէր իմ, որ ես ալ մերկանալով իմ տկարութիւններէս միանամ երկնային հոգիներուն, և անոնց հետ միասին երգեմ սրբասացութիւնը։

ԳԻՏԵԼԻՔ

«Առէք կերայք»էն առաջ

Այս վայրկենիս բարձրացիր մտքովդ մինչև երկինք Աստուծոյ փառաց և մեծվայելչութեան աթոռին առջև, և հոն սերովբէից և քերովբէից գունդին մէջ խառնուած, ահիւ և պատկառանքով միացուր սրտիդ եռանդագին օրհնութիւնները անոնց երգերուն հետ՝ ըսելով.

«Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քո, օրհնութիւն ի բարձունս, օրհնեալ որ եկիր և գալոց ես անուամբ Տեառն. ովսաննա ի բարձունս»։

Գիտելիք

Այս միջոցիս՝ ըստ կարելւոյն՝ պէտք է շատ երկիւղած և ամ-

փոփ կենայ, գիտնալով թէ այս վայրկենիս է որ երկնքի և երկրի փրկիչը կ'իջնէ իր աստուածային փառքովը մեր խորանին վրայ. հացը և գինին՝ քահանային սըրբագործութեան խօսքերովը՝ կը փոխուին ու կ'ըլլան ճշմարիտ մարմինը և ճշմարիտ արիւնը մեր փրկչին։ Ուստի՝ ի պատիւ Յիսուսի և միանգամայն հաւատդ աւելի ևս զօրացնելու համար՝ ըրէ՛ հետևեալ համառօտ ՀԱՅԱՆ ՍՂՕՐԴՆԵՐԸ

Սկզբնական աղօթքներ

Տէր իմ, հաւատքս զօրացուր, Աստուած մեղաւորիս ներէ։ Յիսուս իմ, կը սիրեմ զքեզ, Յիսուս, իմ օգնականս, փրկիչս և Տէրս։ Յիսուս, իմ սէրս։ Յիսուս, ճշմարիտ զառն Աստուծոյ։ Յիսուս, իմ փրկութեանս միակ

զոհը։ Արդարութեան արեգակը, Տէր Յիսուս։

«Եւ զքոյս ի քոյոցս»

Ես խեղճ մեղաւորս ի՞նչ ունիմ, ով բարեգութ Տէր, որ կարենամ արժանաւոր նուէր մ'ընել քու անհուն մեծութեանդ, փոխանակ այնչափ մեծամեծ բարիքներուն՝ որոնցմով լեցուցիր զիս։

Ահա խորանին վրայ կը զոհուի քու Միածին Որդիդ և իմ ամենասիրելի փրկիչս, զինքը քեզի կ'ընծայեմ, իրեն հետ ընծայելով նաև հոգիս, միտքս ու սիրտս, զորոնք դու ստեղծեցիր ու ինծի պարգևեցիր. «Եւ զքոյս ի քոյոցս քեզ մատուցանեմ»։

Ուստի կ'աղաչեմ, Հայր բա-

րեգութ, Յիսուսի չարչարանաց, խաչելութեան ու մահուան համար մի յիշեր իմ չարութիւններս, ներէ՛ ու հաշտուէ՛ հոգւոյս հետ, ինչպէս զիս հայրաբար որ միշտ աճելով ու զարգանալով շնորհացդ մէջ, հոս և անդին փառաւորեմ զքեզ յաւիտեան։

Մասնաւոր կերպով քու պաշտպանութեանդ կը յանձնեմ, Աստուած իմ, այն ամէնքը որոնք սորվեցուցին ինծի ճշմարտութիւնը, արդարութիւնը, աստուածսիրութիւնը և աղօթասիրութիւնը. զարձեալ այն ամէնքը՝ որոնք այս սուրբ պատարագիս կը մասնակցին իրենց ներկայութեամբը, և մասնաւորապէս... (Այս տեղ անուններով կրնաս յիշել քու ծնողքդ, սիրելիներդ, և այլն)։ Որպէս զի, Աստուած իմ, նուէրս աւելի ընդունելի և ախորժելի ըլլայ քեզի, կը միանամ հոգւովս Ամենօրհնեալ Աստուածածնին, բոլոր առաքելոց, մարտիրոսաց և համօրէն սրբոց հետ զքեզ օրհնելու և փառաբանելու։

«Որպէս զի եղիցի սա»

Փրկիչ իմ Յիսուս, ճշմարիտ Աստուած և կատարեալ մարդ, կը հաւատամ բոլոր հոգւովս թէ հոս Ս. խորանին վրայ ներկայ ես և խոնարհութեամբ քեզի երկրպագութիւն կ'ընեմ, կը սիրեմ զքեզ բոլոր սրտովս. ինչպէս որ դու իմ սիրոյս համար եկար ինքզինքդ զոհելու, ես ալ պատրաստ եմ քեզի համար իմ անձս զոհելու։

Կ'երկրպագեմ ամենասուրբ և անգին արեանդ, զոր մարդկու-

թեան համար թափեցիր, կը յուսամ և կը խոստանամ թէ այդ արեան կաթիլներուն արդեամբքը պիտի փրկեմ իմ հոգիս՝ որուն համար կը խնդրեմ շնորհացդ օգնութիւնը։

Քեզի կը նուիրեմ իմ անձս, սիրելի Յիսուս, ի նշան երախտագիտութեան քու սիրոյդ՝ որ ինծի համար զքեզ ինծի տուիր պիտի չմոռնամ բնաւ, Աստուած իմ, ինչ որ այս սուրբ և գերազանց խորհրդովս ցոյց տուիր և որուն ականատես եղայ, սկսեալ քու չարչարանքներդ մինչև փառաւոր Յարութիւնդ։

Աստուած իմ յաւիտենական, հիմա՝ որ ես քու անգին շնորհքներուդ արժանացայ, ամենասուրբ զոհիդ միջոցաւ՝ ուրիշներն ալ այս շնորհքին արժանի ըրէ. օրհնէ այն ամէնքը,

որոնք որ Ս. Պատարագիս ներկայ եղան կամ անձամբ կամ սրտով. օրհնէ այն բարեպաշտ քրիստոնեաները, որոնք սուրբ Եկեղեցւոյ գիրկը մեռած են, մասնաւոր կերպով օրհնէ իմ... (Երբ քեզի սիրելի ննջեցեալներ ունիս յիշեա անոնց անուններուն) որպէս զի այս գերազանց զոհին արդեամբը, եթէ քաւարանին մէջ են, ազատին իրենց տանջանքներէն։

Անսահման բարի Աստուած իմ, օր մ՝ալ արժանի ըրէ զիս այդ շնորհքին, որպէս զի երկինք գամ միանալու առաքելոց, մարտիրոսաց և բոլոր սրբոց խումբին, և անոնց հետ զքեզ օրհնեմ յաւիտեան, ամէն։

Այս սուրբ և անմահ պատարագին անհուն արդեամբը յիշէ, բարերար Աստուած, քու

սուրբ կաթողիկէ Եկեղեցիդ, պահէ ու պաշտպանէ զայն ամէն վտանգներէ ու հալածանքներէ։ Ցիշէ ու զօրացուր Եկեղեցւոյ Գլուխը, բոլոր եպիսկոպոսներն ու քահանաները, մասնաւորապէս իմ առաջնորդս, և այն ամէնքը՝ որոնք կը դաւանին քու սուրբ հաւատքդ։

«Լոյս տուր մեզ»

Ո՛րչափ երջանիկ եմ, Աստուած իմ, երկնքին մէջ զքեզ ինձի Հայր ունենալուս համար։ Ո՛րչափ մեծ է սրտիս ուրախութիւնը, երբ կը մտածեմ թէ երկինքը՝ ուր դու կը թագաւորես՝ օր մը իմ բնակութիւնս պիտի ըլլայ։ Թող քու սուրբ անունդ երկրիս վրայ օրհնեալ ըլլայ։ Դո՛ւ միայն թագաւորէ

բոլոր սրտերուն և կամքերուն վրայ։ Մի՛ զլանար, Աստուած իմ, քու որդիներուդ՝ անոնց հարկաւոր եղած հոգևոր և մարմնաւոր սնունդը։

Բոլոր սրտովս կը ներեմ ինձի դէմ գործող ընկերներուս և թշնամիներուս, դու ալ ներէ ինձի, պաշտպանէ զիս փորձութիւններէն և այս ողորմելի կենաց խեղճութիւններէն, պահէ զմեզ մեղքերէ և մասնաւոր կերպով բոլոր չարիքներէն. ամէն։

Գառն Աստուծոյ, ողորմէ ինձի։ Երկրպագելի զոհ փրկութեանս, ազատէ զիս։ Ո՛վ երկնաւոր միջնորդ, արժանի ըրէ զիս արքայութեանդ և շնորհքներուդ, և տուր քու խաղաղութիւնդ։

ԵՐԳ

ԱՌՍ· ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ

Մայր հաւատոյ սուրբ հարս-
[նարան,
Եւ առագաստ գերադրական.
Տուն փեսայիդ անմահական,
Որ զարդարեաց զքեզ անվախ-
[ճան։
Երկրորդ երկինք դու հրաշա-
[կան,
Փառօք ի փառըս բարձրական.
Որ զմեզ ծնանիս լուսոյ նըման,
Աւազանաւդ Որդիական։
Բաշխես ըզհացըդ մաքրական,
Զարիւնդ ըմպել տաս սոսկա-
[կան.
Հանես ի վեր գերաստիճան,
Ցիմանալեացըն զուգական։

Եկայք որդիք նոր Սիոնի
Մատիք առ Տէր մեր սրբութեամբ.
Ճաշակեցէք և տեսէք,
Զի քաղցր է Տէր մեր զօրութեամբ։
Հինն օրինակ քեզ և նշման,
Դու խորանին գերագրական.
Նա խորտակեաց զգրունս անդամանդ,
Դու դրժոխոց զգրունսն ի հիմանց։
Նա բաժանեաց ըզՑորդանան,
Դու զծով մեղաց աշխարհական,
Նըմա Յեսու էր զօրական,
Եւ քեզ Յիսուս Հօր միական։
Հացս այս մարմին է Քրիստոսի,
Բաժակս արիւն նորոյ ուխտի.
Ծածկեալ խորհուրդըն մեծ յայտնի,
Աստուած ի սմա մեզ տեսանի։

Սա է Քրիստոս Բանն Աստուած,
Որ ընդ աշմէ Հօրըն բազմի,
Եւ աստ ի մեզ պատարագի,
Բառնայ ըզմեղըս աշխարհի։
Այն որ օրհնեալ է յաւիտեան,
Հարք և Հոգւովըն միաբան.
Այժմ և յաւէտ և յապագայն,
Եւ յանըսպառ միշտ յաւիտեան.
Ամէն։

«Ի առէրբ ի առէրբ»

Ո՜րչափ գոհ և ուրախ պիտի ըլլայի, ով սիրելի փրկիչ իմ, եթէ ես ալ այն երջանիկ քրիստոնեաներուն թիւէն ըլլայի, որոնք մաքուր խղճով և երկիւղած բարեպաշտութեամբ ամէն օր քու սուրբ սեղանիդ կը մոտենան։ Ի՞նչ մեծ գանձ և բարիք պիտի համարէի ինծի, եթէ

կարենայի այս վայրկենիս ըզ-
քեզ իմ սիրտս ընդունիլ, ըն-
ծայել քեզի իմ յարգանքս ու
մեծարանքս, ու ցոյց տալ իմ
պէտքերս, մասնակից ըլլալ այն
շնորհքներուն, որոնց արժանի
եղան անոնք՝ որ այսօր իրա-
կան կերպով զքեզ ընդունեցան
իրենց սրտին մէջ։ Բայց, ո՜հ,
գիտեմ որ շատ անարժան եմ,
ուստի կը խնդրեմ որ լրացնես,
Աստուած իմ, հոգւոյս պատրաս-
տութեան պակասը, ներես բո-
լոր մեղքերուս, որովհետեւ ես
անոնց վրայ կը զղջամ սրտանց,
գիտնալով որ անոնք քեզի ան-
հաճոյ են. ընդունէ իմ անկեղծ
փափաքներս, որոնցմով կ'ու-
զեմ քեզի նմանիլ, քու մէկ
ակնարկովդ սրբէ զիս, որպէս
զի պատրաստ ըլլամ շուտով և
արժանապէս ընդունելու զքեզ։

Այդ երջանիկ օրուան սպա-
սելով, կը խնդրեմ քեզմէ Տէր
իմ, որ զիս ալ մասնակից ընես
այն արդիւնքներուն, զոր կ'ըն-
դունին այս սուրբ պատարագին
ներկայ եղող բոլոր հաւատա-
ցեալները։ Աւելցուր հաւատքս,
զօրացուր յոյսս, սրբէ սէրս, և
քու սիրովդ լեցուր սիրտս, որ-
պէս զի զքեզ միայն օրհնեմ,
զքեզ միայն մտածեմ և քեզի
համար միայն ապրիմ. ամէն։

«Մարմին քո անապական»

Աստուած իմ, դու որ իմ
փրկութեանս համար ինքզինքդ
զոհեցիր, ես ալ փոխադարձ քու
փառացդ համար իմ անձս կը
նուիրեմ. յօժարութեամբ կ'ըն-
դունիմ այն բոլոր խաչերը՝ որ
ինծի պիտի ղրկես, կ'օրհնեմ

զանոնք և իբր քու ձեռքէդ կ'ընդունիմ և քու խաչիդ կը միացնեմ։ Սուրբ խորհուրդնե-րովդ մաքրուած, սարսափով պիտի փախչիմ և պիտի զգու-շանամ բոլոր մեղքերէն, մաս-նաւորապէս անոնցմէ՝ որոնք ինծի ունակութիւն եղած են։ Հաւատարիմ պիտի մնամ քու օրէնքներուդ, նախընտրելով ա-մէն ինչ կորսնցնել, նեղուիլ, չարչարուիլ, քան թէ զքեզ բար-կացնել։

Դիտելիք

Եթէ խոստովանութեամբ պա-տրաստուած չես զՅիսուս ըն-դունելու, պատարագի այս միջ-ցին ջանա սլաքական աղօթքնե-րով ընդունիլ, գոնէ փափաքով, այն Յիսուսը, որ քու սիրոյդ հա-մար իր կեանքը տուաւ և ըզ-

քեզ սատանային գերութենէն ազատեց։ Շատ սուրբեր և սըր-բուհիներ օրուան մէջ ստէպ կը կատարէին այն հոգեւորական հաղորդութիւնը, որ իրենց մեծ սխիթարութիւն և օգնութիւն կ'ըլ-լար։ Միտդ պահ մը ամփոփէ հաւատոյ, յուսոյ, սիրոյ և զղջման ներգործութիւնները ընելով, և վեր-ջը հետեւեալ աղօթքն ըրէ։

ԱՂՕԹՔ

Հոգեւորական հաղորդութեան

Յիսուս իմ, կը հաւատամ թէ ճշմարտապէս սուրբ Հաղորդու-թեան խորհրդոյն մէջ ներկայ ես, կը սիրեմ զքեզ և կը փա-փաքիմ ընդունիլ զքեզ, եկուր բնակէ իմ հոգւոյս մէջ. կը գըր-կեմ զքեզ եռանդեամբ և կ'ա-ղաչեմ որ զիս չթողուս բնաւ քեզմէ բաժնուելու։

«Որ օրհնես զաշնոսիկ»

Աստուած իմ, օրհնէ զիս և առաջադրութիւններս, օրհնէ ըզմեզ ամէնքս քու պաշտօնէիդ ձեռքով, որպէս զի յաւիտեան օրհնութեանդ և շնորհացդ մէջ մնանք և ապրինք, Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն անունովը։

Բան յաւիտենական, Միածին որդի Հօր և լոյս աշխարհի, դու որ երկնքէն եկար մեզի ուղիղ ճամբան ցոյց տալու, մի թողուր որ նմանիմ այն անհաւատ ժողովրդեան՝ որ չընդունեցաւ ու չճանչցաւ զքեզ իր ճշմարիտ Մեսիան. պահէ զիս, որպէս զի այն դժբախտներուն կուրութեան մէջ չիյնամ, որոնք կ'ուզեն աւելի գերի ըլլալ սատանային, քան թէ քու որդիներուդ խումբին մէջ դասուիլ։

Բանդ մարմնացեալ, խորին և երկիւղած յարգանքով կ'երկրպագեմ քեզի. բոլոր յոյսս քու վրադ դրած եմ, կը ճանչնամ թէ դու ես իմ Աստուածս և միայն քեզմով կրնամ ունենալ հարկաւոր եղած շնորհքները. կ'ուզեմ այս աշխարհիս մէջ ամենայն սրբութեամբ և համբերութեամբ ապրիլ, որպէս զի երկինքն ալ յաւիտեան զքեզ ժառանգեմ. ամէն։

«Օրհնեալ եղերուք»

Շնորհակալ եմ, Տէր իմ, որ արժանի ըրիր զիս ներկայ գտնուելու այսօր, Պատարագի Ս. Զոհին. թերեւս ուրիշներ այս երջանկութիւնը չունեցան. սրբատանց թողութիւն կը խնդրեմ այն բոլոր պակասութեանց հա-

մար, զոր ցրուած և անուշադիր մտքով ըրի։ Աստուած իմ, այս Ս. Պատարագը թող մաքրէ անցած մեղքերս և ապագային համար ալ ուժ տայ որ քաջաբար յաղթեմ ամէն փորձութեանց։ Կը խոստանամ ամէն օր ներկայ ըլլալ քու սուրբ պատարագիդ, և միշտ պիտի յիշեմ այս երկնային շնորհքը որ այսօր ըրիր, և պիտի ջանամ քու խօսքերդ բառ մը և ազդեցութիւն մ'անգամ չկորսնցնել. ալ ուրիշ փափաք և մտածութիւն չունիմ, բաց ի քու շնորհքներդ արդիւնաւոր ընելէ. ահա այս է իմ այսօրուան գլխաւոր առաջադրութիւնս. ամէն։

Դիտելիք

Հաւատացեալ մը ամբողջ պատարագը տեսած ըլլալու համար, պէտք է որ սկիզբէն մինչև վերջը առանց ընդհատելու, անոր ներկայ եղած ըլլայ, կամ գոնէ «օրինեալ թագաւորութենէն» (եթէ կարևոր պատճառով մը ուշացած ըլլայ, նոյն իսկ Աւետարանին ընթերցումէն) մինչև «Եւ սուրբ արիւն», երբ քահանան Յիսուսի ամենասուրբ մարմինը և արիւնը կը նաշակէ։ Եթէ այս ժամանակամիջոցէն աւելի ուշ եկած և կամ շուտ մեկնած ըլլայ, այդ պարտականութիւնը կատարած չըլլար։ Երբ եկեղեցւոյ մէջ մի և նոյն ժամանակ շատ խորանների վրայ պատարագներ ըլլան, և մենք անոնց սկիզբէն մինչև վերջը ներկայ ըլլանք, շատ պատարագներ տեսած չենք

ըլլար, այլ միայն մէկ հատ, անոր՝ որ սկիզբէն մինչև վերջը հետևած ենք. իսկ եթէ միամիտ կերպով շատ արդիւնք վաստկելու կամ շատ պարտականութիւններ մէկ անգամէն կատարած ըլլալու համար, ամէնն ալ մասմաս լսենք և ո՛չ մէկը ամբողջութեամբ, այդ պարագային ո՛չ մէկ պատարագ տեսած կ'ըլլանք։ Լաւ գիտնալու է որ, եթէ կիրակի կամ տօնական օր մը զանց ընենք պատարագի պարտականութիւնը՝ շաբթուան ուրիշ օր մը պատարագ տեսնելով՝ այն պարտականութիւննիս կատարած չենք ըլլար։

Պատարագի ժամանակ կը ընենք կամ Ս. խորհրդոյն յատուկ աղօթքներ ընել (էջ, 152), կամ Ս. Զարդարան ըսել (էջ 102), կամ մտածական ընել, կամ ուրիշ աղօթքներ. ջանալու է որ նիւթական պարտք մը կատարելու պէս Պատարագի ժամանակ անտարբեր չկենանք, եթէ ոչ՝ մտքերնիս կը ցրուի, եռանդնիս կը պակսի, և փոխանակ արդիւնք և շնորհք վաստկելու՝ աւելի յանցաւոր կ'ըլլանք։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱՂՕԹՔՆԵՐ

ԱՂՕԹՔ

Առ Ս. Աստուածածին

Ո՜վ երկնից մեծ թագուհի, խոնարհութեամբ առջևդ ինկած, կը մեծարեմ և կը դաւանիմ զքեզ Երկնաւոր Հօր դուստրը, Աստուծոյ Բանին Մայրը և Սուրբ Հոգւոյն Հարսը։ Դու որ զանձապետ ես և Աստուծոյ ողորմութեանց մատակարարը, քու մաքուր սիրտդ լի է գորովով և սիրով առ մեղաւորս, և ատոր համար Մայր Աստուածային գթոտրեան կը կոչուիս։ Իմ ցաւերուս և վշտերուս մէջ վստահութեամբ քեզի կը դիմեմ, ով

գորովագութ Մայր, և կ'աղաչեմ որ ցոյց տաս ինծի բարութիւնդ, սիրելով և քեզմէ խնդրած շնորհներս ինծի պարգևելով, եթէ անոնք Աստուծոյ կամաց համաձայն և իմ հոգւոյս օգտակար են։ Ա՜հ, կ'աղաչեմ, քու մաքուր ակնարկդ դարձուր իմ վրաս, իմ բոլոր ծանօթներուս և այն ամենուն վրայ, որոնք ինծի աղօթք յանձնած են։ Տես այն սաստիկ պատերազմը, որով սատանայ, աշխարհ և մարմին մեզի հետ կը կռուին և շատերը կը մոլորեցնեն։ Ցիշէ, գորովագութ մայր, որ ամենքս ալ քու որդիքդ ենք և Միածին Որդւոյդ պատուական արեան գինը։ Հաճէ խնդրել եռանդագին ամենասուրբ Երրորդութենէն, որ պարգևէ մեզի իր շնորհքները՝ որպէս զի յաղթենք սատանային, աշ-

խարհիս և բոլոր մեր կրքերուն. տայ նոյնպէս իր շնորհքները, որպէս զի սուրբերը արդարանան, մեղաւորները ապաշխարեն, հերձուածները ընկճուին, անհաւատները լուսաւորուին և հրեայք առ Աստուած դառնան։

Սիրելի մայր, խնդրէ այս շնորհքները Աստուծոյ անհուն բարութենէն, քու ամենասուրբ Որդւոյդ արդեանց համար, այն կաթին՝ որով զինքը սնուցիր, այն տարած խնամքերուդ, թափած արցունքիդ և իրեն չարչարանաց ժամանակ քու կրած ցաւերուդ փոխարէն։ Ընդունէ այս մեծ շնորհքը, որպէս զի բոլոր աշխարհս մէկ հօտ և մէկ հովիւ ըլլայ, փառաւորելու և պաշտելու համար ամենասուրբ Երրորդութիւնը և զքեզ՝ որ մեղաւորներուս միջնորդ և բարե-

խօս ես։ Թող այս շնորհքը մեզի պարգևէ Հօր Աստուծոյ իշխանութիւնը, Որդւոյն իմաստութիւնը և Հոգւոյն սրբոյ զօրութիւնը. Մայր սուրբ, քու որդիներդ ապագայ վտանգներէն պահէ։

Մայր ամենակարող, ողորմէ մեզի։

Կոյս հզօր, մեզի համար աղօթէ։ (Երեք «Ողջոյն քեզ»)։

Հայր յաւիտենական, հաւատացելոց մէջ ծաղկեցուր քու Դստերդ՝ Ս. Կուսին Ջերմեռանդութիւնը։

Որդիդ յաւիտենական, հաւատացելոց մէջ ծաղկեցուր քու Մօրդ Ջերմեռանդութիւնը։

Հոգիդ յաւիտենական, հաւատացելոց մէջ ծաղկեցուր քու ամենամաքուր Հարսիդ Ջերմեռանդութիւնը։ («Փառք Հօր» և այլն)։

Ե Ր Գ

Ա՛ Ս. Աստուածածին

Մայր սուրբ սքանչելի լուսոյն. որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր. և ցնծութիւն աշխարհի ծընար զԲանն Աստուած։ Աղաչեմք։

Մայր սուրբ բարեխօսեա։

Աղաչեա վասն մեր զառ ի քէն ըզմարմնացեալն Աստուած։ Որ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ. էառ մարմին ըստ մարդկային բնութեան. առնել խաղաղութիւն յերկինս և յերկրի. աղաչեմք։

Աղաչեա։ Ներել մեզ անտես առնել զյանցանս մեր. և տալ օգնականութիւն ընդդիմակաց

լինել հակառակամարտիցն ի պատերազմի. աղաչեմք։

Աղաչեա։ Զի լռեսցեն պատերազմունք. դադարեսցին յարձակմունք թշնամեաց. տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի. աղաչեմք։

Աղաչեա։ Աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բղխումն աղբերաց. զառատ պտղաբերութիւն բուսոց և տնկոց. առ ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց. աղաչեմք։

Աղաչեա։ Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ. չինեալ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. պահել անարատ մինչև յօր երևելոյ գալստեան իւրոյ. աղաչեմք։

Աղաչեա վասն մեր սրբուհի զմիածին քո զՈրդին և վասն

հոգւոցն հանգուցելոց ընդունել յարքայութիւն երկնից և տալ մասն և բաժին ընդ սուրբս ամենայն. աղաչեմք:

Ցիշեա Տէր և ողորմեա:

Եւ ես առաւել գյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգևել մեզ խնդրեմք:

Տուր մեզ Տէր Աստուած մեր:

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեա մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, մայր սուրբ բարեխօսեա առ Տէր վասն մեր:

ԵՐԳ

Գովասանաց և պաղատանաց առ ամենասուրբ Աստուածածին

Աղաչեմ զքեզ Աստուածածին,
Որ ես տաճար անեղ Բանին,
Բարձր և պայծառ որպէս զարփին,
Մաղթեա վասն իմ առ քո Որդին:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա.
Աստուածածին բարեխօսեա:

Գոչեմ առ քեզ արտասուագին,
Կոյս Մարիամ տուր զհայցուածս իմ.
Դու ես աթոռ Աստուածային,
Խընդրեա վասն իմ Կոյս տիրածին: Տէր ողորմեա:

Երանելի և հրաշալի,
Դու հրեշտակաց զարմանալի.
ԶԱստուած ծընար մարմնով յերկրի,

Իսկ կուսութիւն քո ոչ խախտի։
[Տէր ողորմեա։
Երանուհի կոյս տիրուհի,
Դու օջարան ես Միածնի.
Ընտրեալ յազգէս հողեղինի,
Թագ և պարծանք քրիստոնէի։
[Տէր ողորմեա։
Թագաւորին մեր Քրիստոսի,
Դու տաղաւար ընդունելի.
Ժուժկալեալ քում յորովայնի,
Առհալ զբնութիւնս հողեղինի։
[Տէր ողորմեա։
Ի հրեշտակաց անհաս էր նա,
Ծընաւ ի քէն վասն Ադամայ.
Լուսածին մայր ի քեզ անկայ,
Բաբունեալոյդ քոյ վասն իմ հայ-
[ցեա։ Տէր ողորմեա։
Խընդրեմք ի քէն կոյս տա-
[լիթա,
Միշտ անդադար բարեխօսեա.
Ծընար զԱստուած որպէս տը-
[ղայ,

ԶՅիսուս Փըրկիչ Տէր և արքայ։
[Տէր ողորմեա։
Կոյսըդ մաքուր և հրաշալի,
Դու գեղեցիկ գեղ գովելի.
Հոտով նըման ես դու վարդի,
Շուշան հովտաց ծաղիկ դաշտի։
[Տէր ողորմեա։
Զայնիւ մաղթեմ արտասուալի։
Յոգնահանճար մեծ թագուհի.
Ղամպար ես դու լուսով միշտ լի։
Հայցեա վասն իմ ով սրբուհի։
[Տէր ողորմեա։
Ճըշմարիտ գեղմն իմանալի,
Զոր է տեսեալ Գեդէոնի.
Մաքուր մարմնով անխախտելի,
Սուրբ կուսութեանդ օրինակի։
[Տէր ողորմեա։
Յորժամ գայցէ քո Միածինն,
Առ ի դատել զազգս երկրածին.
Ներստեալ յաթոռ դատաստանի,
Ի յայն ժամու մաղթեա վասն
[իմ։ Տէր ողորմեա։

Շնորհօք լըցեալ սուրբ Իս-
[կուհի,
Մարմնով քրովբէ հիանալի.
Որ հրեշտակաց ես գովելի,
Եւ հրեղինաց զարմանալի։ Տէր
[ողորմեա։
Զեմ գովելոյ զքեզ արժանի,
Զի դու սըրբոց ես գովելի.
Պարտական եմ ես բիւր չարի,
Եւ զանազան ախտիւք եմ լի։
[Տէր ողորմեա։
Զընչել ըզգիրն իմոյ պարտին
Հայցեա յՈրդւոյդ ով Տիրածին.
Ռետին քաղցու Աստուածածին,
Լուսին պայծառ բոլորովին։ Տէր
[ողորմեա։
Սափոր ոսկի զարմանալի,
Լըցեալ ի քեզ մանանայ լի.
Վեհ քան զերկին գըտար յեր-
[կրի,
Զի էր ստեղծողն ի քում գըրկի։
[Տէր ողորմեա։

Տիրամայր կոյս Աստուածա-
[ծին,
Միշտ անդադար մաղթեա վասն
[իմ.
Բախացո զիս հայցմամբ քոյին,
Զի հայցուածք քո միշտ կատա-
[րին։ Տէր ողորմեա։
Ցանկացայ ես յոլով չարի,
Նոքօք զանձն իմ վիրօք լըցի.
Խիւծեալ եմ արդ վասն իմ չարի.
Անկեալ ի մէջ մեղաց տըղմի։ Տէր
[ողորմեա։
Փութա փըրկել զանկեալ ան-
[ձըն իմ,
Անապական Կոյս Տիրածին.
Քանզի ըզքեզ ինձ յոյս ունիմ,
Առ Որդիդ քո մաղթել վասն իմ։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
[Տէր ողորմեա։
Աստուածածնին բարեխօսու-
[թեամբ,
Ցիշեա Տէր և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Առ պահապան հրեշտակն

Աստուծոյ սուրբ պաշտօնեայ և իմ պահապան հրեշտակս, դու որ իր կողմանէ իմ վրաս միշտ հսկելու համար դրուած ես, կը խնդրեմ որ ուշադիր ըլլաս և հեռացնես ինծմէ այն ամէն փորձութիւնները, որոնց մէջ գիս ձգել կ'ուզէ սատանան իր հազարաւոր միջոցներով. աղօթքներուս և Աստուծոյ հաճոյ գործերուս ժամանակ քաջալերէ գիս և եռանդ տուր, որ աւելի ջերմեռանդութեամբ և սրբութանց ընեմ։ Գիտեմ, ով միակ պաշտպան հրեշտակս, թէ դառն պիտի ըլլայ իմ վիճակս, եթէ քու բարի ազդեցութիւններուդ ուշադիր չըլլամ, ուստի կ'առաջագրեմ ու կը խնդրեմ քեզմէ որ միշտ ազդարարես և յիշեցնես իմ պարտքերս և առաջնորդես միշտ Աստուծոյ ճանապարհին մէջ. որպէս զի անվտանգ հասնիմ երկնից արքայութիւնը և հոն քեզի հետ արժանի ըլլամ օրհնելու մեր Արարիչը։

ԱՂՕԹՔ

Առ Պաշտպան Սուրբն

Այն առաջին վայրկենէն երբ քու անունդ վրաս առի, իմ սիրելի և յարգելի պաշտպանս Ս. . . . ուզեցի քեզի և քու առաքինութիւններուդ նմանիլ, և մինչև վերջն ալ այդ պիտի ըլլայ իմ փափաքս։ Սակայն ես տկար արարած մ'ըլլալով և ունակութիւններուս և կրքերուս

գերի, շատ անգամ կը մոռնամ փրկչիս ինծի համար քաշած նեղութիւնները և չարչարանքները, Ս. Աստուածածնի վշտերն ու ցաւերը, սրբոց կրած հալածանքը և չարչարանքը, և նոյն իսկ քու տառապանքներդ, որ երկնից արքայութեան փափաքով լեցուած, արհամարհեցիր աշխարհիս զուարճութիւնները, փառքերը և տեսակ տեսակ փայլուն խոստումները՝ որոնցմով կ'ուզէր զքեզ իրեն ձգել։ Բայց դու ուզելով յարգել Աստուծոյ տուած քանքարը, և արդիւնաւորել զայն արքայութեան համար, աշխարհիս և մարմնոյն հրապոյրները արհամարհեցիր և շարունակ գերագոյն նպատակիդ դիմեցիր, մինչև որ երկնքին մէջ յաղթական սրբոց կարգը դասուեցար և վարձատրուեցար։

Ուստի ինծի ալ միշտ օգնէ և առաջնորդէ աշխարհիս վրայ, և բարեխօս եղիր երկինքը, որ ես ալ քեզի նման Աստուծոյ ինծի տուած սրբարար շնորհքը արդիւնաւորեմ, և մեռնելու վայրկենիս անվախ անցնիմ յաւիտենականութեան դռնէն, և աչքերս բանամ երկինքը, սրբոց հետ յաւիտեան թագաւորելու, ինծի խոստացուած բարիքը վայելելու և յաւիտեան իմ արարիչս օրհնելու. ամէն։

ԱՂՕԹՔ

Առ Ս. Յովսէփ Աստուածահաճարն

Հօր Աստուծոյ միակ և հաւատարիմ ծառայ իմ պաշտպանս, Ս. Հայր Յովսէփ, ինչպէս որ

Հայրն Աստուած տեսնելով քու հոգւոյդ անմեղութիւնը, իր սիրելի որդւոյն և Աստուածամօր պաշտպանութիւնը քեզի յանձնեց, և Եկեղեցին ալ զքեզ բոլոր քրիստոնէից պաշտպան հռչակեց, ես ալ Եկեղեցւոյ անարժան անդամներէն մին ըլլալով, կը խնդրեմ որ մասնաւոր կերպով զիս ալ քու որդիներուդ և պաշտպանեալներուդ մէջ առնես, և տաս ինծի հոգւոյ անմեղութիւն և սրբութիւն, պաշտպանես զիս աշխարհիս անվայել հաճոյքներէն և մեղանչական հրապոյրներէն, և սիրաս անոնցմէ դատարկելով՝ աստուածային սիրով լեցնես. պաշտպան և բարեխօս ըլլաս միշտ իմ փըրկչիս առջևը, և յիշեցնես անոր՝ թէ ես ալ իր անգին արեամբը գնուած եմ։ Մասնաւոր կերպով

կը խնդրեմ Ս. Հայրդ Յովսէփ, որ ինծի բարի մահ տաս, պահես յանկարծական և եղեռնական մահերէ, որպէս զի ժամանակ ունենամ լաւ պատրաստուելու, և մահուանս անկողնին քով ունենամ Աստուծոյ պաշտօնեան՝ զիս մխիթարելու, քաջալերելու և Ս. խորհուրդներով զօրացնելու. ամէն։

ԱՂՕԹՔ

Առ ամենայն Սուրբս

Աստուած իմ, ամէն ժամանակի և ամէն աստիճանի կամ վիճակի սուրբերուդ բարեխօսութեամբ և միջնորդութեամբ ազատէ բոլոր քաւարանի հոգիները, և շնորհէ անոնց մշտնջենաւոր հանգիստը և արքայու-

թեան վայելքը, որպէս զի արժանի ըլլան հրեշտակաց հետ ըզքեզ օրհնել իրենց անվախճան ուրախութեան մէջ։

Քու սուրբերուդ բարեխօսութամբ շնորհէ նաև անդորրութիւն և բարգաւաճումն Սուրբ Եկեղեցւոյդ, և զօրութիւն՝ ա-նոր զինուորեալ անդամներուն։ Տուր մեզի, նախահարց և ճգնաւորաց միամիտ հաւատքը, մարգարէից, առաքելոց և հայրապետաց աստուածային եռանդը՝ գիտութիւնը և գործունէութիւնը, մարտիրոսաց և խոստովանողաց քաջասրտութիւնը, կուսանաց և մանուկ սուրբերուն անմեղութիւնը, և մանաւանդ երկնքի և երկրի թագուհւոյն ամբիծ մաքրութիւնը՝ իր խոնարհութեան և գերազանց սրբութեան հետ։ Շնորհէ ասոնց բարեխօսութեամբ

և միջնորդութեամբ, այն ամէն բան՝ ինչ որ օգտակար կը տեսնես իմ անձիս, ծնողացս, սիրելիներուս, ծանօթներուս և վերջապէս բոլոր հաւատացելոց հոգւոյն փրկութեան։ Դուք ալ, հին և նոր ուխտի սուրբեր, Նահապետներ, Մարգարէներ, Առաքեալներ, Հայրապետներ, Վարդապետներ, Մարտիրոսներ և Կուսանք, և մանաւանդ, ազգիս միակ և առաջին լուսաւորիչդ՝ Սուրբդ Գրիգոր, սփոեցէք ձեր հովանին և բարեխօսեցէք ինծի և ազգայնոցս համար, որ ճըշմարիտ աստուածսիրութիւնը և ճշմարտութեան եռանդը արծարծի մեր սրտերուն մէջ, որպէս զի հետևինք այն ուղիղ ճանապարհին, որով ամէնքդ ալ հասաք երանութեան օթեւանը, ուր կը վայելէք և կը փառաբանէք

երկնային զուարթնոց հետ մեր Աբարիչը, Փրկիչը և սրբացուցիչ Աստուածը։

ԱՂՕԹՔ

Ապաշխարութեան

Աշխարհ ամենայն,
Առ իս նայեցեալ
Ախտակից լերուք։
Բանամ ըզչըրթունս,
Բարբառիմ լեզուաւս,
Բողոքեմ զանձնէ.
Տէր ողորմեա.
Տէր ողորմեա.
Տէր ողորմեա։
Գող եղէ մեղաց,
Գըտող կորըստեան,
Գուբ ինձ փորեցի։
Դաւեցի զանձն իմ,
Դաւաճանեցի,

Դարան գործեցի. Տէր ող։
Երբեմն էի լոյս,
Եւ այժմ եմ խաւար
Եւ ըստուեր մահու։
Զիարդ պատմեցից
Զթիւ մեղաց իմոց,
Զի բազում են յոյժ. Տէր ող։
Էրկինք եւ երկիր,
Էկայք ողբացէք
Էզկելի զանձն իմ։
Ընտրեցի ըզչարն,
Ընկալայ կամաւ
Ըզհոյլըս մեղաց. Տէր ող։
Թաթաւիմ տըղմով,
Թաւալիմ ի մեղս,
Թօթափել չկարեմ։
Ժանտ ախտիւ լըցեալ՝
Ժահահոտ եղէ
Ժամանակ բազում. Տէր ող։
Ի բաց մեկնեցայ
Ի սուրբ խորհըրդոց,
Ի բարեաց գործոց։

Լաւ վարկաւ անձն իմ
Լուսոյն հեռանալ,
Լինել ընդ խաւար. Տէր ող։
Խորհուրդքը չարին
Խաբեն ըզհոգիս,
Խարասոյզ առնեն։
Ծածկեն անդընդօք,
Ծիծաղին գլորմամբս,
Ծանակ զիս առնեն. Տէր ող։
Կամաւ կորացայ
Կարկամեալ անձամբս,
Կանգնել ոչ կարեմ։
Հուր մեղաց կիզող
Հըրդեհեաց որ յիս
Հոգևոր բարիս. Տէր ող։
Զաղկեցայ մեղօք.
Զաղեցին տեսողք.
Զանձրացաւ հոգիս։
Ղեղի դառնութեան
Ղօղեալ ի սըրտիս,
Ղամբար իմ չիջաւ. Տէր ող։
Ճաշակմամբ մեղաց։

Ճաշեցի ըզմահ,
Ճոխս աղքատացայ։
Մեռեալ եմ հոգւով,
Մոլորեալ մըտօք,
Միայն կամ մարմնով. Տէր ող։
Յորոգայթ մահու
Յորսողին անկայ,
Յաղթեցայ յախտից։
Նետից թըշնամւոյն
Նըշաւակ եղէ,
Նոր միշտ խոցոտիմ. Տէր ող։
Շուրջ պատեալ զինև
Շունք բազում եղեն,
Շաղախին արեամբս։
Որս եղէ չարին,
Ուռկանաւ մեղաց
Որսացաւ զանձն իմ. Տէր ող։
Զարաչար վըշտօք
Զարչարի անձն իմ,
Զունիմ դադարումն։
Պարտապան զըտայ
Պարտուց յանցանաց

Պարտեալս ի մեղաց. Տէր ողջ։
Ջանամ զըղջանալ,
Ջերանիմ դարձեալ,
Ջեռնում հրով մեղաց։
Ռաբբի կոչեցայ,
Ռակայ անուանիմ
Ռամկական վարուք. Տէր ողջ։
Սիրով ցանկութեամբ,
Սաստիկ բարկութեամբ,
Սիրտ իմ խոցեալ է։
Վիրօք յանցանաց
Վըշտանայ հոգիս.
Վարանեալ շըրջիմ. Տէր ողջ։
Տիրեցին ինձ չարք,
Տարագիր հանին
Տիրական գըրկացն։
Բաբունեայն բարեոյ
Բախճական ձայնին
Բոտինս ոչ լըսայ. Տէր ողջ։
Ցանկութիւն չարեաց
Ցանկալի դիմաք
Ցաւեցոյց զաչս իմ։

Իիւրաքանչիւրոց
Իիւսմամբ խուռն ախտից
Իիւծեալ է հոգիս. Տէր ողջ.
Փութացիր անձն իմ
Փախչել ի չարեաց,
Փափաքել բարեաց։
Քեզ միշտ մերձ ծանիր
Քուն մահու եկեալ,
Քընոող դատաւոր.
Տէր ողորմեա.
Տէր ողորմեա.
Տէր ողորմեա։
Աստուածածնին բարեխօսու-
[թեամբն
Ցիշեա Տէր և ողորմեա։

ՍԱՂՄՈՍ

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, և ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ Տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցես ի բանս քո, և յաղթեսցես ի դատելն քո։

Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս Տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան, և հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամպարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ Աստուած Աստուած փրկութեան իմոյ. ցընծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ զչրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր՝ պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ։

Բարի արա Տէր կամօք քովք Սիոնի, և շինեսցին պարիսպքն Երուսաղեմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն։ Այժմ և միշտ։

ՄԱՂԹԱՆՔ

Անկանիմք առաջի քո, Աստուածածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ, բարեխօսեա վասն անձանց մերոց, և աղաչեա ըզՄիածին որդիդ՝ փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

Որ արձակիչդ ես կապելոց՝ պարգևատու ամենեցուն, այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս զբազմամեղս ի կապանաց մահու ի կեանսդ յաւիտենից։

ԱՂՕԹՔ ՆՆՋԵՑԵԼՈՅ

Ալէլուիա, Ալէլուիա։

Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր, Տէր, լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս իմ քննես, Տէր, Տէր, ո՞ կարէ կալ առաջի քո, զի ի քէն է քաւութիւն։

Վասն անուան քո համբերի, Տէր, համբեր անձն իմ բանի

քում, յուսացաւ անձն իմ ի Տէր։

Ի պահէ առաւօտու մինչեւ յե-ռեկոյ, ի պահէ առաւօտու յու-սացաւ Իսրայէլ ի Տէր։

Ի Տեառնէ է ողորմութիւն բա-զում, և ի նմանէ է փրկութիւն, և նա փրկեաց զԻսրայէլ յամե-նայն նեղութեանց նորա։ Փառք Հօր և այլն։

Զհանգիստ յաւիտենական պարգեւեա՛ նոցա, Տէր, և լոյս մշտնջենաւոր ծագեսցի ի նոսա և հանգիցեն ի խաղաղութեան. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Հոգւոցն հանգուցելոց, Քրիս-տոս Աստուած, արա հանգիստ և ողորմութիւն. և մեզ մեղա-ւորացս չնորհեա զթողութիւն յանցանաց։

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիս-տոս, զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ, և զմեզ կեցուսցէ շը-նորհիւ ողորմութեան իւրոյ. ա-մենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա։

Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա։



ԱՂՕԹՔ

Քրիստոս որդի Աստուծոյ, անոխակալ և բարեգութ, գթա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց։ Ցիշեա յաւուր մեծի գալստեան արքայութեան քո. արա արժանի ողորմութեան, քաւութեան և թողութեան մեղաց. դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն. զի դու ես Տէր և արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց և մեռելոց. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Հայր մեր և այլն։

ԱՂՕԹՔ

Քրիստոսի ծննդեան տօնին պատրաստութեան

ԳԻՏԵԼԻՔ

Ի՞նչ կ'ընենք երբ նշանաւոր անձի մը պիտի ներկայանանք։

Ի՞նչ կ'ընենք երբ շքեղ հանդիսի մը հրաւիրուած ենք։

Ի՞նչ կ'ընենք երբ մեր աստիճանէն շատ վեր անձ մը մեզի այցելութեան գալ ուզէ։

Քրիստոս՝ որ բոլոր արարածներուն տէրն է, բոլոր թագաւորներէն աւելի մեծ և կարող և տիեզերքիս Արարիչը, մեր փրկութեան հոգն իր վրայ առնելով եկաւ աշխարհք՝ իբր մանուկ մը ծնաւ, կրելով ամենէն աւելի անտանելի նեղութիւնները և զրկանքները՝ որ հագիւ ադքատի

մը զաւակը կրնայ կրած ըլլալ, օտարութեան մէջ, առանց ո՛և է պատսպարուելու միջոց մը ունենալու, ողորմելի մսուրի մը մէջ, քիչ մը յարդ իրեն բարձի և անկողնի տեղ ծառայելով. և մարդիկներէն ո՛չ ոք իրեն կարեկից կամ ուրախակից ունեցաւ, այլ միայն հրեշտակներն էին՝ որ իրենց արարչին փառքը երգեցին, և տգէտ հովիւները՝ որ առաջին երկրպագութիւնն ընին։ Այս փառաւոր և գորովալից հանդէսն է՝ որ պիտի կատարենք, այս մեծ թագաւորն է՝ որ պիտի հիւրասիրենք. բայց այս թագաւորը մեզմէ ոչ ընծաներ չպահանջեր, մեզմէ շքեղ հանդէսներ չուզեր, այլ մաքուր և պատրաստ սիրտ մը, անկեղծ հաւատք մը և եռանդուն սէր մը. ու երբ մեր մէջ գտնէ այդ դոյզն պատրաստութիւնը, սիրով կու գայ բնակելու մեր հոգւոյն մէջ

և տալու այն բոլոր շնորհքները՝ որոնց պէտք ունինք։

Նախ՝ Քրիստոսի սուրբ Ծնընդեան պատրաստուած կ'ըլլանք, երբ մեր հոգին զօրացնենք Եկեղեցւոյ փրկարար խորհուրդներով, որ առաջին և կարևոր պայմանն է։

Երկրորդ՝ բարեպաշտական գործ մը կատարած կ'ըլլանք և միանգամայն սիրուն ջերմեռանդութիւն մը, եթէ Քրիստոսի ծննդեան համար մասնաւոր սահմանուած համառօտ 25 օրեայ կրթութիւնը կամ աղօթքն ընենք՝ իբր պատրաստութիւն մեր փրկիչը աւելի արժանաւոր կերպով ընդունելու։

Ի՞նչ ուրախալի է տեսնել ընտանեաց մէջ հայր մը, մայր մը, եղբայրներ և քոյրեր, որոնք միացած իրենց սիրելիներուն հետ, ամփոփ կերպով ծնրադրած սրբազան պատկերի մը առջև,

կը կատարեն իրենց այս ջերմեռանդութիւնը, հրաւիրելով Աստուծոյ օրհնութիւնն ու բարիքները իրենց վրայ. և այն Աստուածը՝ որ խոստացած է իրեն դիմողները չմերժել, ըսելով. «Թնդրեցէք և պիտի առնուք», անկարելի է որ այսպիսիներուն խնդրուածքը չլսէ ու չկատարէ։

Ծննդեան պատրաստութեան 25 օրեայ ջերմեռանդութիւնը կը սկսի Նոյեմբերի 29ին և կը տեւէ մինչեւ ծննդեան նրագալուցին նախորդ օրը (Դեկտ. 23), ամբողջ 25 օր։

Ամէն օր 40 «Ողջոյն»ներէ կազմուած փոքրիկ վարդարան մ'է որ պիտի ըսենք, այնպէս որ մինչև նրագալուցին օրը ամբողջ 1000 «Ողջոյն» կ'ըլլայ. սիրուն պսակ մը կամ փունջ մը՝ զոր կը նուիրենք Տիրամօր՝ մեր վրայ ունեցած իր անհուն սիրոյն փոխարէն։

Իւրաքանչիւր ողջոյնէն առաջ կ'ըսենք փոքրիկ աղօթք մը Աստուածածնի մայրութեան և Յիսուսի մանկութեան յիշատակին նուիրուած.

Ա. դառն 10ը «ողջունեցէք» ոչխարը պէտք է ըսել.

Օրհնեալ է ժամն այն, ո՛վ կոյս Մարիամ, յորում եղեր մայր Աստուծոյ:

(Օրհնեալ է այն ժամը, ով կոյս Մարիամ, երբ Աստուծոյ մայր եղար).

Բ. դառն 10ը «ողջունեցէք» ոչխարը պէտք է ըսել.

Օրհնեալ է ժամն այն, ո՛վ կոյս Մարիամ, յորում ծնար զՈրդին Աստուծոյ:

(Օրհնեալ է այն ժամը, ով կոյս Մարիամ, երբ Աստուծոյ Որդին ծնար):

Գ. դառն 10ը «ողջունեցէք» ոչխարը պէտք է ըսել.

Օրհնեալ է առաջին չիթն կաթին, ո՛վ կոյս Մարիամ, զոր դիեցաւ ի ստեանց քոց Որդին Աստուծոյ:

(Օրհնեալ է կարիդ այն առաջին կարիքը, ով կոյս Մարիամ, զոր քոյ ստինքդ ձաշակեց Աստուծոյ Որդին):

Դ. դառն 10ը «ողջունեցէք» ոչխարը պէտք է ըսել.

Օրհնեալ է առաջին համբոյրն այն, ո՛վ կոյս Մարիամ, զոր ետուր աստուածային շրթանց Որդւոյն Աստուծոյ:

(Օրհնեալ է այն առաջին համբոյրը, ո՛վ կոյս Մարիամ, որ Որդւոյն Աստուծոյ աստուածային շրթունքներուն տուիր):

ճրագալուցին օրը, երբ մեր այս 1000 ողջոյնի ներմեռանդութիւնը կ'աւարտի, պէտք է աւելցնել հետևեալ աղօթքը, որով մեր բարեպաշտ զգացմանց պըսակը կամ փունջը ամբողջացած կ'ընծայենք մեր երկնաւոր թագուհւոյն։

ԱՂՕԹՔ ՃՐԱԳԱԼՈՒՑԻ

Ով հզօր դշխոյ հրեշտակաց, Սրբուհի և Մայր Քրիստոսի, գթած և ողորմած Տիրուհի, անարժան ծառայս. . . . . խոնարհեալ յամենասուրբ ոտս քո՝ աղաչեմ զքեզ, ընկալ յինէն ի տառապեալ և ի մեղուցեալ ծառայէս քումմէ զհնգեսին զուրախական խորհուրդս սուրբ վարդարանի քո, զհազար ողջոյնսն, հանդերձ օրհնութեամբքն, զորս

մատուցի անարժանապէս քումդ մեծութեան։ Եւ այժմ աղաչեմ զքեզ, Տիրամայր և կոյս, ընկալ վասն իմ ի նորածին Որդւոյ քումմէ չնորհս փոխանակ հազարացն, զի ի կենդանութեան զղջացեալ ի բոլոր սրտէ, և ի մահու հասից անվտանգ ի կեանսն յաւիտենից. ամէն։

ԵՐԳԵՐ

որ մեծ պահոց մէջ Արեւագալի ժամերգութեան վաս կը կազմեն

Ցարևելից մինչ ի մուտս, ի հիւսիսոյ և ի հարաւոյ ամենայն ազգք և ազինք յօրհնութիւն նոր օրհնեցէք զարարիչն արարածոց, որ ծագեաց զլոյս արեգականն այսօր յաշխարհս։

Եկեղեցիք արդարոց՝ փառաբանիչք ամենասուրբ Երրորդու-

թեանն, յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան զՔրիստոս գովեցէք ընդ Հօր և Հոգւոյն, որ ծագեաց զլոյս գիտութեան իւրոյ ի մեզ։

Յորդորակ

Յարևելից յարևմուտս մանկունք Սիոնի օրհնեցէք միշտ անդադար զծագողն լուսոյ։

Եկեղեցիք արդարոց և փառաբանիչք, բարեբանեցէք որ ետ զիմաստս լուսոյ։

Ե Ր Գ

Ձգնաւորք Աստուծոյ և ժառանգորդք երկնից արքայութեանն, որք փոխանակեալք զանցաւորս առէք զանանցսն բարութիւնսն, բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ։

Նահատակք պանծալիք և սիրեցեալք ի յերկնաւոր Հօրէն, որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին, բարեխօս։

Մարտիրոսք ցանկալիք և օթեվանք Հոգւոյն ճշմարտութեանն, որք յաղթեցէք հոգւով կարեաց և ցանկութեան, բարեխօսեցէք։

Գովելիք աշխարհի և բաղձալիք վերնոցն պետութեանց, որք երանութեան մասին հասէք քան զամենայն որդիս մարդկան, բարեխօս։

Կամաւոր պատարագք, մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ, որք փոխանակ կաթին արբէք զգինին զմայլեցուցիչ, բարեխօսեցէք։

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճգնաւորք ճշմարիտք վկայք Քրիստոսի, բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց։

Նահատակք կենդանիք սիրողք Քրիստոսի, որք չարչարեցայք մարմնով վասն անուանն Տեառն։

Մարտիրոսք ցանկալիք մարդկան ըղձալիք, հայցեցէք ի սուրբ Հոգւոյն տալ մեզ զբարիս։

Գովելիք վերնոց դասուց, պարծանք աշխարհի, խնդրեցէք զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ։

Կամաւոր սուրբք պատարագք հաստակաւ մանկունք, հայցեցէք լինել և մեզ ձեզ պսակակից։

ԵՐԳ

Լոյս արարիչ լուսոյ առաջին լոյս, բնակեալդ ի լոյս յանմատոյց, Հայր երկնաւոր՝ ի դասուց լուսեղինացն օրհնեալ, ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

Լոյս ի լուսոյ ծագումն արեգակն արդար, անճառ ծնունդ Հօր Որդի, յառաջ քան զարեւ անուն քո գովեալ ընդ Հօր. ի ծագել։

Լոյս ի Հօրէ բղխումն աղբիւր բարութեան, Հոգիդ սուրբ Աստուծոյ, մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս զքեզ բարեբանեն. ի ծագել։

Լոյս երրեակ և մի անբաժանելի սուրբ Երրորդութիւն, զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք. ի ծագել։

ՅՈՐԴՈՐԱԿ

Անեղանելիդ Աստուած Հայր ամենակալ, ընկալ զաղաչանս մեր քոց պաշտօնէից։

Ի Հօրէ ծագումն անճառ արեգակն արդար, ծագեա ի յանձինս մեր զլոյսդ ողորմութեան։

Ի Հօրէ բղխեալ Հոգի աղբիւր բարութեան, լուսով քով լցո զմեզ յայսմ առաւօտուս։

Երեք անձինք և մի բնութիւն, մի աստուածութիւն, զքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ Երրորդութիւն։

ԵՐԳ

Ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք Քրիստոս, առաջնորդեա հոգւոց մերոց յերկրէ ելանել յերկինս։

Դուռն կենաց մտից Յիսուս, մոյծ և զմեզ առ Հայր քո և Հոգի՝ երգել միշտ զփառս։

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճանապարհ բարի Քրիստոս և ճշմարտութիւն, առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ ի յերկինս։

Դուռն կենաց մտից Յիսուս Աստուած ճշմարիտ, մոյծ և ըզմեզ առ Հայրդ քո Հոգւովդ սրբով։

ԵՐԳԵՐ

Խաղաղական ժամերգութեան

Շնորհեա մեզ Տէր ի գիշերի զերկնային զխաղաղութիւն քո, և պահեա զմեզ ի պատրանաց թշնամւոյն ամենայաղթ զօրու-

թեամբ սուրբ խաչի քոյ։ Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի՝ և գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, խոնարհեսցի ունկն քո ի խնդրուածս իմ։ Եկեսցէ առ մեզ Տէր պահապան ի քէն՝ որ պահեսցէ զմեզ յամենայն ժամ։

Առաքեա ի մեզ Տէր զզօրութիւն սրբոյ խաչին՝ որ պահեսցէ զմեզ յամենայն ժամ։ Արժանի արա Տէր՝ զերեկս զայս խաղաղութեամբ և առանց փորձութեան անցո՛ զմեօք։

Արժանաւորեա Տէր զգիշերս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց պահելով զմեզ։ Ընդ մեզ Տէր Աստուած գիտասջիք հեթանոսք և պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է։

Եւ լուարուք զայս ի ծագաց

մինչև ի ծագս երկրի. զի։ Եւ հզօրացեալքդ պարտեցարուք. զի։

Եւ զի թէպէտ և դարձեալ զօրանայք՝ դարձեալ ի պարտութիւն մատնեսջիք. զի։ Եւ զկորհուրդն զոր խորհիք՝ խափանէ Տէր. զի։

Եւ զբանն զոր խօսիք՝ մի՛ թնասցէ առ ձեզ. զի։ Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ երկիցուք և ոչ խռովեսցուք. զի։

Եւ զՏէր Աստուած մեր փառաւոր արասցուք և նա եղիցի մեզ յերկիւղ. զի։ Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա և նա եղիցի մեզ ի սրբութիւն. զի։

Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա և նա եղիցի մեզ ի փրկութիւն. զի։ Եւ ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած. զի։

Եւ ժողովուրդ որ նստէր ի

խաւարի՝ ետես զլոյս մեծ. զի։
Եւ որ բնակեալդ էք ի խաւարի
և ի ստուերս մահու՝ լոյս ծա-
գեսցի առ ձեզ. զի։

Եւ քանզի մանուկ ծնաւ որդի
և տուաւ մեզ. զի։ Եւ որոյ իշ-
խանութիւն իւր ի վերայ ուսոց
իւրոց. զի։

Եւ որ կոչի անուն նորա մեծի
խորհրդոյ հրեշտակ. զի։ Եւ ըս-
քանչելի խորհրդակից. զի։

Եւ փառք Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ

Նայեա սիրով, Հայրդ գթած,
ի քո ստեղծեալ գործս ձեռաց,
և զբանակս հրեշտակաց տուր
պահապան մեզ տկարացս. փըր-
կեա զանձինս ի փորձանաց ի

խաւարի շրջող դիւաց, զի ի
տուընջեան և գիշերի տացուք
քեզ փառս անլռելի։

Էին անեղ անսկզբան ծնունդ
անճառ Որդի և բան, որ արա-
րեր զտիւ գործոյ և զգիշեր ի
հանգիստ քնոյ. տուր ի ննջել
աչաց մարմնոյ արթուն լինել մեզ
ըստ հոգւոյ, զի։

Լաբուն հոգւոց բանաւորաց
աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց,
ի փակել դրանց բնութեանց
մարմնոց լոյս տուր աչաց սրտից
մերոց. ի գիշերաց առ քեզ կան-
խել՝ ընդ հրեղինացն օրհնաբա-
նել. զի։

Սուրբդ սրբոց Երրորդութիւն,
զմեզ մաքրեա քեզ բնակութիւն.
շնորհեա ընդ մանկանցն առա-
գաստի հանգչել ընդ քեզ ի յան-
կողնի. տուր զհայցուած բարե-
կամին զփոխ երից նկանակին. զի։

Երևելի լոյս ստեղծեր, զտիւ և զգիշեր բաժանեցեր. ծագեա մեզ Տէր ի գիշերի զճառագայթս ի-մանալի. տուր յամենայն ժա-մանակի զպահպանող աչ քո հովանի. զի։

Սիրոյ քո հուր արկեալ յեր-կիր բորբոքեսցի ի հոգիս մեր. զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ, զլոյս գիտութեան քո փայլես-ցէ. ի քնոյ մահու զմեզ զար-թուսցէ, զմիտս բոցով քով վա-ռեսցէ. զի։

Ի քեզ նայիմք, լոյսդ անմա-տոյց, ի զգայական ծածկեալ լուսոյ. որ վասն մեր եդար ի գբի և ննջեցեր ի տապանի. առ մեզ ննջեա, արթուն բնու-թիւն, հերքեա զչարին ներգոր-ծութիւն. զի։

Էիդ լուսոյ անստուերի՝ պա-ղատանօք կամք առաջի. որ փա-

կեալ դրամբք յերեկոյին երեւե-ցար մեռասանին. ընդ Թովմայի առ քեզ գոչեմք, Տէր և Աստուած զքեզ դաւանեմք. էջ և առ մեզ յերեկոյիս և տուր զողջոյն քո ի հոգիս։

Բամեալքս զքեզ Տէր աղաչեմք, մեզ յօգնութիւն նայեա հայցեմք, պահապանդ Իսրայելի, անձանց մերոց լեր հովանի. օթեա առ մեզ խաղաղարար և ննջեսցուք անխռովաբար. զի ընդ առաւօտս կանխեսցուք օրհնել զքեզ ընդ Հօր Հոգւով։

Գոչման փողոյն Գաբրիելի՝ որ ի վերջնումն գիշերի՝ լսել արա զմեզ արժանի և աջակողմն օ-դեաց դասի. անչէջ վառեալ լոյս լապտերաց ըստ իմաստուն հինգ կուսանաց. զի ընդ փեսայիդ ի յառագաստ հարսունք հոգւով մտցուք ի փառս։

Հալածեա ի մէնջ Տէր նշանաւ խաչի քո զընդդիմամարտ և զաներեւոյթ գազանն. և մի՛ տար յապականութիւն զքո ժառանգութիւնս։

Բարեխօսեա վասն մեր, Աստուածածին Մարիամ, որ ծնար զՏէր Աստուած որ հովուէրն զիսրայէլ՝ ամենազօր աքանչելի փառօքն իւրովք։

ՇԱՐԱԿԱՆ

Ի քէն հայցեմք, Հայր գթութեանց և Աստուած մխիթարութեանց. ի տխրական գիշերային մերձեալ ժամուս՝ մխիթարեա զմեզ ի տրտմութեանց մեղաց, և շնորհեա զուրախութիւն գործովք արդարութեան. աղաչանօք սուրբ Աստուածածնին և ամենայն արդարոց։

Ըստ քաղցրագոյն աստուածային քո հրամանի կոչման, Որդի Աստուծոյ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք և ծանրաբեռնեալք. թեթեւացո ի ծանրութեանց մեղաց զանձինս, և զօրացո բառնալ կամաւ ըզքաղցր լուծ քոց պատուիրանաց. աղաչա։

Պաղատիմք առ քեզ հոգւով ի հանգստեան հասեալ ժամուս, մարդասէր Հոգի Աստուծոյ. յորժամ նորոգես զերեսս երկրի և վերստին ստանաս զոգիս մարդկան, նորափետուր զարդարեա զննջեցեալսն մեր զծնեալս ի քէն սուրբ աւազանաւն. աղաչա։

Զկենդանագիր անարատ ծնողի քո արկանեմք առաջի անոխակալ տէրութեանդ քո. յորժամ գաս փառօք Հօր դատել զթշնամին խաչի քոյ, ներեա

յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո և կուսի. աղաչեմք զքեզ Տէր, պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ։

Հաղորդս արա և զմեզ Տէր, ընդ սրբոց քոց առաքելոցն, որք արժանի եղեն տեսանել զքեզ ի յարութեան քո. արժանաւորեա Տէր տեսանել զքեզ ի միւսանգամ քո գալըստեանն. օրհնութիւն առաքողին ի բարձունս։

Ի նստել քո յաջեանի, դատաւոր ահեղ, աղաչանօք սուրբ Աստուածածնին յիշեա զննչեցեալսըն մեր՝ յորժամ գայցես անճառ փառօք. քանզի քո են փառք յաւիտեանս ամէն։

ՔՐԻՍՏՈՆԷԻ ՄԸ

գիտնալիք հարկաւոր բաները

Ինչպէս ո՛և է մէկը որ իր արուեստին գաղտնիքները լաւ չգիտնայ, չի կրնար լաւ արհեստաւոր կոչուիլ, այսպէս ալ այն մարդը որ ճշմարիտ կրօնքին գիտութիւնը չունի, չի կրնար լաւ քրիստոնեայ կոչուիլ։ Թէ և քրիստոնէական կրօնքին գիտութիւնը շատ ընդարձակ է, բայց հաւատացեալի մը համար և մասնաւորապէս անոնց՝ որ միջոց չունին ընդարձակ կերպով սորվելու, հետևեալ գլխաւոր կէտերու գիտութիւնն ալ կը բաւէ.

ա. Անհրաժեշտ է գիտնալ թէ՝ զմեզ Աստուած ստեղծեր է. և ոչ թէ միայն զմեզ, այլ և մեր ծնողքը, մեր ազգականները,

մարդկութիւնը և բոլոր տիեզերքս իր ամէն զարդերով, սկըսեալ ամենափոքրիկ ծաղիկէն մինչև հսկայ ծառերը, փոքրիկ ճճիէն՝ մինչև վիթխարի կենդանիները, վերջապէս ամէն ինչ, մինչեւ իսկ երկնքին հրեշտակները։

Բ. Պէտք է հաւատալ Ամենասուրբ Երրորդութեան, Հօր Աստուծոյ, Որդւոյն Աստուծոյ և Ամենասուրբ Հոգւոյն, դաւանելով և խոստովանելով հաստատապէս մէկ Աստուած և երեք Անձինք, որոնք ամենայն կերպով մի են աստուածութեամբ, կարողութեամբ, իշխանութեամբ, իմաստութեամբ և այլն։

Գ. Որդին Աստուած գթալով մարդկութեան վրայ, որ Ադամի անհնազանդութեան մեղքովը սատանային գերի եղած էր,

աշխարհք եկաւ և Ս. կոյս Մարիամ Աստուածածնէն ծնանելով՝ կատարեալ կերպով մարդ եղաւ, երեսուն և երեք տարի ապրեցաւ աշխարհիս վրայ, իր ճշմարիտ վարդապետութիւնը քարոզեց, շատ հրաշքներով իր Աստուած ըլլալը հաստատեց, իրեն առաքեալներ և աշակերտներ ընտրեց, աղքատի մը պէս ապրեցաւ. վերջն ալ հրեայք նախանձելով զինքը բռնեցին, չարչարեցին և խաչի վրայ գամելով մեռցուցին, երեք օր գերեզմանին մէջ մնալէն վերջ իր աստուածային զօրութեամբ յարութիւն առաւ, մարդկութիւնը սատանային գերութենէն ազատելով։ Յիսուս՝ մեռնելէն առաջ առաքելոց առջեւ Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդը հաստատեց և անոնց ալ հրամայեց

որ միշտ այդ Ս. խորհուրդը կատարեն. և ով որ անոր կը մերձենայ արժանաւոր կերպով՝ կը փրկուի, իսկ ով որ անարժանաբար կ՚ընդունի զայն՝ կը դատապարտուի։

դ. Յարութենէն վերջը Քրիստոս քառասուն օր իր աշակերտաց և առաքելոց կը տեսնուէր և անոնց իր վարդապետութիւնը կը սորվեցնէր, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ խորհուրդները և անոնց մատակարարութեան կերպը։ Քառասուն օրէ վերջ փառօք երկինք համբարձաւ, խոստանալով ղրկել իրենց Մխիթարիչ Ս. Հոգին, որ տասը օր վերջ վերնատան մէջ հրեղէն լեզուներով իջաւ առաքելոց և աշակերտաց վրայ։

ե. Առաքեալները և աշակերտները իրենց աստուածային վարդապետին երկինք վերանալէն վերջը՝ իրենց գլուխ ճանչցան, Քրիստոսի հրամանին համաձայն, Պետրոս Առաքեալը. և ցրուելով բոլոր աշխարհք սկսան մէկ սիրտ և մէկ հոգի տարածել ճշմարիտ կրօնքը, արհամարհելով հալածանքը, բանտարգելութիւնը, տեսակ տեսակ չարչարանքներն ու մահը։ Քրիստոնէութիւնը այնչափ շուտ տարածուեցաւ և այնչափ բազմաթիւ հետեւողներ ունեցաւ՝ որ առաքեալները սկսան ուրիշ եպիսկոպոսներ, քահանաներ և սարկաւագներ ձեռնադրել ու ամէն կողմ ղրկել՝ քարոզելու և ուսուցանելու համար։ Այդ ձեռնադրութիւնը և յաջորդութիւնը անընդհատ մինչև հիմա հասած է և մինչև աշխարհիս վերջն ալ պիտի տեւէ ուղղափառ Եկեղեցւոյ մէջ։

Զ. Աստուած կ'ուզէ որ բոլոր մարդկութիւնը առ հասարակ փրկուի, և այդ բանին համար իւրաքանչիւրին բաւական շնորհք տուած է, որուն օգնութեամբ և արդիւնաւորելով կըրնան իրենց համար պատրաստուած յաւիտենական երջանկութեան հասնիլ։ Ասկից զատ, ժամանակաւ զրկած է իր մարգարէները, ինքը անձամբ եկած և քարոզած է, առաքելոց բերնով սորվեցուցած է և հիմակ ալ անդադար կը սորվեցնէ իր Ս. Եկեղեցւոյ և անոր պաշտօնէից միջոցաւ. այս բաւական չհամարելով, իւրաքանչիւր անձի համար յատուկ պահապան հրեշտակներ կարգած է զանոնք բարւոյն և ճշմարտին մէջ առաջնորդելու համար։

Է. Քրիստոս Տէրն մեր հին

կտակարանէն բան մը չփոխեց, այլ զայն բարձրացուց, ազնուացուց և կատարելագործեց, անոր մէջ քրիստոսավայել սէր մը և ներողամտութեան հոգի մը դնելով։

Ը. Աստուծոյ պատուհիրանները. Մովսէս մարգարէին ձեռքով տրուած, տասը հատ են, զոր ամէն քրիստոնեայ պարտական է պահել։

1. Ես եմ քու Աստուածդ և ինծմէ զատ ուրիշ Աստուած չպաշտես։

2. Ոչինչ բաներու համար Աստուծոյ անունը բերանդ չառնես։

3. Շաբաթ օրը սուրբ պահէ։ (Առաքեալները այս օրը կիւրակի օրուան վերածեցին ի յիշատակ Քրիստոսի Ս. Յարութեան)։

4. Հայրդ ու մայրդ պատուէ։

5. Սպանութիւն մի՛ ըներ։

6. Շնութիւն մի՛ ըներ։

7. Գողութիւն մի՛ ըներ։

8. Քու ընկերոջդ վրայ սուտ վկայութիւն մի՛ տար։

9. Քու ընկերիդ կնոջը մի՛ ցանկար։

10. Քու ընկերոջդ ունեցածո՛ և է բանին մի՛ ցանկար։

Ընկեր ըսելով մեր բարեկամներն հասկնալու չէ, այլ ո՛ և է մարդ։

Բ. Եկեղեցին ալ իր կողմանէ ուրիշ հինգ պատուէրներ աւելցուցած է, և ինչպէս որ առաջինները չպահելով կը մեղանչենք, այսպէս ալ եթէ ասոնք զանց ընենք՝ մահուչափ կը մեղանչենք։

1. Կիւրակի և տօն օրերը սուրբ պահել և անպատճառ պատարագ տեսնել։

2. Պարտաւորիչ պահքերը և

ծոմերը պահել։ (Եթէ այս պարտականութիւնը չես կրնար պահել հիւանդութեան, տկարութեան, կամ ուրիշ օրինաւոր պատճառի մը համար, պէտք ես նախապէս քու առաջնորդէդ կամ խոստովանահօրմէդ հրաման խնդրել)։

3. Անպատճառ պէտք է տարուան մէջ գոնէ մէկ անգամ խոստովանանք ըլլալ։

4. Յարութեան օրը պէտք է Ս. Հաղորդութեան խորհուրդն ընդունիլ։ (Ս. Յարութեան օրը կամ Զատիկ ըսելով՝ պէտք է իմանալ ընդհանրապէս Ծաղկազարդէն մինչեւ Նոր կիւրակէ եղած միջոցը)։

5. Քրիստոնեայ մը պէտք է իր ունեցածին տասներորդ մասը եկեղեցւոյ տայ։

Ժ. Քրիստոս իր Եկեղեցւոյն

մէջ եօթը խորհուրդներ հաստատեց և անոնց գործադրութիւնը պատուիրեց և սորվեցուց իր առաքելոց և աշակերտաց, անոնք ալ փոխադարձ իրենց աշակերտաց, որով մինչև մեզի հասած են առանց ո՛է փոփոխութիւն մը կրելու, այնպէս որ առանց այդ խորհուրդներուն մէկը չի կրնար կատարեալ քրիստոնեայ կոչուիլ։ Այդ եօթը խորհուրդները հետեւեալներն են.

1. Մկրտութիւն. Սկզբնական մեղքը կը ջնջէ, և անհրաժեշտ է ամենուն փրկութեան համար, առանց անոր մէկը քրիստոնեայ չ'ըսուիր. այս խորհուրդը բնաւ չի կրկնուիր։

2. Դրոշմ. Քրիստոնէութեան կնիքը կը դնէ մկրտուողին վրայ և անհրաժեշտ է ամենուն. բնաւ չի կրկնուիր։

3. Ապաշխարութիւն. Մկըրտութենէն վերջը գործած մեղքերը կը ջնջէ և կրկին շնորհք կու տայ. փրկուելու համար անհրաժեշտ է ամենուն։ Այս խորհուրդը պէտք է յաճախ ընդունի քրիստոնեայ մը։

4. Հաղորդութիւն. Մեղքէ զերծ և շնորհաց մէջ գտնուողներուն շնորհքը կ'աճեցնէ և արիութիւն կու տայ մեղաց և փորձութեանց դիմադրելու, և Յիսուսի հետ կը միացնէ հաւատացեալ հոգին։ Այս Ս. խորհուրդն ալ պէտք է յաճախ ընդունի ամէն քրիստոնեայ։

5. Վերջին օծումն. Հիւանդ մը երբ իր վերջին վայրկեաններուն կը հասնի, անհրաժեշտ է որ ընդունի այս խորհուրդը, որ թէ կը զօրացնէ հիւանդը փորձութեանց և ցաւերու դէմ,

և թէ բոլոր նեբելի մեղքերը կը սրբէ. ամէն քրիստոնէի համար ալ անհրաժեշտ է այս Ս. խորհրդոյն ընդունելութիւնը։ Եթէ վերջին օծում առնող հիւանդը առողջանայ և բաւական ժամանակ վերջը (ոչ նուազ քան 50 օր) կրկին հիւանդանայ, պէտք է կրկնել այս խորհուրդը։

6. Կարգ քահանայութեան. Անոնք որ կոչումն և արժանաւորութիւն ունին, եպիսկոպոսին ձեռնադրութեամբ այս Ս. խորհուրդը կ'ընդունին, եկեղեցւոյ ծառայելու և հաւատացելոց Ս. խորհուրդները մատակարարելու համար։ Բայց քահանայ չձեռնադրուած, անհրաժեշտ է որ նախապէս ընդունած ըլլայ դպրութեան չորս փոքր աստիճանները և ձեռնադրուած ըլլայ կիսասարկաւագ և սարկաւագ։

Այս խորհուրդը նոյնպէս չի կրկնուիր։

7. Պսակ. Ինչպէս նախկին խորհուրդները, այս ալ սրբազան խորհուրդ մ'է. կ'ընդունին անոնք՝ որոնք չափահաս են և իրենց յօժար կամքովը կ'ուզեն ամուսնական կեանք վարել, բարեպաշտ հաւատացելոց թիւը աճեցնելու համար։

Այս խորհուրդը չի լուծուիր և չի կրկնուիր՝ որչափ ատեն որ այր ու կին ողջ են. և ասոնց միոյն կամ միւսին մահուամբը միայն կը լուծուի, որով կրնան կրկին ամուսնանալ։

Ժա. Մկրտութիւնը բոլորովին կը ջնջէ սկզբնական մեղքը. բայց որովհետև մարդս միշտ տկար է, և մեղաց մէջ իյնալու հակամէտ, անոր համար խոստովանութեան Ս. խորհուրդը

հաստատած է Քրիստոս, և մասնաւոր կերպով մահուշչափ մեղքերուն համար. որոնց գլխաւորները եօթը հատ են.

1. Հպարտութիւն։
2. Նախանձ։
3. Բարկութիւն։
4. Ագահութիւն։
5. Ծուլութիւն։
6. Ոկրամոլութիւն։
7. Բղջախոհութիւն։

Ժբ. Քրիստոս՝ իր հետեւողաց միշտ եղբայրսիրութիւն կը քարոզէր և կ'ուզէր որ բոլորն ալ այս առաքինութեան մէջ յառաջադէմ ըլլան, օգնելով իրարու հոգեւորապէս և մարմնաւորապէս, հիւանդաց պարագաներուն կամ առիթներուն մէջ, որոնք կը կոչուին հոգեւոր և մարմնաւոր Գործք ողորմութեան.

Հոգեւորապէս օգնած կ'ըլ-
ղանք, երբ՝

1. Տգէտներուն սորվեցնենք կրօնական բաները և օգտակար ուսումները։

2. Կրօնքի մասին տարակոյս ունեցողները՝ լուսաւորենք բարի խորհուրդներով։

3. Վշտերու մէջ եղողները՝ մխիթարենք։

4. Մեղքի մէջ եղողները՝ խրատենք։

4. Երբ մեր ընկերներէն վը-նաս մը կամ նախատինք մը կրենք՝ սիրով ներենք։

6. Մեր ընկերոջ պակասու-թիւններուն՝ համբերենք։

7. Մեր աղօթներուն մէջ միշտ յիշենք թէ ողջերը և թէ մե-ռածները։

Մարմնաւորապէս օգնած կըլ-
ղանք, երբ՝

1. Անօթի եղողներուն՝ կերա-կուր տանք։

2. Եթէ մէկը ծարաւ է՝ ջուր տանք։

3. Աղքատներուն և մերկե-րուն՝ զգեստ տանք։

4. Խեղճ օտարականները և պանդուխտները հոգանք, անոնց բնակութիւն տանք։

5. Հիւանդներուն հարկ եղած այցելութիւնն ու դարմանն ը-նենք։

6. Բանտարկեալներուն հոգ տանինք, այցելութեամբ մխի-թարենք և խրատենք զիրենք։

7. Անտէր մեռելները թաղենք կամ թաղումին նպաստենք։

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Քրիստոսի խաչին գիւտը

Քրիստոսի մահէն վերջ հեթանոսները և հրէաները ուզեցին սրբազան յիշատակները անյայտացնել, ուստի Գողգոթայի վրայ ահագին հող լեցնելով սուրբ գերեզմանը ծածկեցին, և չարչարանաց գործիքները թաղեցին. իսկ հեթանոս կայսերք հրամայեցին անոնց վրայ Յանոսի տաճար մը շինել, որպէս

զի քրիստոնեաները չփոթելով սուտ աստուածներուն երկրպագութիւն ընեն և կամաց կամաց Քրիստոսի պաշտօնը մոռցուի։

Երբ Կոստանդիանոս և իր մայրը Հեղինէ քրիստոնէութիւնն ընդունեցան, Յանոսի այդ տաճարը կործանեցին (Քրիստոսի 326 թուին), և անոր տեղ երբ քրիստոնէական փառաւոր տաճար մը կանգնելու համար հիմերը կը փորէին, գտնուեցաւ Ս. Գերեզմանը, անոր անմիջապէս քովը երեք հատ խաչեր մի և նոյն մեծութեամբ և ձեւով. նոյն տեղը գտնուեցան նաև գամերը և Պիղատոսին գրել տուած տախտակը։ Չկրնալով որոշել թէ ո՞րն է Յիսուսի խաչը. նոյն ժամանակի Երուսաղեմի պատրիարքը Մակար՝ Աստուծոյ ազդեցութեամբ այդ խաչերը

փոխադրել տուաւ երկար ատենէ ի վեր հիւանդ պառկած մահամերձ կնոջ մը քով, և խնդրեց Աստուծմէ որ հիւանդին անմիջական բժշկութեամբը յայտնէ թէ ո՞րն է ճշմարիտ խաչը՝ որուն վրայ Յիսուս գամուեցաւ։

Նախ խաչերէն երկուքը առանձին առանձին հիւանդին մօտեցուցին, ի ներկայութեան Հեղինէ թագուհւոյն և բազմաթիւ ժողովրդեան, բայց ո և է արդիւնք մը չունեցաւ. իսկ երբ երրորդին եկաւ կարգը, հիւանդը անմիջապէս ոտքի ելաւ բոլորովին բժշկուած։ Սոզոմենոս պատմիչը կը գրէ թէ՝ այդպիսի փորձ մ'ալ մեռելի մը վրայ ըրին, որ վայրկենաբար յարութիւն առաւ։

Բարեպաշտ կայսրուհին, ուրախացած այդ սուրբ գանձը

գտնելուն համար, զայն երկու մասի բաժնել տուաւ, մէկը իր որդւոյն Կոստանդիանոսի ղրրկեց, իսկ երկրորդը Երուսաղէմ թողուց, արծաթէ արկղի մը մէջ դնելով. հոն՝ մեծ խնամքով և յարգանքով կը պահուէր Ս. Յարութեան եկեղեցւոյն մէջ և ամէն կողմէ կը դիմէին պատուելու համար կենաց փայտը:

Իսկ Կոստանդիանոս իրեն ղրրկուած կենաց փայտէն մեծ կըտոր մը Հռովմ ղրկեց, որպէս զի նոյն տարին շինուած Ս. Խաչ Երուսաղեմայ ըսուած եկեղեցւոյն մէջ դրուի: Մինչեւ հիմա կը պահուի այդ սուրբ գանձը նոյն եկեղեցւոյն մէջ, որ երեք ոտք երկայնութիւն ունի. իսկ ասկէ առնուած ուրիշ մաս մ'ալ կը պահուի Վատիկանի մայր եկեղեցւոյն մէջ:

Բ

Առ Տիրամայրն ունեցած վստահութեան մը վարձատրութիւնը

Անգղիոյ մէջ եպիսկոպոս մը, երբ ծպտուած իր թեմական այցելութիւնը կ'ընէր, անտառի մը մէջ մոլորեցաւ, գիշերը վրայ հասնելով ստիպուեցաւ ածխագործի մը խրճիթը ապաստանիլ. խրճիթին մէջ կին մը և շատ մը տղաք կային, որոնք սիրով ընդունեցան զինքը և համեստ ընթրիքով մը պատուեցին:

Ընթրիքէն վերջ, եպիսկոպոսը լռութիւնը խզելով, ըսաւ կնոջ.

– Ձեզ շա՜տ բարի կը գտնեմ, բայց ինծի կ'երեւի թէ տխուր էք:

Կինը հառաչանք մ'արձակելով պատասխանեց. Այո՛, տխուր ենք, որովհետեւ քովի սենեկին մէջ ամուսինս մահամերձ վիճակի մէջ պառկած է, բայց դեռ ապրիլ կ'ուզէ և չ'ուզեր մահուան պատրաստուիլ։

– Կրնա՞մ զինքը տեսնել, ըսաւ եպիսկոպոսը սաստիկ յուզուած։

– Շատ սիրով, պատասխանեց կինը, և անմիջապէս հիւանդին սենեակը մտցուց զինքը։

Սենեկին մէջ խեղճ անկողնի մը վրայ տարածուած էր ալեւոր ծերունի մը մահամերձ վիճակի մէջ, և հազիւ բոպէ մը մնացած էր մեռնելու, սակայն դեռ կ'ուզէր ու կ'երազէր ապրիլ։

Եպիսկոպոսին առաջին առաջարկութեանը վրայ, ծերը բո-

լորովին արիացաւ և կորովով մը պատասխանեց.

— Ո՛չ, ես կը յուսամ որ պիտի չմեռնիմ։

— Բայց, բարեկամս, քիչ մը մտածէ, ըսաւ եպիսկոպոսը, չե՞ս գիտեր թէ մենք ամենքս ալ պիտի մեռնինք, և քու հիւանդութիւնդ՝ հաստատուած տարիքդ է...։

— Ես քեզի ըսի թէ՝ կը յուսամ որ պիտի չմեռնիմ, կըրկնեց ծերը, այդ անկարելի է։

Եւ այսպէս, եպիսկոպոսին բոլոր պատճառաբանութիւններուն, որոնցմով կ'ուզէր զինքը համոզել, միշտ նոյն պատասխանը կու տար ծերը.

– Ես պիտի չմեռնիմ։

Եպիսկոպոսը՝ վերջին փորձ մ'ալ ընելու համար՝ ըսաւ.

– Բայց ինծի ըսէ թէ, ինչո՞ւ կը յուսաս որ պիտի ապրիս և պիտի չմեռնիս։

Այս հարցումէն ստիպուած՝ օրհասական ծերունին, խորունկ ակնարկ մը նետեց հարցնողին վրայ և յուզուած շեշտով մը հարցուց.

– Պարոն, դուք ուղղափա՞ռ էք։

– Այո՛, պատասխանեց եպիսկոպոսը։

– Հիմա քեզի կրնամ ըսել թէ ինչո՛ւ պիտի չմեռնիմ։

Ծերը այս ըսելով, բոլոր ուժը ժողվեց, նստաւ անկողնին վրայ և տկար բայց ազդու ձայնով մ'ըսաւ անոր.

– Պարոն, ես ալ ձեզի պէս ուղղափառ եմ, իմ առաջին հաղորդութիւնս առնելէս մինչև այս օրս միշտ խնդրած եմ Ս. Կոյսէն այս շնորհքը, որ մահուանս անկողնին քով առանց քահանայ մը ունենալու չմեռնիմ, իսկ հիմակ դու կը կարծես թէ երկնաւոր Մայրս պիտի չի լսէ՞ այս իմ աղաչանքս. ո՜հ, անկարելի է, անկարելի, անոր համար կ'ըսեմ որ հիմա պիտի չմեռնեմ։

– Որդեակ իմ, ըսաւ եպիսկոպոսը սրտին խորէն հառաչելով, որդեակ իմ, Ս. Կոյսը աղաչանքդ լսած է. այն որ հետդ կը խօսի՝ քահանայէ մը աւելի՝ քու եպիսկոպոսդ է. Ս. Կոյսը կամաւ զիս անտառին մէջ մոլորել տուաւ, որպէս զի քու վերջին վայրկենիդ քովդ գտնուիմ։

Այս ըսելով՝ բացաւ իր վերարկուն և անոր տակէն փայլեցաւ եպիսկոպոսական խաչը, զոր տեսնելով հիւանդը ուրախութեամբ լեցուած գոչեց.

– Ո՜վ Մարիամ, իմ բարի մայրս, շնորհակալ եմ քեզի։

Ցետոյ եպիսկոպոսին դառնալով, ըսաւ.

– Իմ բարի հովիւս, զիս խոստովանցուր, հիմա կը հաւատամ թէ պիտի մեռնիմ։

Քիչ յետոյ, վերջին անգամն ըլլալով, խոստովանութեամբ սրբուելով մեղքերէն, հոգին աւանդեց բարի ծերունին, հաստատելով Ս. Բեռնարդոսի այն խօսքը, թէ «չէ եղած մէկը՝ որ Մարիամն օգնութեան կանչած ըլլայ և անոր խնդրուածքը լսուած չըլլայ»։

Գ

Մեղաւորին մահը

Հոգին Սուրբ կ՚ըսէ. «Արդարոյն մահը Աստուծոյ առջեւ պա-

տուական է» բայց մեղաւորինը՝ չար։ Վոլթէր, մահուան անկողնին վրայ տարածուած, յիշելով տուած գայթակղութիւնները և չար օրինակները, վախէն կը դողար և սարսափած կը մրմնջէր երբեմն երբեմն. «Ուրեմն լքուած եմ թէ Աստուծմէ և թէ մարդոցմէ...»։ Իսկ մեռնելէն բոպէ մը առաջ իր շուրջ գտնուողներուն դառնալով «ժամը քանի՞ է». հարցուց. երբ կէս գիշեր ըլլալն իմացաւ, տխուր շեշտով մը կրկնեց. «Կէս գիշեր... ահա՜ սարսափելի ժամը՝ որով կը սկսի իմ աղետալի յաւիտենականութիւնս», և այս ըսելով դարձուց երեսը և հոգին փչեց։

Դ

Աստուածածնայ միջնորդութեամբ գտնուած մայր մը

Ազգային ազատութիւնին ձեռք բերելու համար, Լեհացւոց յեղափոխութեան ժամանակ, Սոքոլովսքի կոմսը բռնուելով բանտարկուեցաւ ու մահուան վճիռ ընդունեցաւ. երկրորդ օրը անմիջապէս պիտի գլխատուէր։ Այս գուժը լսելով իր մանկամարդ կինը, առաւ իր փոքրիկ տասը տարեկան Ստանիսլաւ որդին, տարաւ Աստուածածնայ եօթն վիրաց պատկերի մը առջեւ և ըսաւ. «Ս. Կոյս Մարիամ, աղաչէ մեզի համար, պաշտպանէ՛ և ազատէ զմեզ, եւ դարձուր հարսի մը իր ամուսինը և զաւկի մը իր հայրը. դու մեր արցունքներուն գթա՛, դու՝ որ քեզի դիմողները չես մերժած, դու որ անհուն սիրով սիրեցիր քու Աստուածային որդիդ և շատ տառապեցար անոր համար, գթա՛ մեզի...»։ Համառօտ աղօթքէս վերջը, դիւցազն կոմսուհին առնելով իր որդին ուղղակի գնաց այն զնդանը՝ ուր բանտարկուած էր կոմսը։ Փոքրիկ կաչառքով մը յաջողեցաւ մտնել բանտը և մինչեւ իր ամուսնոյն քով երթալ և փոխել անոր հետ զգեստները, այնպէս որ մահուան հրամանը գործադրելու ժամանակ՝ կոմսին տեղ անոր կինը գտան։

Սոքոլովսքի կոմսը իր կնոջ զգեստովը ծպտուած, որդւոյն հետ բանտէն դուրս ելնելէն վերջ, անմիջապէս փութաց Գաղղիոյ

սահմանն անցնիլ ու Բարիզ հասաւ. հոն՝ բարեպաշտ վարժարանի մը մէջ տեղաւորեց իր որդին, ուր փոքրիկ Ստանիսլաւը կը յառաջադիմէր ուսման և առաքինութեան մէջ։

Կոմսուհւոյն վրայ ոչ մէկ տեղեկութիւն չունէին. միայն տարիներ վերջ կոմսը իր բարեկամներէն մէկէն հետեւեալ տխուր և համառօտ նամակն ընդունած էր, թէ « Կոմսուհին Սիպերիա աքսորուած է, իսկ Պետրոս ծառան փախչիլ փորձած ըլլալուն համար անմիջապէս պիտի գըլխատուի »։

Ստանիսլաւի առաջին սրբութիւն առնելու ժամանակը մոտեցած ըլլալով, միշտ ինքնիրեն կ'ըսէր. « Ա՜խ, կ'ուզեմ որ առաջին սրբութիւն առնելու օրս մայրս քովս գտնուի », և կը

սկսէր աւելի ևս եռանդեամբ ընել իր աղօթքները, Աստուածածինը ի գութ շարժելու համար։ Սրբութիւն առնելէն ինն օր առաջ սկսաւ Աստուածածնայ ինն օրեայ ջերմեռանդութիւն ընել, հաստատուն կերպով միտքը դնելով թէ Աստուածածինը անպատճառ մայրը իրեն պիտի վերադարձնէ. և մանկական անմեղութեամբ կը զարմանար թէ ինչո՞ւ կ'ուշանար իր խնդիրքը կատարելու։ Շաբաթ երեկոյին, որուն երկրորդ օրը առաջին Հաղորդութիւնը պիտի ընդունէին տղաք, բոլոր ծնողքները դպրոց եկած էին, իրենց որդւոց ուրախակից ըլլալու և զանոնք օրհնելու։ Սոքոլովսքի կոմսն ալ եկած էր իր որբ և սիրելի Ստանիսլաւը օրհնելու։ Երբ անոր շուշանա-

փայլ ճակատը համբուրելով կ'օրհնէր, Ստանիսլաւ մանկական պարզութեամբ մը հօրը դառնալով ըսաւ. «Սիրելի հայրիկ, միայն քու օրհնութեամբդ գոհ չեմ ըլլար, կ'ուզեմ որ սիրելի մայրս ալ զիս օրհնէ. ան ինչո՞ւ չի գար, ինչո՞ւ կ'ուշանայ». և սկսաւ լալ։ Հայրը իր որդւոյն յուզումը տեսնելով, ինքն ալ սաստիկ յուզուեցաւ և արցունքի քանի մը կաթիլներ փայլեցան երեսին վրայ. իսկոյն հեռացաւ անկէ, իր այլայլութիւնը զսկէն ծածկելու համար։

Երեկոյեան ժամը հինգին, երբ փոքրիկ Ստանիսլաւ դէպ ի դուռը կ'երթար, անշուշտ իր սիրելի այցելուին հանդիպելու համար, վարժարանի ուսուցիչներէն մին դիմացն ելաւ ըսաւ. «Այս

գիշեր, առանձնութեան գեղեցիկ ժամանակ է, սիրելի բարեկամս. ալ այցելուներ ընդունելու ժամանակն անցած է. խօսարան գնա՛ աշակերտակիցներուդ քով»։ Ստանիսլաւ Աստուածածնայ ուրիշ նուէր մ'ալ ընելու համար խօսարան չգընաց, այլ բոլորովին առանձնացած կը պտըտէր և երբեմն երբեմն ինքն իրեն կ'ըսէր. «Անշուշտ երբ մայրս հասնի, ամէն բանէ առաջ զիս պիտի փնտռէ»։

Ընթրիքէն վերջ, երբ աշակերտները ննջարան երթալու համար կարգաւ շարուած էին սրահին մէջ, խեղճ, տժգոյն և տկարակազմ կին մը դռնապանին կ'աղաչէր որ Ստանիսլաւը տեսնէ։ Դռնապանը անոր սաստիկ թախանձանքին վրայ՝ հազիւ թոյլ տուաւ որ կարենայ

պատուհանէն ներս նայիլ. կինը անյապաքար բոլոր աշակերտաց վրայ ակնարկ մը նետելէ յետոյ ճանչցաւ որդին և «ահաւասիկ, ահաւասիկ» ըսելով պոռաց և մարած գետին ինկաւ։ Այս կինը կոմսուհին էր. զինքը Սիպերիա տանող զինուորնեբուն ձեռքէն փախչելով՝ անմիջապէս Գաղղիա անցած էր. քովը ոչ դրամ և ոչ ալ օգնող մը ունենալով, ստիպուած էր աղախին ըլլալ. բայց դիպուածով լսելով Ստանիսլաւի դպրոցին անունը, ուղղակի հոն եկած էր որդին գտնելու։

Հետեւեալ օրը շատ երջանիկ էր Սոքոլովսքի ընտանիքը, որովհետեւ այնչափ տառապանքներէ և իրարմէ հեռու ապրելէ վերջ, կրցան զիրար կրկին գըտնել, ներկայ ըլլալու համար ի-

բենց սիրելի զաւկին Ստանիսլաւի առաջին Սրբութիւն առնելու շքեղ հանդէսին։

Ե

Կորսուած վարդարանը

Բարիզու Բազմարուեստից կոչուած վարժարանին մէջ, որ շատ նշանաւոր էր իր փայլուն և բազմաթիւ աշակերտներով, որոնք ընդհանրապէս Գաղղիոյ մէջ բարձր դիրքեր կը գրաւէին, 1840ի աշնանը դէպք մը պատահեցաւ, որ ցոյց կու տայ թէ հոն ինչպիսի կրօնական զգացումներ կը տիրէին։

Օր մը երկրաչափութեան սրահին մէջ Վարդարան մը գտնուեցաւ, որ մեծ ազմուկ և հետա-

քըրքրութիւն պատճառեց. որով-
հետեւ աշակերտներէն շատերը
չարաճճիութեամբ կ'ուզէին ի-
մանալ թէ ո՞վ էր այդ կրօնա-
կան նախապաշարումներ ունե-
ցողը, քանի որ իրենք կրօնքը
նախապաշարում կը համարէին
կամ այնպէս կ'ուզէին կեղծել։
Վարժարանի բակին մէջ ծառ
մը կար ուր կը կախուէին գըտ-
նուած առարկաները. ուստի
վարդարանն ալ հոն կախուե-
ցաւ, և գտնողը՝ խօսքը աշա-
կերտակիցներուն ուղղելով ը-
սաւ. «Պարոններ, այս առար-
կան ես գտայ և վստահ եմ թէ
նուէր մ'է անոր՝ որուն կը պատ-
կանի, ուստի թող առնէ»։ Ա-
մէն ոք չարութեամբ կը ծիծա-
ղէր և հետաքրքրութեամբ կը
սպասէին թէ ո՞վ պիտի համար-
ձակէր իրեն ըլլալն յայտնել։

Ազնուական երիտասարդ մը վար-
դարանը տեսնելուն պէս՝ որ ի-
րենն էր, առաջ անցաւ և առ-
նելով զայն ըսաւ. «Շնորհակալ
եմ, պարոն ընկեր. այս սրբա-
զան առարկան իմս է և շատ
լաւ ըսիք, որովհետև մօրս միակ
նուէրն է»։ Այս պարզ և հա-
մարձակ խօսքին վրայ, բոլոր
աշակերտները եռանդով ծափա-
հարեցին զինքը։ Այս երիտա-
սարդը առաջին կարգի վկայա-
կանով աւարտեց դպրոցին շըր-
ջանը և Գաղղիոյ մէջ շատ նշա-
նաւոր եղաւ։

Աստուածասէր հոգի մը բնաւ
ամչնալու կամ կարմրելու չէ իր
կրօնական ուղիղ համոզումները
խոստովանելու ատեն։

Զ

Աղջիկ մը յաղթուած Եւտիքական մը

Երեկոյթի մը մէջ, Եւտիքական մը իր գիտութիւնը և կրօնքը ցուցնելու և բացատրելու մարմաջէն բռնուած, սկսաւ կրօնքի բարձր նիւթերու վրայ ճառել։ Հոն ներկայ էր նաեւ փոքրիկ աղջիկ մը, որ լաւ սորված էր քրիստոնէական վարդապետութիւնը։ Եւտիքականը ի Քրիստոս մէկ բնութիւն ըլլալը ապացուցանելու համար, օրինակ մը բերաւ, թէ «ինչպէս երկու երկաթի կտորներ տաքցնելով և ծեծելով մէկ երկաթ կ'ըլլան, ասանկ ալ Քրիստոսի մէջ մարդկութիւնը Աստուածութեան հետ միանալով՝

կը կազմեն մէկ անձնաւորութեան հետ մէկ բնութիւն»։ Աղջիկը համեստութեամբ մը պատասխանեց անոր. «Պարոն, փոխանակ երկաթի կտորին՝ առնենք ոսկիի կտոր մը և երկաթի կտորին հետ ձուլելով ընենք մէկ կտոր, այն ժամանակ, ես քեզի պիտի հարցնեմ, թէ այդ ձուլուած կտորը ոսկի՞ է թէ երկաթ. չէ՞ որ իւրաքանչիւրը իր բնութիւնը կը պահէ՝ մէկ կտոր ըլլալով հանդերձ։ Ճիշտ այսպէս ալ Աստուածային և մարդկային բնութիւնները միացած Աստուածային անձին մէջ, կը կազմեն մէկ անձն և երկու բնութիւն. որովհետեւ՝ Աստուածութիւնը իր մէջ չի տարբալուծեր մարդկութիւնը, այլ իրարմէ զատ և որոշ կը մնան»։ Ճառախօսը՝ որ այսպիսի պա-

տասխանի մը չէր սպասեր, խայ-
տառակուեցաւ ու լռեց։

Է

Հոգեվարքին ծիծաղը

Շատ տարիներէ ի վեր ան-
դամալոյծ եղած խեղճ ծեր մը
տեսնելով թէ պիտի մեռնի, իր
անկողնին քով հաւաքել տուաւ
գերդաստանին բոլոր անդամնե-
ը, վերջին անգամ մ'ալ ա-
նոնցմով մխիթարուելու համար։
Հիւանդին երեսին վրայ կը կար-
դացուէր անդորրութիւն և խա-
ղաղութիւն. մեղմիկ մը գոցած
էր աչքերը և կը կարծուէր թէ
կը քնանայ. միայն երբեմն եր-
բեմն երեսին վրայ անուշ ժպիտ
մը կը տեսնուէր։ Աղջիկը, սե-

նեկին մէջ տիրող տխուր լը-
ռութիւնը փարատելու համար
հարցուց հիւանդին. «Հայր,
ինչո՞ւ այդչափ ուրախ ես և
ստէպ կը ծիծաղիս»։ Ծերը՝ այս
հարցման տկար ձայնով մը պա-
տասխանեց. «Առաջին անգամ
ծիծաղեցայ, մտածելով աշխար-
հիս ունայնութիւնը, և մասնա-
ւորապէս անոնց վրայ, որոնք
ոչինչ հաճոյքի մը համար կա-
պուած են աշխարհիս. երկրորդ՝
յիշելով այն բոլոր կրած նեղու-
թիւններս որոնք զիս երջանկու-
թեան մօտեցուցին. երրորդ՝ այն
բանին համար, որ մինչդեռ ու-
րիշները մեռնելէ կը վախեն՝ ես
չմեռած պահապան հրեշտակս
կը տեսնեմ, որ պատրաստ է
զիս արքայութիւն տանելու»։
Հազիւ վերջացուցած էր բարե-
պաշտ ծերը իր խօսքերը, հոգին

աւանդեց։ Մահը ոչ սարսափ և ոչ ալ դառնութիւն կ'ազդէ ա-նոնց՝ որոնք միշտ պատրաստ և առաքինի եղած են։

Ը

Մարիամու տերևը

1870ին՝ Կալկաթայէն քա-րոզչի մը գրած նամակին մէջ հետեւեալը կը կարդանք։ Հնդիկ գիւղ մը, ուր հազիւ մի քանի տուն քրիստոնեայ կը գտնուէր և որոնք միայն Աստուածածնայ նուիրուած փոքրիկ մատուռ մը ունէին, երաշտութեան պատճա-ռաւ բրինձի բոլոր դաշտերը այրած ըլլալով՝ սաստիկ աղքա-տութեան մէջ ինկած էր։ Այս-պիսի լքեալ վիճակի մէջ հեթա-

նոս ժողովուրդը չուարած թէ ո՞ր աստուծոյն դիմեն, քանի որ շատ մը աստուածներ կը պաշ-տէին, ուզեցին ամենէն զօրա-ւորին դիմել. և զայն միւսներէն որոշելու համար, իրենց աս-տուածներուն թուով չոր տերեւ-ներ ընտրեցին և իւրաքանչիւ-րին անունը առանձին գրեցին. այդ աստուածներուն կարգին մէջ դրին նաև Աստուածածնայ անունը։ Խարոյկը վառուեցաւ և տերևները նետուեցան հոն. բայց հազիւ կրակին մօտեցած էին, ամէնն ալ մոխիր դարձան, բաց ի Մարիամու օրհնեալ անունը կրող տերեւէն։ Աստուած տես-նելով ասոնց միամիտ ջերմե-ռանդութիւնն առ Տիրամայրն, որոնք դեռ զինքը չէին ճանչնար, խղճաց վրանին և այս կերպով ուզեց փրկել զանոնք թէ ժամա-

նակաւոր նեղութենէն և թէ յաւիտենական դատապարտութենէ։ Հեթանոսները երբ այդ տեսան, ուրախութեամբ և յուսով առնելով տերեւը, անմիջապէս Աստուածածնայ մատուռը դիմեցին, և հոն գետնամած անձրեւ կը խնդրէին. դեռ չաւարտած աղօթքնին՝ անմիջապէս երկինքը ամպոտեցաւ և սկսաւ առատ անձրեւ տեղալ, որով բրինձի բոլոր դաշտերը ուռճացան և առատ հունձք տուին։

Հնդիկները ուրախացած և այս գերբնական զօրութեան վրայ զմայլած, գիւղի քարոզչին դիմեցին ու մկրտուելով քրիստոնեայ եղան։

Թ

Բարեպաշտ մտածուրիւն

Քրիստոնէի մը համար օգտակար և աստուածահաճոյ մտածութիւններէն մէկն ալ իր մահն է, քանի որ անոր միջոցաւ պիտի կարենայ իր ախտերէն հեռու մնալ և յաւիտենական երջանկութեան արժանանալ։ Ս. Յովհան Ոսկրմած, Երուսաղեմի պատրիարքը, օրուան մէջ իր գերեզմանը փորելու ժամանակ մը որոշած և պատուիրած էր իր սարկաւագներուն, որ հանդէսի ժամանակ միշտ ըսեն իրեն. «Տէր, գերեզմաննիդ դեռ պատրաստ չէ. հրաման ըրէք որ լմնցնեն. ինչու ձեր մահը չէք մտածեր»։

Ժ

Ս. Մարտինի վերջին խօսքերը

Ս. Մարտինի աշակերտները, իրենց Վարդապետին մեռնելէն քիչ առաջ քովը գալով՝ կ'աղաչէին անոր որ հանգիստ դիրքով մը պառկի. եպիսկոպոսը պատասխանեց անոնց. « Թողուցէք որ աւելի երկնքին նայիմ քան թէ երկրիս, որպէս զի կարենամ գիտել այն ճանապարհը, որ հոգիս մարմնէս բաժնուելէն վերջ պիտի կտրէ և անցնի »։

ԺԱ.

Մում մը առ Տիրամայրն

Երկու ծերեր, այր և կին, խեղճութեամբ կ'ապրէին ողորմելի

տան մը ձեղունին մէջ, տարեկան չնչին վարձք մը վճարելով։ Շատ անգամ առանց ուտելու կը պառկէին, յաճախ իրենց կերակուրն էր չոր հացի թրջած կտրուանք։ Չէին ուզեր իրենց ազգականներուն կամ ուրիշներու իմացնել աղքատութիւնին, որովհետեւ մուրալու վարժած չէին։ Ժամանակաւ մեծ ու հարուստ ընտանիք մը եղած էին. վերջը սնանկանալով և ունեցածնին քիչ քիչ կորսնցնելով կարօտ վիճակի մը հասած էին։

Շաբաթ օր մը, շատ խղճալի դրութեան մը մէջ կը գտնուէին. ոչ դրամ ունէին, ոչ կերակուր և ոչ իսկ հացի կտոր մը. ցորեկը բաւական նեղութեամբ անցուցին. իսկ գիշերը ստիպուած էին անօթի պառկիլ։ Երկուքն ալ կու լային և

կ'աղօթէին. անօթութիւնը սկը-
սած էր զիրենք նեղել. 48 ժամէ
աւելի էր որ բերաններին բան
դրած չէին և պաղ քրտինքը
իրենց երեսն սկսած էր թրջել։

– Խեղճ կինս, մենք պիտի
մեռնինք, ըսաւ ծերը, Աստուած
զմեզ երեսէ թողուցեր է։

Պառաւը չպատասխանեց՝ բայց
քիչ վերջ գլուխը վերցնելով,
կարծես ներշնչում մ'ունեցած
ըսաւ.

– Սիրելի ամուսինս, աղօ-
թենք Աստուածածնի, անիկա
վշտացեալներուն օգնական է.
ան զմեզ պիտի ազատէ։

– Շատ լաւ, պատասխանեց
ծերը. զգրոցիս մէջ փոքրիկ մոմ
մը մնացեր է, ան ալ Տիրամօր
պատկերին առջեւ վառենք։

Երկու դժբախտները այս վեր-
ջին յոյսէն ոգեւորուած, գիշե-

բուան մթութեան մէջ դժուա-
բաւ գտան մոմը, վառեցին Աս-
տուածածնի պատկերին առջեւ.
և ծնրադիր ու լալագին օգնու-
թեան կը կանչէին ան՝ որ իրեն
դիմողները բնաւ ձեռնունայն չէ
թողած։

Գործաւոր մը միւնոյն բա-
կին մէջ դիմացի յարկը կը բը-
նակէր. երբ ան իր հիւանդ տղուն
ջուր տալու համար ելած էր,
պատուհանէն տեսաւ որ մոմ մը
կը վառէր. իսկոյն հագուեցաւ և
կանթեղն առած անոնց քով գնաց։

Հազիւ թէ դուռը բացաւ,
զարմացաւ տեսնելով այդ խեղ-
ճերուն վիճակը, որոնք անօ-
թութենէ նուաղած և գրեթէ
չնչասպառ՝ հազիւ կրնային կե-
նալ, աւելի ծռած էին քան թէ
ծնրադրած Տիրամօր պատկերին
առջև։

Երկու թշուառները պատմեցին իրենց խեղճութիւնը. անոր վրայ բարի դրացին շուտ մը տուն վազելով՝ արգանակ, հաց և ուրիշ կերակուր բերաւ անոնց, և այս կերպով մխիթարեց երկու բարի ծերերը։

Երկրորդ օրը, դրացին անմիջապէս լուր տուած էր իրենց ժողովրդապետին, որ ստէպ կ՚այցելէր և կ՚օգնէր անոնց։ Իսկ մի քանի օր վերջ իրենցմէ հեռու գտնուող ազգականներէն մին փոքրիկ գումար մը ղրկած էր իրենց։ Այս կերպով բոլորովին ազատեցան թշուառութենէ։

Բարի ծերերը իրենց պատահած այս դէպքը շատերուն պատմեցին՝ իմացնելու համար Տիրամօր պաշտպանութիւնը բոլոր անոնց վրայ՝ որոնք իրեն կը դիմեն։

ԺԲ

Դիւցազնական զոհողութիւն մը

Մարիամ անունով թիրոլցի աղջիկ մը, իր ոչխարները արածելու ժամանակ Ս. Աստուածածնի նուիրուած երգ մը կ՚երգէր։

Միլանի թատրոնին վերատեսուչը որ դիպուածով այն կողմերէն կ՚անցնէր, լսելով անոր մեղամաղձոտ և անուշ ձայնը՝ զմայլեցաւ և ուզեց հետը տանիլ աղջիկը. ուստի քովը գնաց և խնդրեց որ մօրը տանի զինքը. աղջիկը անոր մտածութեան բոլորովին անտեղեակ, զարմանքով մը հարցուց.

– Բայց, պարոն, այս իմ ոչխարներս ո՞վ պիտի նայի։

– Թող ոչխարներդ, ես անոնց տեղ հարիւրապատիկ, հազարապատիկ կը վճարեմ քեզի, ըսաւ վերատեսուչը։

– Ուրեմն ինչ կ'ուզես մօրմէս, ըսաւ Մարիամ սարսափած։

– Քու միջոցաւդ զինքը խեղճութենէ պիտի ազատեմ և ըզքեզ իմ թատրոնիս առաջին երգչուհին պիտի ընեմ։

– Պարոն, քու խոստումներդ ինծի շատ հաճելի չեն թուիր, որովհետև անկարելի է որ մարդս կարենայ թատրոնին մէջ իր համեստութիւնը պահել. ես հաւատք ունիմ որ Աստուած և Ս. Կոյսը ինծի միշտ ուժ պիտի տան ու ես իմ աշխատութեամբս պիտի պահեմ մայրս և փրկեմ իմ հոգիս։

Վերատեսուչը այս վերջնա-

կան պատասխանը լսելով հանդերձ բնաւ չյուսահատեցաւ և մօրը տունը գնաց։ Երբ Մարիամ երեկոյին տուն դարձաւ, դաշնագրութիւնը աւարտած էր արդէն. ուստի նոյն գիշերն իրեն ժամանակ տուին մտածելու և պատրաստուելու։ Աղջկան համար փորձութիւնը մեծ էր. թէեւ իր մէջ դեռ արթնցած չէր զարդարանքի, փառքի և հանդէսի բաղձանքը, բայց պէտք էր մայրը մտածել, և այս երկրորդ վիճակովը պիտի կարենար դիւրութեամբ հոգալ։ Այս հոգեկան տագնապալից վիճակին մէջ սկսաւ Ս. Կուսին աղօթել. այդ միջոցին կարծէք ներքին ձայն մը իրեն ըսաւ. «Զեմ ընդունիր բնաւ, աղջիկս, որ սատանային համար Աստուածը թողուս։

Երբ լուսցաւ, մերժեց երթալը. մայրը զայրացաւ, պոռաց, լացաւ և նոյն իսկ սպառնաց բռնի տանիլ, եթէ մէկ ժամուան մէջ չպատրաստուի մեկնելու։

Մարիամ մէկ կողմ քաշուած կը մտածէր թէ ինչ ընելու էր այս անտանելի կացութենէն ազատելու համար. յանկարծ միտքը ինկաւ թէ առջևի ակռաները կորսնցնելով՝ ձայնը կը փոխուի, ուստի՝ կամաց մը պատուհանին մօտեցաւ և ակռաները անոր եզերքի քարին զարնելով՝ երկուքը կոտրեց, և վերջը անտարբերութեամբ և ուրախ դէմքով մը մօրը և վերատեսչին քով գնաց. մայրը անոր ուրախութիւնը տեսնելով՝ ինքն ալ ուրախացաւ, կարծելով թէ այլ ևս կ՝ուզէ կատարել իրենց կամքը. բայց վերատեսուչը անմի-

ջապէս նշմարեց անոր ձայնին կրած փոփոխութիւնը և իր ծրագրէն ետ կեցաւ, զարմանալով հովուուհիին քաջասրտութեան և պարկեշտութեան վրայ, և յորդորեց մայրը՝ որ այսպիսի գովեստի և սիրոյ արժանի աղջիկ մը չվշտացնէ։

ԺԳ

Յանձնարարութիւն մը առ Ս. Աստուածածին

Երիտասարդ մը իր տարեկիցներուն հաճոյ ըլլալու համար, մանկութեան բարեպաշտութիւնը թողած՝ ինքզինքը իմաստակութեան տուած էր։ Օր մը Բարիզ մեկնելէն առաջ, քաղա-

քավարութեան համար, իր ընտանեաց բարեկամ տիկնոջ մը այցելեց, իբր հրաժեշտի ողջոյնը տալու և միանգամայն հարցնելու թէ յանձնարարութիւն մ'ունէ՞ր արդեօք։ Տիկինը շատ սիրով ընդունեցաւ, և ըսաւ թէ ուրիշ յանձնարարութիւն չունի բաց ի մէկ բանէ, որ թերեւս չհաճի կատարել։

– Հրամայեցէք, տիկին, պատասխանեց երիտասարդը, սիրով պատրաստ եմ ձեր յանձնարարութիւնը կատարելու։

– Շատ շնորհակալ եմ, պարոն. ուրեմն, Բարիզ հասնելնուդ պէս՝ Ս. Աստուածածնի (Նօթրը – Տամ) եկեղեցւոյ մէջ հաճեցէք Ողջոյն քեզ Մարիամ աղօթքն ըսել իմ դիտաւորութեանս։

Երիտասարդը պատշաճութեան համար յանձն առաւ. բայց այդ յանձնարարութիւնը իրեն շատ ախորժելի ու յարմար չեկաւ, քանի որ սրտին մէջ կրօնական զգացումները մարած էին։

Երիտասարդը Բարիզ հասնելով, բոլոր նշանաւոր տեղերը այցելած էր. միտքն էր նաեւ Ողջոյն քեզ Մարիամ աղօթքին յանձնարարութիւնը և իր խոստումը, բայց կ'ուզէր մոռքէն հանել. «որչափ անխոհեմ եմ, կ'ըսէր ինքն իրեն, երանի՜ թէ այցելութեան գացած չ'ըլլայի. այլ ես ի՞նչ կրնամ ընել, պէտք է խոստումս կատարեմ»։ Վերջապէս օր մը այցելեց այն փառահեղ տաճարը, և խոստումը կատարելու համար կէս մը ծունրադրեց. սակայն առջի բերան չէր յիշեր այն աղօթքը, և բա-

ական մտածելէն և յիշողութեան խորշերուն մէջ փնտռելէն վերջ՝ յիշեց և արտասանեց...։ Ինչպէս կրակ կտրած ածուխ մը քովը դրուած չոր փայտերը կ'այրէ, այսպէս եղաւ նաև երիտասարդին. միտքը ինկան մանկութեան անուշ և անմեղ օրերը, իր առ Տիրամայրն ունեցած վաղեմի սէրը և առաջին Սրբութիւն առնելու օրուան եռանդուն զգացումները և առաջադրութիւնները, և տեսնելով ներկային մէջ ունեցած անտարբեր և ցուրտ վարմունքը, սկսաւ սաստիկ կերպով լալ։ Ցարգոյ Աւագերէցը որ նոյն ժամանակ եկեղեցւոյն մէջ կը գտնուէր, անմիջապէս քովը գնաց և անուշ խօսքերով մխիթարեց, յիշեցնելով Աստուծոյ մեծ ներողամտութիւնը։ Երիտասարդը՝ առանց ժամանակ

կորսնցնելու, անմիջապէս խոստովանեցաւ իր մեղքերը. և մի քանի օր ալ ուշացնելով իր վերադարձը, ընդունեցաւ Ս. Հաղորդութիւնը ճիշտ այն զգացումով, ինչ որ իր առաջին հաղորդուելուն ունեցած էր։ Երբ իր քաղաքը վերադարձաւ, առաջին այցելութիւնը տուաւ Ողջոյն քեզ Մարիամ աղօթքն յանձնարարող տիկնոջ։ Տիկինը շատ չզարմացաւ երիտասարդին բարոյապէս փոխուած ըլլալը լսելով, որովհետեւ ինքն ալ գրեթէ ատոր կը սպասէր։

❧

ԺԴ.

Բողոքականութիւնը ինչ բանի կը հաւատայ և ինչ կ'ուրանայ

Ուղղափառ մը և բողոքական մը միասին նաւով ճամբորդած ատենին, իրենց կը միանայ նաեւ հրեայ Ռաբբի մը։

– Ո՜հ, կ'ըսէ բողոքականը, ահաւասիկ երեք այլ և այլ կրօնքներ. մեզմէ ո՞րը իրաւունք ունի։

Ռաբբունին խօսք առնելով անմիջապէս կը պատասխանէ.

– Եթէ Մեսիան եկած չէ, ես իրաւունք ունիմ. իսկ եթէ եկած է՝ իրաւունքը Ուղղափառինն է. գալով քեզի, ըսաւ Բողոքականին, քու վարդապետութիւնդ միշտ տարտամ ու տարակուսական է։

Բողոքական նախարար մը Ուղղափառ դուքսի մը հետ խօսելով կ'ըսէ.

– Ձեմ կրնար հանդուրժել այն թեթեւամիտներուն, որոնք իրենց կրօնքը կը փոխեն։

– Ո՛չ իսկ ես, կը պատասխանէ դուքսը, եթէ իմիններս նախապէս իրենց կրօնքը փոխելու սխալը գործած չըլլային՝ պիտի չստիպուէին կրկին առաջինին դառնալ։ Բողոքական մը եթէ դառնայ ուղղափառ ըլլայ, կրօնքը փոխած չ'ըլլար, այլ իր հայրերուն գործած սխալը սրբագրած կ'ըլլայ։

Ուղղափառ մը գործի պատճառաւ միայնակ կը բնակէր բողոքական երկիր մը. տեղւոյն ժողովուրդը տեսնելով անոր սաստիկ կրօնասիրութիւնը, կը

հարցնեն թէ՝ անշուշտ պիտի չ'ուզէ որ մեռնելէն վերջ այն երկրին մէջ թաղուի, քանի որ իր ոսկրները բողոքականաց ոսկրներուն պիտի խառնուին։

Կը պատասխանէ ուղղափառը.

– Իրաւ է որ չեմ ուզեր. բայց եթէ գերեզմանս քիչ մը աւելի խորունկ փորէք, այն ժամանակ ուղղափառներու ոսկրներուն հետ կը խառնուի իմինս ալ։

ԺԵ

Վանքի խոհարարուհին

Ս. Յովհաննէս Կլիմաքոս, Եգիպտոսի մէջ 330 կրօնաւորուհիներ ունեցող վանք մը այցելելով, զարմացաւ մասնաւորապէս խոհարարուհի քրոջ առաքինութեան վրայ։ Այս քոյրը շարունակ աշխատութեան մէջ

տեսնելով, հարցուց թէ ի՞նչ կերպով կ'արդիւնաւորէ իր աշխատութիւնը, և ի՞նչ աղօթք կ'ընէ։

Բարի կրօնաւորուհին պատասխանեց սուրբին հարցումներուն.

– Երբ սեղանի ժամանակ իմ քոյրերուս կը ծառայեմ, միտքս կը դնեմ թէ մարդու կամ ինծի նմաններու չեմ ծառայեր, այլ իմ սիրելի Աստուծոյս՝ որ իր ծառաներու կերպարանքին ներքեւ վանքին մէջ կը գտնուի. իսկ խոհանոցին մէջ, միշտ առջեւս տեսնելով կրակը որ կը վառի, կը մտածեմ այն կրակը՝ որ զԱստուած վշտացնող հոգիները կ'այրէ դժոխքին մէջ։

Սուրբը այս պատասխանիս վրայ շատ շինուելով, և տեսնելով կրօնաւորուհիին հաստատ

համոզումը, օրհնեց և ուրախութեամբ մեկնեցաւ անկէ։

ԺԶ

Երեք հայելիները

Մարիամ Թերեզ Բ.... տասն և հինգ տարեկան աղջիկ մը, գիշերօթիկ դպրոցի մը բարձրագոյն աշակերտուհիներէն, դիպուածով կը կոտրէ իր հայելին։ Հայելի մը կոտրել, շատ մեծ կորուստ է աղջկան մը համար, որովհետեւ անոր զարդարանքի միակ գործիքն է։ Ուստի նստելով՝ անմիջապէս նամակ մը կը գրէ մօրը, որպէս զի փութով իրեն հայելի մը ղրկէ։ Մօրը պատասխանը շուտով հասաւ, որ այսպէս կը

վերջացնէր նամակը. «Սիրելի աղջիկս, քու փափաքդ անմիջապէս պիտի կատարեմ. մի քանի օրէն կը ստանաս խընդրածդ աւելին, երեք հատ հայելիներ. առաջինին մէջ պիտի տեսնես՝ ինչ որ ես, երկրորդին մէջ՝ ինչ որ պիտի ըլլաս, և երրորդին մէջ՝ ինչ որ պէտք ես ըլլալ»։

Աղջիկը նամակը կարդալով շատ ուրախացաւ, և եռանդեամբ մը համբուրեց մօրը գրութիւնը։ Բայց վերջը՝ մօրը այս գրութեան վրայ սկսաւ մտածել և շատ խորհրդաւոր գտաւ. ինքն իրեն կ'ըսէր. «Երեք հայելիներ, ի՞նչ կը նշանակէ այս առակը». և հազարումէկ մտածութիւններ կ'անցընէր մտքէն։ Երկու օր անհամբեր սպասելէն վերջը, երրորդ օրը մարդ մը փոքրիկ

սնտուկ մը բերելով՝ իրեն յանձնեց. աղջիկը առանց վայրկեան մը անցընելու բացաւ զայն. ծրարները խնամքով կապուած և վրաները գրուած էին. հոս պիտի տեսնէս ինչ որ դուն կս, գրուած էր առաջինին վրայ. բացաւ և փոքրիկ ու սիրուն հայելի մը գտաւ՝ որուն մէջ իր դէմքը կը ցոլար կենդանի, յստակ և շնորհալի՝ իր տասն և հինգ տարեկան փայլոնն ու թարմութեամբը։ Մարիամ Թերեզ անմիջապէս երկրորդ ծրարն առաւ, որուն վրայ գրուած էր. Հոս պիտի տեսնես՝ ինչ որ պիտի ըլլաս. հազիւ թէ բացած էր՝ աչքին զարկաւ պատկեր մը՝ որ մեռելի մը չոր գանկը կը ներկայացնէր։ Ցանկարծակիի եկաւ. քիչ մը շուարած մնալէ վերջ՝ սկսաւ մտածել իր վախճանը.

ըմբռնեց գեղեցկութեան ոչնչութիւնը և վաղանցիկ ըլլալը. և թէ ինքն ալ ծաղկի մը պէս թառամելով՝ պիտի կորսնցնէր իր թարմութիւնը։ Մարիամ Թերեզ բաւական ժամանակ մօրը տուած խրատին վրայ խորհրդածելէն վերջ՝ մտադրեց անկէ միշտ բարի օրինակ առնել։ Կարգը երրորդին էր, որուն մէջ պիտի տեսնէր թէ՝ ինչ պէտք էր ըլլար։ Այդ խնամքով կապուած առարկան ալ խոհեմութեամբ մը դուրս հանեց, զգուշութեամբ բացաւ և ինչ տեսնէ. փոքրիկ և շնորհալի արձանիկ մը Ս. Կուսին, որուն վրայ կը փայլէին Աստուածածնի մաքուր պարկեշտութիւնը, գըթութիւնը և բոլոր կատարելութիւնները։ Մարիամ Թերեզ անմիջապէս ծունկի եկաւ, եռանդուն աղօթք մը ըրաւ, առա-

ջադրեց միշտ անոր նմանիլ և Աստուածածնի օգնութիւնը խընդրեց. երբ ոտքի ելաւ, լուսաւորուած և փոխուած էր։ Իրօք իր բոլոր կեանքը սրբութեամբ անցուց և Ջերմեռանդ նմանող մ'եղաւ Ս. Աստուածածնի։

Ո՞րչափ օգտակար է բարեպաշտ մօր մը խրատը և բարի օրինակը, և ընդհակառակն ի՞նչ սարսափելի՝ մօր մը անհոգութիւնն ու չար օրինակը։

ԺԷ

Արքայուրեան դաղձանք

Սուրբն Իգնատիոս Աստուածազգեաց, Անտիոք քաղաքին եպիսկոպոսը, 106 թուին մարտիրոսացաւ՝ քրիստոնեայ ըլլա-

լուն համար։ Այս Ս. Հայրապետս երբ իմացաւ թէ Հռովմ քաղաքին քրիստոնեայ երևելիները զինքը պիտի ազատեն դահիճներուն ձեռքէն, անոնց հետեւեալ նամակը գրեց. «Ձիս զազաններուն կերակուր պատրաստած են. ոհ, երանի՛ թէ անոնք զիս կտոր կտոր ընէին. միակ փափաքս այս է՝ որ շուտով զիս կտոր կտոր ընեն, ինչպէս ուրիշները եղան Քրիստոսի համար։ Կը տեսնեմ որ մահս կ'ուշանայ, որովհետեւ հոս չեն ուզեր ինծի դպչիլ. եթէ հոս ալ Հռովմի կրկեսին գազանները չուզեն ճաշել ինծի, ես զանոնք պիտի գրգռեմ...։ Աշխարհիս բոլոր երջանկութիւնը և վայելքը չեմ մտածեր. միակ փափաքս է այս մարմնէն ելլել և Յիսուսի հետ միանալ։ Ձեմ վա-

խեր ոչ այրելէն, ոչ խաչուելէն, ոչ գազաններէն, ոչ ոսկրներուս փշրուելէն, ոչ անդամներուս խանգարուելէն, ոչ մարմնոյս տգեղնալէն, ոչ ալ սատանային հազարաւոր չար հնարքներէն։ Բոլոր աշխարհիս թագաւորութիւնը, բոլոր աշխարհիս հարստութիւնը չեն կրնար ինծի վնասել։ Այն որ մեզի համար մեռաւ և յարութիւն առաւ, ես անոր համար ցորեն եմ.... Սուտ գթասրտութիւնը թողէք և զիս ազատելու մի՛ աշխատիք. թողէք որ զԱստուած վայելելու համար գազաններուն կերակուր ըլլամ։ Ես Աստուծոյ ցորենն եմ, պէտք է որ առիւծներու ակռաներուն տակ մանրուելով, Յիսուսի Քրիստոսի հաց ըլլամ...»։

ԺԸ

Սուրբ Աստուածածնի Անարատ Յղութեան իբր հաւատոյ մաս ընդունելիը

Սուրբ Աստուածածինը՝ որ ի յաւիտենից սահմանուած էր Որդւոյն Աստուծոյ մայր ըլլալու, բոլոր իր կատարելութեանց հետ պէտք էր որ անարատ յղացած ըլլար. և այս կը հաստատուի թէ՛ մարգարէներուն և թէ Ս. Հայց գրութիւններէն։

Որովհետեւ ո՛և է հաւատոյ մասն կազմող խնդիր Եկեղեցիէն չհաստատուած՝ կրնայ վիճելի նիւթ ըլլալ, անոր համար այս վարդապետութիւնն ալ մինչեւ 19երորդ դարը վարդապետներու և աստուածաբաններու



վէճի նիւթ դարձած էր. բայց երբ այլ եւս անկարելի եղաւ ճշմարտութեան դէմ պատճառաբանել, և հաւատացեալներէն միահամուռ սկսան աղաչանքի ձայներ և աղերսներ տեղալ առ եկեղեցական իշխանութիւնը, այն ատեն Եկեղեցին զիջաւ անոնց թախանձանքին, և իբր հաւատոյ մաս սահմանեց Աստուածածնի Անարատ Յղութիւնը, և ընդհանուր եկեղեցւոյ պաշտօնապէս ծանուցանելու համար՝ սահմանեց 1854 տարւոյ դեկտեմբեր 8ին օրը։ Աշխարհիս ամէն կողմերէն ուխտաւորներ և թէ հետաքրքիրներ լեցուած էին Հռովմ։ Պիոս Թ. քահանայապետը անձամբ մատոյց ձայնաւոր պատարագը Ս. Պետրոսի եկեղեցւոյն մէջ։ Աւետարանի ընթերցումէն անմիջապէս վերջ,

եկեղեցւոյ մէջտեղը յատկապէս պատրաստուած գահու մը վրայ բազմեցաւ քահանայապետը, իր շուրջն ունենալով բազմաթիւ Պատրիարքներ, Կարդինալներ և Եպիսկոպոսներ, որոնք կը ներկայացնէին իրենց ազգի ազգի տարազներով ընդհանուր ա-րեւելեան և արևմտեան եկեղե-ցիները։ Այս հանդիսաւորու-թեան պահուն, երիցագոյն և բարձրաստիճան եկեղեցականնե-րէն նուիրակութիւն մը, որուն մէջ էր նաեւ Հայ Արքեպիսկո-պոս մը, գալով ծնրադրեցին քահանայապետին առջև և խըն-դրեցին, ընդհանուր եկեղեցւոյ կողմանէ, որ հաճի հրատարա-կել Ս. Աստուածածնի Անա-րատ յղութեան վարդապետու-թիւնը։ Այս ամենամեծ տաճա-ը որ ծայրէ ծայր լեցուած էր

բազմութեամբ, փոքր չշուկ մ'ան-գամ չէր ելլեր այն վսեմ արա-ր ողութեան պահուն, որոշ լսե-լու համար ծերունի Հայրապե-տին ձայնը։ Քահանայապետը ոտքի ելլելով՝ Եկ սուրբ Հոգի եր-գին սկզբնաւորութիւնը տուաւ. հազարաւոր բերաններէ ելած այդ երգը արձագանգ գտնելով տաճարին կամարներուն տակ՝ վսեմ խորհրդաւորութիւն մը կը ներկայացնէր։ Երգէն վերջ կըր-կին խոր լռութիւն մը տիրեց, և Քահանայապետը ոտքի ելլելով՝ կարդաց հետեւեալ վճիռը.

«Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-տոսի և երանելի Առաքելոց Պետրոսի և Պողոսի և մեր հե-ղինակութեամբ, կը յայտարա-ռենք և կը սահմանենք՝ թէ Ս. Կոյսն Մարիամ, իր Յղութեան առաջին վայրկենէն, զերծ մնա-



ցած է սկզբնական մեղքէն, և թէ այս վարդապետութիւնս Աստուծմէ յայտնուած է. եթէ մէկը յանդգնի ուրիշ կերպով մտածել, նզովուած է և բանադրուած և եկեղեցիէն դուրս է»։

Այս վճռին ընթերցման պահուն, քահանայապետը այնչափ յուզուեցաւ, որ ստիպուեցաւ մի քանի անգամ ընդհատել ընթերցումը. ներկայ բազմութենէն շատերն ուրախութեան արտասուքներ թափեցին, տեսնելով երկնաւոր Թագուհւոյն այս մեծ յաղթանակը՝ որ սատանային և անոր արբանեակներուն դէմ կը տանէր։

❧

ԺԹ

Ի՞նչ բանի մէջ է երկնից վայելքը

Գոնտէ գաղղիացի իշխանը, որ իր փառաց գագաթնակէտը հասած ատեն տալ միշտ ջերմեռանդ հաւատացեալ մ'էր, իր մեռնելու վայրկենին քովը գտնուող քահանային դառնալով ըսաւ. «Հայր, կրօնքիս մասին բնաւ տարակոյս չունիմ.... լաւ համոզուած եմ թէ զԱստուած դէմ յանդիման պիտի տեսնենք, երբ մեռնինք»։

Բարեպաշտ մայր մը իր փոքր և միակ որդւոյն մեռնիլը տեսնելով, արտասուօք լի աչքերը երկինք վերցնելով ըսաւ. «Ո՜հ, Աստուած իմ, կը հաւատամ բոլոր սրտովս թէ փոքրիկ Յակոբիկս այժմ զքեզ կը տեսնէ և կը սիրէ»։

Հայրն Փուրսուլ, որ ժամանակին նշանաւոր քարոզիչ մ'էր, 1774 Ապրիլ 4ին մեռաւ ամպիոնին վրայ՝ երբ Աղքայութեան վրայ կը քարոզէր. իր վերջին խօսքերն եղան. «Սիրելիք, ուրեմն երկնից մէջ զԱստուած պիտի տեսնենք յայտնի և դէմ յանդիման»։

Ի

Բարեպաշտ քրիստոնեի մը մահը

Ստոլպերկ դուքսը իր կեանքը միշտ բարեպաշտութեամբ անցուցած էր, և շատ անգամ ալ հաւատքի համար հալածուած և

նեղուած, որովհետև բողոքական Գերմանիան հանդարտ չէր թողուր ուղղափառութեան մէջ մնացած Գերմանիան։ Եւ՝ Ստոլպերկ դուքսի միայն վերջին վայրկենին արտասանած խօսքերը մէջ պիտի բերեմ, որ շատ օրինակելի և սրտաշարժ են։

– Պարոն բժիշկ, ըսէ ինծի թէ ե՞րբ պիտի մեռնիմ, վաղը թէ միւս օրը։

– Տէր դուքս, քու կենդանի հաւատդ և զԱստուած տեսնելու փափաքդ ինծի այնպէս կարծել կու տան՝ թէ կէս գիշերին պիտի չհասնիս։

Դուքսը ուրախութեամբ բռնեց բժշկին ձեռքը և ուժով մը սեղմելով ըսաւ.

– Օրհնեալ ըլլայ Աստուած. շնորհակալութի՛ւն, շնորհակալութիւն, շնորհակալութիւն. բո-

լոր սրտովս քեզի երախտապարտ եմ. օրհնեալ ըլլայ Յիսուս Քրիստոս։ Այս ըսելով՝ գլուխը մէկ կողմ խոնարհեցուց, և քիչ վերջ խաղաղութեամբ մեռաւ։

ԻԱ.

Մեր անմեղութիւնը պահելու մտադիր ըլլանք

Օր մը Ս. Մաւրենտ Ս. Բենեդիկտոսի ճաշ տանելու ատեն մեծ օձ մը գտաւ, և իր քղանցքին մէջ պահելով՝ տարաւ Ս. Բենեդիկտոսի և ըսաւ.

– Հայր, տես թէ ի՞նչ գտած եմ։

Երբ միւս բոլոր կրօնաւորներն ալ հաւաքուեցան, օձը սկսաւ սուլել և խայթել կ'ու-

զէր։ Այն ատեն Ս. Բենեդիկտոս ըսաւ Ս. Մաւրենտին.

– Տղաս, առ այդ, և ուր որ գտար՝ կրկին հոն տար։

Երբ Ս. Մաւրենտ մեկնեցաւ, Ս. Բենեդիկտոս միւս կրօնաւորներուն դառնալով ըսաւ.

– Եղբայրներս, գիտէ՞ք թէ ինչո՛ւ այդ կենդանիս այդչափ ընտանի է այդ տղուն. որովհետեւ՝ իր մկրտութեան անմեղութիւնը դեռ վրան կը պահէ։

Անմեղութիւնդ պահեցէք և մեղաց առիթ մի՛ տաք, և ձեր առջև սատանան անգամ իր ուժը պիտի կորսնցնէ։

❧

ԻԲ

Փափաքիւնք վիանալ Յիսուսի Ս. Հաղորդութեամբ

Սրբուհի Մագդաղինէ Բացեան, դեռ շատ փոքր, «Բարի Աստուծոյ անօթութիւնը կը զգամ» կ'ըսէր, և կ'ուզէր հաղորդուիլ։

Բայց անոր կ'ըսէին. «Դուն դեռ շատ պզտիկ ես, սպասէ»։ Բարեպաշտ մանուկը անձկանօք կը սպասէր, շատ անգամ լալով և արտասուելով։ Իր մայրն ըստէպ կը հաղորդուէր, և այն օրերը Մագդաղինէ մօրը քղանցքէն բռնած եկեղեցի կ'երթար՝ միշտ քովէն քալելով ու կ'ըսէր. «Մայրիկ, գնա՛ բարի Աստուածը ընդունելու, ան՝ զքեզ իր

բոլոր շնորհքներով և բարիքնե-
ւով պիտի լեցնէ. այդ շնորհք-
ները և բարիքները քու մար-
մնոյդ պիտի անցնին, անկէ քու
զգեստներուդ և անկէց ալ ին-
ծի»։

Տուն դառնալէն վերջն ալ,
ամբողջ նոյն օրը բնաւ մօրմէն
չէր բաժնուէր։ Օր մը անոր
ըսաւ. «Ո՜հ, մայրիկ, զիս քու
ծունկերուդ վրայ նստեցուր, և
թող տուր՝ որ գլուխս քու կուրծ-
քիդ վրայ դնեմ, որովհետեւ
Բարի Աստուծոյն ըսելիքներ ու-
նիմ»։

ԻԳ

Աղքատասիրուհեան օրինակ մը

Գիշերօթիկ դպրոցի մը մէջ,
որուն աշակերտուհիները 130ի

կը հասնէին, աղքատները հո-
գալու համար մի քանի մեծ ա-
շակերտուհիներ ընկերութիւն մը
կազմած էին, և իրենց սակաւ
եկամուտը գրեթէ այս նպատա-
կին համար կը ծախսէին։ Ան-
գամ մը ասոնք իրենց քով ալ
դրամ չունէին, և ամսականնե-
րուն հասնելուն շատ ժամանակ
կար, մինչդեռ՝ լսած էին թէ
բազմաթիւ պզտիկներ խեղճու-
թենէ կը նեղուէին...։

Անոնցմէ մէկը ելնելով ըսաւ.
«Օրիորդներ, գաղափար մ'ու-
նեցայ. մենք լաւ կշտացած ենք,
կարելի չէ՞ որ այս երեկոյ զանց
ընենք ընթրելը... մեր աղքատ-
ներուն ղրկելու համար...»։

— Ճիշդ է, լաւ է, ըսին ա-
մէնքը միաբերան։

Առաջարկութիւնը ընդու-
նուած էր. տասն և հինգ տա-

ռեկան հասակին և գիշերօթիկ դպրոցի մէջ մարդ շատ ախորժակ կ'ունենայ... բայց ինչ հոգ. անմիջապէս մեծաւորուհիին վազեցին հրաման խնդրելու, որ իրենց առաջարկին հաւանութիւն տուաւ։

Այս բանը մեծ զուարթութեան պատճառ եղաւ. փոքրիկներն ալ ուզեցին և մասնակցեցան, աղքատ պզտիկներուն տալով իրենց հացը։

Երկրորդ օրը այս սիրուն աշակերտուհիներէն ոչ մէկը տըկարացաւ. շատ մայրեր զիրենք օրհնեցին և հրեշտակները զիրենք առաջուընէ աւելի սիրեցին։

ԻԴ

Յիսուսի նմանիլ ջանանք

Փոքրիկ աղջիկ մը գլխու սաստիկ ցաւով կը տառապէր. մայրը լաթի կտոր մը քացախին մէջ թրջելով՝ կ'ուզէր ճակատը դնել. երբ անոր ճակտին փակցնելու համար կը ծռէր, աղջիկը ձեռքը դուրս հանեց, և լաթին մէկ ծայրէն բռնելով բերանը տարաւ ու քիչ մը քացախ կլլեց։

– Ինչո՞ւ այդպէս կ'ընես, ըսաւ մայրը նեղուելով։

– Որովհետև ծարաւ եմ, ըսաւ պզտիկը, ես ալ կ'ուզեմ Յիսուսի պէս ընել։

ԻԵ

Կրօնքի գիտուբեան օգտակարութիւնը

10 տարեկան փոքրիկ տղու մը հայրը սաստիկ հիւանդ էր։ Այս մարդը բնաւ եկեղեցւոյ երես տեսած չէր՝ և ասոր համար ոչ ոք կը համարձակէր իրեն առաջարկել՝ որ սուրբ խորհուրդներն ընդունի։

– Հայր, ըսաւ մանուկը, երբ օր մը բոլորովին առանձին էին. ես քրիստոնէական վարդապետութենէն սորված եմ՝ թէ անոնք որ առանց խոստովանելու կը մեռնին, չեն կրնար երկինք երթալ...։ Հիմա կը տեսնեմ որ դուն շատ ծանր հիւանդ ես. ո՜հ, եթէ այս կերպով մեռնիս՝ զքեզ

բարի Աստուծոյ քով պիտի չտես-
նեմ. ուրեմն Հայրիկ, խոստովա-
նէ, խոստովանէ...։ Եւ չկրնա-
լով զսպել ինքզինք՝ սկսաւ լալ։

— Այո՛, որդեակ իմ, ըսաւ
հայրը, սաստիկ զգածուած. մի՛
լար, մի՛ լար, կը խոստովանիմ.
գնա՛ շուտով կանչէ ժողովրդա-
պետը։

Հիւանդը քիչ վերջ խոստո-
վանեցաւ կատարեալ զղջումով,
և մեռնելէն առաջ գրկելով իր
սիրելի զաւակն՝ ըսաւ.

— Որդեակ իմ, առանց քեզի
ինչպէս Աստուծոյ՝ գերագոյն
դատաւորին առջեւ պիտի ելլէի.
շատ շնորհակալ եմ քեզի, սի-
րելի փոքրիկս։

ՅԱՆԿ

	Էջ
Նախաբան	5
Աղօթք առաւօտեան	11
Աղօթք երեկոյեան	28
Պատրաստութիւն խոստովանու-թեան	51
Խոստովանանքէն վերջը . . .	75
Պատրաստութիւն ամենասուրբ Հաղորդութեան	81
Ամենասուրբ Հաղորդութիւն ընդունելէն վերջը	89
Աստուածածնի սուրբ Վարդապանը	102
— Եօթն վիրաց վարդապանը. .	109

Այլ եւ այլ աղօթքներ

Առ Ս. Աստուածածին . . .	112
Առ Պահապան Հրեշտակն . .	180
Առ պաշտպան Սուրբն . . .	181

Էջ
Առ Ս. Յովսէփ 183
Առ ամենայն Սուրբս. 185
«Աշխարհ ամենայն». 188
«Ողորմեա ինձ Աստուած». . . 193
Աղօթք ննջեցելոց. 197
— Քրիստոսի ծննդեան պատրաստութեան 202
Արեւազալի երգեր. 209
Երգ խաղաղական ժամերգութեան 215
Քրիստոնէի մը հարկաւոր գիտնալիք բաները. 225
Հոգեւոր պատմութիւններ . . 243

ազգային գրադարան
Библиотека
ՀԱՅ.ՍՍՀ
Մ. Մեսրոպի անվան

162

~~168~~ 167

0026183

<< Ազգային գրադարան

NL0026183

2013

12001